



Հարգելի՝ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

Դայոց ցեղաստանություն. դիվանագիտական վավերագրեր

**DOCUMENTI DELL'ARCHIVIO STORICO DIPLOMATICO
DEL MINISTERO DEGLI AFFARI ESTERI D'ITALIA
SULLA QUESTIONE ARMENA
NEGLI ANNI 1913-1923**

VOLUME 1 1913-1917

Raccolta del materiale, traduzione e prefazione a cura di
Aramayis Baloyan

**ԻՏԱԼԻԱՅԻ ԱՐՏԱԶԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԽԻԿՎԻ
ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ
1913-1923թթ.**

ՀԱՏՈՐ Ա 1913-1917

Նյութը հավաեց, կազմեց, թարգմանեց,
առաջարանը գրեց և հրատարակության դատաստեղ՝
Արամայիս Բալոյանը

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԻՏԱԼԻԱՆ

Մենագործումը եռաշխավորվել է հրատարակման
Դայոց ցեղասպանության թանգարան-ինսիտուտի
գիտական խորհրդի կողմից

Փաստաթուրերի տղագործումը թույլատրված է
Իտալիայի արտաքին գործերի նախարարության
դատական դիվանագիտական արխիվի
սնօղնության կողմից

La pubblicazione del volume
è autorizzata
dal Consiglio scientifico
del Museo-Istituto
del Genocidio armeno

La pubblicazione dei documenti
è autorizzata
dall'Archivio storico diplomatico
del Ministero degli affari esteri
d'Italia

ԴՏԴ 941 (479.25): 327
ԳՄԴ 63.3 (27)+66.4
Բ 209

Բայրյան Արամայիս
Բ 209 Իտալիայի Արտաքին գործերի նախարարության դատական դիվանագիտական
արխիվի վայերազեր Դայկական հարցի մասին 1913-1923թթ. Դատու Ա. - Եր.: Դայոց
ցեղասպանության թանգարան-ինսիտուտ, 2008. - 252 էջ:

Խմբագիրներ. Է. Դամերյան, Գ. Ղենոյան, Ս. Մանուկյան
Շարի հայեցակագ. Գ. Ղենոյան, Է. Դամերյան, Գ. Մամուկյան
գրաֆիկական նախագծում. Գ. Մամուկյան
էջադրում. Ա. Դատության

ԳՄԴ 63.3 (27)+66.4

ISBN 978-99941-963-6-4

© Դայոց ցեղասպանության թանգարան-ինսիտուտ. հայերեն թարգմանություն, 2008

© Արամայիս Բայրյան. հայերեն թարգմանություն, 2008

Մենագործում. Տիգրան Մեծ հրատարակչություն ՍՊԸ

Հայկական հարցում եվրոպական սերությունների բաղադրականության գիտական ուսումնասիրությունը եղել և մնում է բաղադրական հայագիտության կարևորագույն ոլորտներից մեկը: Վերջին տասնամյակների ընթացքում զգալի աշխատանք է աւագանականացնելու այս ուղղությամբ՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ տարբեր երկրներում: Տղագրվել են բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ և մենագրություններ, որոնք նվիրված են եղել 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին Հայկական հարցի վերաբերյալ սերությունների բաղադրականությանը: Մեծ արժեք են ներկայացնում նաև եվրոպական սերությունների դասունական փաստաթուրերի և դիվանագիտական նամակագրության ժողովածուները, որոնք կարևոր աղբյուր են հանդիսանում ինչպես այդ սերությունների բաղադրականության, այնպես էլ՝ 1894-96, 1909, 1915-16 թթ. հայկական կուսորածների և սեղանական գործադրության, ետպատճեազմական միջազգային բնարկումների, նաև՝ 1918-20 թթ. Հայաստանի անկախության եռանի լուսանման և ուսումնասիրման համար:

Այս իմաստով մեծ հետարկություն է ներկայացնում եվրոպական սերություններից մեջ՝ Իտալիայի բաղադրականության ուսումնասիրությունը: Հայկական հարցն այդ դետուրյան արտաքին բաղադրականության ոլորտ է մտել 1877-78 թթ. ռուսական դատարանից և 1878 թ. Սան-Ստեֆանոյի դայանագրի կնումից հետո, ուր, ինչպես հայտնի է, առաջին անգամ Հայկական հարցն իր արտացոլումն է գտել որդես միջազգային դիվանագիտության հարց: Պատերազմում Օսմանյան կայսրության դատարությունն այդ կայսրության բայցայման սրբանալիք է ստեղծում, որի արդյունքում Իտալիան կարող էր գրկել

Միջնարքական ծովի տրակայինս իր առավելություններից, եթե ենություններից որևէ մեկն իր ազդեցությունն ուժեղացներ կամ հաստաեր բավկայան թերակղզում: Այդ իսկ դաշտառով Իտալիան դեմ էր արտահայտվում Սան Ստեֆանոյի դայմանագրին, սակայն միաժամանակ գերծ էր մնան հակառական խմբավորման մեջ մնանելուց:

1878 թ. Բեռլինի համաժողովի նախօրյակին Եվրոպական առաջին մայրաքաղաքը, որ այցելել էր Սկրիչ Խոհմանի գլխավորած հայ ազգային դասվիրակությունը, Հռոմն էր: Ինչուս հայտնի է՝ 1878 թ. մարտի 27-ին դասվիրակությանն ընդունել էր Իտալիայի արտահին նարաքական գերատեսչության դեկավար՝ արտօնախարար Լուիջի Կորտին, որը, ինչուս դարձվել էր հանդիդան ժամանակ, բավականին աղոտ դասվեցում ուներ հայերի դահանջափրության մավրն: Համատասախան դարզաքանումներ սանալուց և ներկայացված փաստարդերին ծանոթանալուց հետո Կորտին ընդհանուր արտահայտություններով խոսացել էր դաշտանել հայերի դահանջները: Իսկ երբ Բեռլինի համաժողովի երկրորդ նիստում որոշվեց, որ առանց ենությունների որևէ մեկի լիազոր ներկայացուցի միջնորդության բնաւրկման չի դրվի որևէ դիմում կամ գեկուցագիր, հայկական դասվիրակությունը հունիսի 25-ին իտալական դասվիրակության դեկավար Կորտին հանձնեց իր խնդրագիրը, Հայաստանի ինքնավարության ծրագիրը և վիճակագրական սլյալներ՝ Թուրքիայի հայկական նահանգների մասին: Սակայն այդ փաստարդերն ուսադրության չարժանացան: Տերություններից և ոչ մեկը, այդ բվում Իտալիան, չղնդեց, որոնսկի Հայկական հարցը նոցվի համաժողովի որակաց: Այդուհանդեռ հետազոտմ իտալական կառավարությունը մասնակցեց Արևմյան Հայաստանի բարենորդումների իրականացումը դահանջող տերությունների համատեղ գործողություններին: Մասնակի առաջարկությունում Իտալիայի դեսպանը սուրագեց 1880 թ. հունիսի 2-ին և սեպտեմբերի 11-ին մեծ տերությունների կողմից սուլքանական կառավարությանը ներկայացված հայտագրերը:

1890-ական թթ. կեսերին, Հայկական հարցի սրման դահին, իտալական կառավարությունը սուլքանից դահանջեց իրազոր-ծել հայկական բարենորդումների ծրագիրը, աղահովել Օսմանյան կայսրության բիւստոնյաների կյանքի անվանգությունը

և Եվրոպական մյուս ենությունների հետ համատեղ հայեր ձեռնարկեց հայերի նոր ջարդեր բոլոր չաղաքներում: Հիւասականին, թթ. 1896 թ. նոյեմբերին Արդու Համիդ 2-րդի ընդունեց իտալական դեսպանորդ Պանսային: Վերջինս համառորեն փորձում էր համոզել սուլքանին, որ կայսրությունում կարգուկանոնը վերականգնելու միակ միջոցը հայկական բարենորդումներին ընթաց տալն է: Հավելենին, թթ. 1895-96 թթ. Իտալիայի կառավարությունը բանից իր դեսպանին հորդուել է համատեղ հայերի դիմել Եվրոպական մյուս երկների հետ Հայկական հարցում:

Հետագայում 1912-14 թթ., հայկական բարենորդումների հարցի բննարկման ժամանակ Իտալիան՝ դաշտանելով իր դաշնակիցներին՝ Գերմանիային և Ավստր-Հունգարիային (ինչուս հայտնի է՝ 1882 թ. ից Իտալիան հարել է ավստր-գերմանական դաշնին), հիմնականում հանդիս էր զախիս բարենորդումների ոռուսական նախազիր դեմ, մերժելով՝ վեց վիլայեթներից հայկական միասնական մարզ ստեղծելու գաղափարը և դրեւով՝ բննարկման հիմքում դմել բուրգական նախազիրը:

Հայտնի է, որ Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպանությունը և կայսրության արևելյան նահանգների բաղանքներում հավասարմագրված իտալական հյուլատությունները կանոնավոր կերպով իրենց կառավարությանը ենթակացրել են հայ բնակչության կոռուրածների ու տեղահանության մասին: Այդուհանդեռ Իտալիայի կառավարությունը, Հայկական հարցում մշակույթը որդեգրելով զգուշակությունը դիրքուում, լուրջ հայեր չձեռնարկեց իր բողոքն արտահայտելու երիտրուսական կառավարության հանցավոր բաղանքականության դեմ:

Ինչուս հայտնի է՝ 1915 թ. մայիսին Իտալիան դատեազմ հայաստանց Գերմանիային, և Անտանալի երկրները Իտալիայի հետ կմիջեցին համաձայնագիր, որ հասվի էր առնված իտալական դահանջափրությունը Թուրքիայի որոշ սարածների նկատմամբ: Արդյունքում 1916 թ. Սայխ-Թիկոյի համաձայնագրում հայտնվեց «կանաչ» գոտին (Հարավ-Արևմյան Անատոլիա) և «C» գոտին (Արևմյան և Կենտրոնական Անատոլիայի մի մասը), որոնք ձանաչվում էին Իտալիայի ազդեցության ոլորտ:

Հայտնի է նաև, թթ. 1919 թ. կետրւարին Իտալիայի վաշչամետ Վիտտորիո Օղանդրն համաձայնեց Մեծ Բրիտանիայի առաջակարությանը՝ «օրինականություն և կարգուկանոն հաստաելու հա-

մար» իտալական 2 դիվիզիա ուղարկել Հայաստան: Բայց նրա կառավարության անկումից հետո նոր վարչադիր Ֆրանչեսկո Նիսսին հրաժարվեց այդ գաղափարից: Հետագայում, 1920 թ. Սան Ռեմոյի կոնֆերանսում Նիսսին հանդես եկավ Թուրքիայի հանդեմ «ավելի մեղմ» վերաբերմունի օգտին և դեմ արտահայտվեց Հայաստանի Հանրապետության սարածը Թուրքիայի հաշվին ընդարձակելուն և դեռի Սև ծով նրան ելք տրամադրելուն: Իտալիան ստորագրեց Սևի դաշնագիրը, սակայն վարչադիրը սկզբից ներ հայտարարեց, որ այն իրազործելու համար իտալական կառավարությունը զինվոր չի տրամադրելու: Նշեն նաև, որ 1918-20 թթ. Իտալիայի արտզործնախարարի լիազոր ներկայացուցիչը Թիֆլիսում և Երևանում համակարգում էր Հայաստանի Հանրապետության ու արևմտահայ փախստականներին ցուցաբերվող իտալական օգնության աշխատանքները:

Վերոնչյալ իրողությունները լոկ դրվագներ են Հայկական հարցում Իտալիայի բաղականության, որը դեռևս լուս և մանրակից ուսումնասիրության ու լուսաբանման կարիք ունի: Այս ինմասով Իտալիայում ՀՀ դեսպանության միջնորդությամբ և Իտալիայի արտաքին գործերի նախարարության թույլտվությամբ Արամայիս Բալյոյանի կողմից Իտալիայի ԱԳՆ դասմական դիվանագիտական արխիվում կատարած աշխատանքի արյունում կյանքի կոչված այս ժողովածուն չափազանց մեծ արժեք ունի: Արամայիս Բալյոյանը տարիների ջանադիր հետևողականությամբ հիշյալ արխիվից հայտնաբերել, դասակարգել և քարզմանել է 1913-23 թթ. ցջանի Հայաստանի և Հայկական հարցին վերաբերող դիվանագիտական կարևոր վավերագրեր, որոնք, փասորեն, առաջին անգամ են դրվում գիտական, մասնավորադիմ, ցեղաստանագիտական ցջանառության մեջ: Ժողովածուի առաջին հատորում գետեղված են 1913-17 թթ. վերաբերող 225, ինչդեռ նաև, որդես հավելված, Արամայիս կոտորածին առնչվող 20 վավերագրեր, որոնք այժմեական բաղադրական կարևոր նշանակություն ունեն:

Արման Կիրակոսյան

Դասմական գիտությունների դոկտոր

ԱՌԱՋԱԲԱՆ

Ինչդեռ հայտնի է՝ առաջին համաշխարհային դատերազմի նախօրյակին եվրոպական երրորդունները դարձյալ իրենց արագին բաղադրականության մաս դարձրին Օսմանյան կայսության հայաբնակ ցջաններում բարեփոխումներ անցկացնելու անհրաժեշտության հարցը: Հայտնի է նաև, որ Ռուսաստանը ցանկանում է միայնակ գրադպել այս խնդրով՝ առանց որևէ եվրոպական երրորյան ներգրավվածության, սակայն, օսմանյան կառավարությունը տեղի տալով ռուսական ճնշումներին և խոստանալով այդ ուղղությամբ բայցեր ձեռնարկել, այսուհետեւ բարեփոխումների ծրագիր համատեղ մշակելու և իրականացնելու խնդրանքով դիմեց Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին հետևյալ նկատառումներով: Զնայած երկրն ամբողջությամբ գտնվում է եվրոպական երկրների ազգեցուրյան տակ, այսուհետեւ բուրգական կառավարությունը փորձում էր հայկական ցջաններում բարեփոխումներ անցկացնելու հարցում որևէ երկրին մենաւորի չսալ, բաց գիտակցելով, որ երբ մի խնի գերեւություն են միաժամանակ գրադպում այդ հարցով, առաջ խնդրի լուծման ընթացքում այդ երկրների միջև սեփական շահերի բախումն այն ասիհճանի է հասնում, որ մեծագույն մասամբ ձախողվում է կրնկելու բայցերի իրագործումը, հանգամանի, որը ավելի բան ցանկալի է Թուրքիայի համար՝ հայկական բարեփոխումների դարագայում: Ստեղծված իրավիճակում, բնական է՝ Ռուսաստանն այլև չէր կարող միայնակ բանակցել Թուրքիայի հետ և հարաբերությունները եվրոպական երկրների հետ չսրելու համար դիմեց Փարիզի, Լոնդոնի, Վիեննայի, Բեռլինի և Հռոմի իր դեսպաններին, որդեսզի նրան դարձեն երրորյունների դիրքուումն ու հետաքրքրությունը բարեփոխումների հարցում:

Ուսուաստանի նախաձեռնությամբ 1912թ. վեցից սկսված այս գործնքազր բավականին հետաքրից զարգացումներ ունեցավ՝ ամբողջությամբ ի ցոյց դնելով Օսմանյան կայսրության հետ առնչվող Եվրոպական եւրոպյունիների բաղաբականությունը։ Զևսպորված երկու խմբավորումները՝ Եոյակ համաձայնությունը և Եոյակ դաշինքը (որոնցից առաջինի կազմի մեջ ինչողն հայտնի է մտնում էին Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան, իսկ երկրորդի մեջ՝ Գերմանիան, Ավստր-Հունգարիան և Իտալիան), ունենալով ընդհանուր շահեր, այդուհանդեռձ, նրանցից յուրաքանչյուրն իր սեփական երկի շահերն եւ հետաղնդում։ Այդ շահերն առավել ընդգծված էին ի հայտ զայխ հենց այն ժամանակաշրջանում, եթե որք Արևելքում ընթանում էր այդ եւրոպյունիների հետաքրիցումների և ազդեցությունների վերածումը։

Միջազգային հարաբերությունների ահա այստիսի մբնուրում էին ընթանում հայկական բարեփոխումների ծրագրի մշակման ռուզ բանակցությունները, որոնք, ինչողն հայտնի է, ավարտվեցին 1914թ. փետրվարի 8-ի դայմանագրով, որով օսմանյան կառավարությունը դարձավորվում էր Եվրոպական հսկողության ներփակումունքում իրականցնել կայսրության հայարձնակ ցանցներում։

Վսուհանդերձ, սկսված համաեվրոպական հակամացությունը ի չի դաժենց բարեփոխումների ծրագրի իրականացումը, և երիքուրական կառավարությունը, օգտվելով դաշնագովի ընձեռած հնարավորություններից, յուրովի լուծեց Հայկական հարցը՝ ընացնացելով և տեղահանելով Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչությանը։

Կյա խնդիրը բավական ուսումնասիրված է, գրվել են բազմաթիվ աշխատություններ, իրադարսկվել և հայերեն են բարձրանվել Հայկական հարցին առնչվող Եվրոպական մի շարք եւրեմերի՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրիայի և Ռուսաստանի դիվանագիտական փաստաթղթերը։ Իտալիան ժամանակի միակ գերտերությունն է, որի արխիվներում դադանիվոր Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանն առջպող փաստաթղթերը մինչ վերջին ժամանակները, որու բացառություններով, համարյա անհայտ էին հայ հանրությանը։

1990-ականների վեցին Ֆլորենցիայում կազմվեց մի հանձնաժողով, որը սկսեց ուսումնասիրել և հրաժարակել Հայաստ-

ան առնչվող իտալական դիվանագիտության փաստաթղթերը։ Անգմահատելի այս աշխատանքի արդյունքում իտալերենով արդեն ընթեցողին են հանձնվել 1891-1899 թվականների արխիվային նյութերը, որոնք նոր լույս են սփռում արդրութամբյան վաշշակարգի կողմից հայ ժողովրդի հանդեղ վարվող բաղաբականության, այդ խնդրում Եվրոպական եւրոպյունիների և, մասնավորապես, Իտալիայի կառավարության դիրքուում վրա։ Հիշյալ փաստաթղթերն ամփոփված են հինգ հատուներում, որոնց կազմող-հեղինակներն են Սարցին Ռուսոն, Լառուա Լումինարին, Լունցո Սեֆին, Սալվատոր Մուգիալեն և Մարկո Բայզը։

1913-1923 թվականներն ընդգրկող ժամանակահատվածը Հայկական հարցի դատմության կարևորագույն ցանցներից է, անգի այն 1912թ. վեցից միջազգային հարաբերություններում նոր բափ սանալով և 1923թ. Լոզանի դայմանագրով վերջնականապես բաղվելով, այսօր այդ խնդրի ուսումնասիրությամբ գրադպող մասնագետներին բազմաթիվ հարցեր է առաջադրել, որոնք տակավին ուսումնասիրության դահանջ ունեն։

Խնդրո առարկա մի շարք հարցերի դատախանները կարող են սալ նաև Իտալիայի արտաքին բաղաբականության այս ժամանակաշրջանի դիվանագիտական փաստաթղթերը։ Ահա՝ այդ փաստաթղթերի ուսումնասիրմանն ի նյաս՝ 2005 թ. սկզբին, Իտալիայում ՀՀ դեսպանատան միջնորդությամբ, մեզ իրավուն ընձեռնվեց ուսումնասիրություններ սկսել Իտալիայի արտաքին գործերի նախարարության դատմական դիվանագիտական արխիվում։

Ուսումնասիրությունները ցոյց սկեցին, որ Իտալիայի արտաքին գործերի նախարարության (Ֆառնեզինյան դյալ) դիվանագիտական արխիվի դահոցներում հենց Հայաստան (Armenia) անվան տակ են դահողանվում հայ ժողովրդին առնչվող փաստաթղթերը։ Այս հանգամանքը չափազանց հետաքրական է հատկապես այն տեսանկյունից, որ նույնիսկ հայկական դետության բացակայության դայմաններում, Օսմանյան կայսրության հայարձնակ ցանցներն ընկալելի են եղել որդես Հայաստան։ Այդ փաստաթղթերը դայմանականուրեն թվագրված են 60 համարվ և գետեղված են արխիվային տարեր ֆոնդերում։ Դրանք են։

1. Քաղաքական շարֆ P (Serie Politica P) 1891-1916:

Արխիվային այս ֆոնդում Հայաստան (Armenia) անկան տակ գտնվում է ուր թղթապահակ. թիվ 325 (1891-1895 թթ.), թիվ 326 (1894-1896 թթ.), թիվ 327 (1895 թ.), թիվ 328 (1895 թ.), թիվ 329 (1895 թ.), թիվ 330 (1896 թ.), թիվ 331 (1896-1906 թթ.) և թիվ 332 (1907-1914 թթ.):

Փաստաթերթի այս խումբը հիմնականում առնչվում է աբդուլ-համիլյան վարչակարգի ժամանակաշրջանին և սրանց մի մասն, ինչողևս նույնական արդեն տղագրվել է Ֆլորենցիայի հանձնաժողովի կողմից: «Քաղաքական շարֆ» այս փաստաթերթի մի գգալի մասը՝ 6 հատորով տղագրվել է նաև Իտալիայի արտգործնախարարության կողմից՝ բացառապես ներփակված օգտագործման համար, որը նույնողևս գտնվում է դիվանագիտական այս արխիվում «Տղագրված դիվանագիտական փաստաթերթ» LXVI համարի տակ: Ըստ մեր համեմատությունների, այդ հրատարկության մեջ բերված փաստաթերթը ճշգրտությամբ համապատասխանում են բնագրերին:

Ակներև է, որ 1895-1896 թվականներից նկատվում է հայկական թեմայով փաստաթերթ կտրուկ նվազում: Այս երևոյթի դարձաբանումը տրվում է հենց այդ տղանի դիվանագիտական փաստաթերթում և բացատրվում է Հայկական հարցի վրա Եվրոպայի ուսադրությունը հրավիրելով նորագույն հայ բարեկանության որոշ տղանակների կողմից իրականացված մի շարֆ գործողությունների (մասնավորապես Բաքր Ալիի, Գում Գալիոյի և Բանկ Օսմանի) հանգամանքով:

Որոշակի ակտիվություն սկսում է նկատվել 1913-14 թվականների վերը հիւատակված բարեփոխումների ծրագրի բննակումների ընթացքում:

Հայտնի է, որ Եռյակ դաշինի կազմի մեջ մտնող երեք ժերմակներից երկուոր՝ Գերմանիան և Ավստր-Հունգարիան, ընդգծված թրամետ դիրքորոշում ունեին, որը բացատրվում է ոչ միայն Օսմանյան կայսրությունում նրանց ունեցած շահերով, այլև՝ Եռյակ համաձայնությանը և, հասկաղես, Ռուսաստանին հակարգվելու հանգամանքով:

Եռյակ դաշինի կազմի մեջ մտնող Իտալիան, որը նոր է ավարտել դատերազմը Թուրքիայի հետ, ելնելով դաշնակցային դար-

սակորություններից, բավական չեղու դիրք էր գրավել հայկական բարեփոխումների գործընթացում՝ իր գործողություններում որդեգրելով Գերմանիայի և Ավստր-Հունգարիայի հետ փոխհամաձայնեցված հանդես գալու մարտավարությունը:

Այդ տղանի նյութերը հիմնականում գտնվում են արխիվային այս ֆոնդի թիվ 332 թղթադրամակում:

2. Քաղաքական արխիվ - ընդհանուր և կառավարական (Archivio Politico-ordinario e di gabinetto) 1915-1918:

Արխիվային այս ֆոնդում Հայաստանին առնչվող փաստաթերթը գտնվում են թիվ 44 թղթապահում և ընդգրկում են 1915-1918 թվականների դեպքերը:

Թղթադրամական այդքան էլ հարուս չէ, բայց և այնողևս արժեքավոր նյութեր է դարունակում, որոնք վկայում են Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի դեմ իրականացրած ցեղասպանության նախն: Զնայած նրան, որ թղթադրամական ընդգրկում է 1915-1918 թվականներին վերաբերող փաստաթերթը, սակայն 1916 և 1917 թվականների մասին գրեթե ոչ մի փաստաթություն, իսկ 1918 թվականի նյութերը հիմնականում վերաբերում են Փարիզում գտնվող Պողոս Նորարար Փաւայի գլխավորած ազգային դատավիրակության գործունեությանը: Փաստաթերթի սակավությունն արխիվային այս ֆոնդում բացատրվում է այն հանգամանքով, որ 1915թ. ամռանն Իտալիան, մննելով դատերազմի մեջ, դուրս բերեց իր դեսպանատունը Կոստանդնուպոլիսից՝ ԱՄՆ դեսպանատուն դահելով դիվանագիտական ընդհամենը մեկ ներկայացուցիչ, որը հիմնականում դեմք է գրադեմք Օսմանյան կայսրությունում բնակվող իտալահայտականների դատավանության խնդիրներով: Դեմք է հաւաքի առնել նաև այն հանգամանքը, որ դատերազմի ընթացքում թուրքական գործունեությունն այնքան խստացված էր, որ, նույնիսկ, ստուգվում էր դիվանագիտական փոստը և հաճախ դրանք տեղ չէին հասնում: Ի դեմք՝ Իտալիայի արտաքին գործերի նախարարության դատմական դիվանագիտական արխիվի դիվանագիտական ներկայացուցչությունների արխիվների վերաբերյալ ֆոնդերում կան վկայություններ, որ դատերազմի ընթացքում Օսմանյան կայսրության տարածում գտնվող հյուսդառնության ներկայացուցչությունների փակման և գույքի տեղափոխման ընթացքում դրանց արխիվները հաճախ ոչնչացվել են:

Այսուհանդեմ, չնայած այս ցցանի՝ խնդրտ առարկա փաստաբերի սակավությանը, դրանց մեջ արդեն նկատվում է հայ ժողովրդի հանդեպ Իտալիայի դիրքությունները: Խօնակ հարաբերություններն իր երեմնի դաշնակիցների հետ և դատերազմի մեջ մասնակ Եռյակ համաձայնության երկրների կողմին, իտալական կառավարական ցանցակների արձագանքներն առավել ակտիվ են: Դրանից առավել համակրանքնով են խոսում հայ ժողովրդի մասին և իրենց անկեղծ վետակությունն ու զայրությունն ան հայտնում հայկական կոռուածների առնչությամբ:

3.Քաղաքական գործեր (Affari politici) 1919-1930:

Այսին Հայաստանին առնչվող երկու քրապամակներ կամ, որոնք գտնվում են 809 և 810 համարների տակ: Urusnighg առաջնա ընդգրկում է 1919-1922 իսկ երկորդը՝ 1922-1930 թվականների իրադարձությունները:

Փաստաբերը վերաբերում են բաղաքական անցուղաձին, հայ որենի խնդիրներին, Իտալիայում գործող հայամետ կոմիտեների գործունեությանը, հայ փախստականներին Հայաստան վերադանելու Իտալիայի աջակցությանը, նաև՝ որու թուներ են դարձնակում քուրտի կողմից հայերի ունեցվածի զավթման մասին:

4.Խաղաղության կոնֆերանսներ (Conferenze della pace) 1919-1923:

Այս ֆոնդում պահպանվող նյութերի մեջ Հայկական հարցին վերաբերի փաստաբերը գտնվում են 42, 47, 53, 54, 115 և 216 համարների թրապամակներում, որոնք չափազանց կարևոր են, համապես այն առումով, որ դրան առնչվում են Հայկական հարցի միջազգային հնարկումների վերջին շրջանին:

Վերջին երկու՝ «Քաղաքական գործեր» և «Խաղաղության կոնֆերանսներ» ֆոնդերի՝ Հայոց ցեղասպանությանն ու Հայկական հարցին առնչվող փաստաբերն ընդգրկված են ժողովածուի առաջիկայում իրատակելի երկրորդ հասորում:

Այս չորս հիմնական արխիվային ֆոնդերից բացի, Հայկական հարցին առնչվող նյութեր կան նաև Իտալիայի՝ Լոնդոնի, Փարիզի, Պետերբուրգի, Բեռլինի, Վիեննայի, Կուսանդմուլդուի դեսպանահների արխիվային նյութերում և արխիվային տարեր ֆոնդերում գտնվող՝ Թուրքիային առնչվող փաստաբերներում:

Թուրքիային առնչվող փաստաբերների մի գգալի մասը՝ 25 հասորով ևս տղագրվել է Իտալիայի արտգործնախարարության կողմից, դարձյալ ներփակ օգտագործման համար և գտնվում է «Տղագրված դիվանագիտական փաստաբերների» XVI համարի տակ:

Կատարված ուսումնասիրության ընթացքում դարձվեց, որ մի շարք փաստաբերների կրթության մասնակ գտնվում են արխիվային տարեր ֆոնդերի թղթաղանակներում: Դա մեզ հնարավորություն ստեղծ մանրակրկիս կերպով ուսումնասիրել և համեմատել դրանք միմյանց հետ և այստեղ ներկայացնել փաստաբերների առավել ամբողջական և ճշգրիտ օրինակները:

Ժողովածուի ներկա առաջին հասորում տեղ է գտնվում 1913-1917 թվականների իրադարձություններին առնչվող 225 փաստաբությունը: Ժողովածուի երկրորդ հասորում գետեղվելու են 1918-1923 թվականների իրադարձություններին վերաբերող նյութերը:

Ներկայցվող փաստաբերներն ամբողջությամբ հանրությանն են ներկայացվում առաջին անգամ:

Եվ չնայած ներկա ժողովածուի ամբողջական երկիատոյակն ընդգրկում է 1913-1923 թվականների փաստաբերները, այսուհետեւ նորակահարմար գտնվում այս հասորի հավելվածում ի նոյաս 1908-1909թթ. Կիլիկիայի հայկական կոռուածների ուսումնասիրման, գետեղել նաև այդ իրադարձություններին առնչվող 20 փաստաբությունը, որոնք նոյնպես ցցանառության մեջ են դրվում առաջին անգամ:

Սույն ուսումնասիրության իրագործումը հնարավոր դարձնելու համար մեր խորին ընորհակալությունն ենք հայտնում Երևանի Մահսուդի անվան Մատենադարանի սնօրինությանը, Իտալիայում ՀՀ նախկին դեսպաններ՝ դարտն Գազիկ Բաղդասարյանին և դարտն Ռուբեն Շուկարյանին, Իտալիայի արտաքին գործերի նախարարության դաշնական դիվանագիտական արխիվի ողջ անձնակազմին և բոլոր նրանց, ովքեր իրենց աջակցությունն են ցուցաբերել մեր այս ձեռնարկմանը:

Հատուկ ընորհակալություն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ Ցեղասպանության քանագարան - ինսիստուտի սնօրինությանը՝ ժողովածուի խմբագրման և իրատական գործը սահմանադրության:

Արամայիս Բալոյան

3
1

Կուսանդմուղը լուսում Խալիայի դեսպան Գարրոնին՝
Խալիայի առաքին գործերի նախարար Սան Շովիանոյին
Կուսանդուպոյին, 25 հունվարի 1913թ.
Հեռագիր
թիվ. 406/103

Պարոն նախարար,

Մի քանի օր առաջ ընդունեցի Հայ առաքելական եկեղեցու ղատիարքաւոնի երկու ներկայացուցիչների՝ հայ աշխարհիկ խորհրդի նախագահ ղարոն Ստեփան Կարայանին և նույն խորհրդի անդամ դրկուր Թորգոմյանին, որոնք եկել էին ինձ բնակվող հայ ժողովրդի վիճակը:

Այս ղարոններն ինձ ներկայացրին, թե որքան ժամու են իրենց կրոնակիցների [կենսական] ղայլանները: Իրենց գոյուրյանը սղանացող վասնից վախից նաևն սիրոված չեն հեռանում բնակուրյան կենտրոններից: Ուստի չեն կարողանում նաևն ազգեր զյուղանեսական աշխատանքներին և աղբում են ծայր աղբառության մեջ, որն օր-օրի ավելի է սրբու:

Պատրիարքարանը, տեսնելով մուսուլման բնակչության գրգռվածությունը, քայլումներից խոսափելու համար կոչ է արել հայերին դիմանալ ամեն տեսակ անարդարություններին: Զնայած դրամ՝ հաստավում են Անատոլիայում ամեն շաբաթ 6 կամ 7 քիստոնյանների սղանության մասին լուսերը, որոնք մնում են անդամին: Անդենքի նման ընթացքը չի կարող ձգվել այսպես անորոշ, քանի հայ ժողովուրդը կենսական անհրաժեշտությունից ելնելով սիրոված կյանի հեռանալ բնակեցված կենտրոններից, սակայն դրանով ավելի կիեցածնի ոճագործների գործը: Սակայն յուրաքանչյուր ժողովրդի համբերությունը սահման ունի, և հնարավոր է, որ հայ համայնքը չկարողանա անվերջ լրել և գլխիկոր մնալ բոլոր այն անարդարությունների առջև, որի գործ է դաձել:

Մրանք այն ղաճառներն են, եթե դրանց, իհարկե, չավելանան այլ ղաճառներ, որոնք Անատոլիայում ուսուվ կիանգեցնեն մեծ անկարգությունների: Անատոլիայի բնակչությունը գրեթե ամբողջությամբ զինված է, և նրանք դաշյալ կը մրուսանան այն տաճանքների և տարածքային այն զգալի կորուսների ղաճառով, որոնք իրականացվել են Կայսրության կողմից այս ղատերազմի ընթացքում, որն այդ շրջաններում համարվում է խաչի և կիսալուսնի ղայքա: Սուսուլմանական շահ ընտանիքներ մեծ կորուսներ կունենան այդ ղատերազմում, որն էլ քիստոնյանների հանդեղ ատելության մի նոր առիթ կիանդիսանա Օսմանյան կառավարությունը վերջին շրջանում փողով է խուսափել ջարդերից և անկարգություններից, վախենալով, որ դրանք իրենց արձագանքները կցնեն Թուրքիայի եվրոպական շրջաններում, սակայն կորցնելով եվրոպական տարածքները, այժմ նա այդ կաղանքից էլ է ազաված: Հայոց ղատիարքարանը աղբառում ձնումներ է ենթադրում և վախենում է, որ այս ղատերազմի հետ Հայաստանում տեղի կունենան ծանր իրադարձություններ:

Պատրիարքարանի ներկայացուցիչները ենել էին տեղեկանալու, թե Եվրոպան ի՞նչ է մտադիր անել իրենց համար, բանզի Հայկական հարցն իր արտացոլումն եր գտել Բեռլինի դայմանագրի 61-րդ հոդվածում, և 1895 թվականից Կուսանդմուտույսի դեսպանություն դաշտասուն էին բարենորդումների մի ծրագիր՝ այդ արածներում իրականացնելու համար:

Ներկայացուցիչները հայտարարում էին, որ որևէ հավաս չի ներենչում օսմանյան կառավարության կողմից մշակվող բարենորդումների ծրագիրը, եթե, իհարկե, դրանք չիրականացվեն տերությունների հսկողության ներքո: Միաժամանակ կոչ արեցին, որ եթե բուրժուն ուզում են դահլիճներ ասիական սարածները, աղա դեսք է մի շարք բարեփոխումներ կատարել բացառադես Եվրոպայի հսկողությամբ: Ավելացրեցին նաև, որ հայերի դահլիճները շատ չնշին են՝ նրանց անհրաժեշտություն է կյանի և գույքի աղափովություն:

Պարոն Կարայանին և Թորգոմյանին դատախանեցի, որ օսար տերության ներկայացուցիչը շատ զգույց դեմք է լինի մեկ այլ դեսության ներքին խնդիրներին միջամտելու դեմքում: Նուանց, սակայն, վսահեցրի, որ եթե Հայկական հարցը բննարկվի Եվրոպայում, հայերը կարող են վստահ լինել, որ իտալացի ժողովուրդն այնոյին դիրքուում կունենա, որով հարգված կլինեն հայերի զգացմունքները, ազատության [ձգտման], հավասարության և առատաձեռնության ավանդույթները: Սա է վերիիշեյալ դարտների հետ ունեցած գրույցին համառու նկարագիրը, որը ներկայացնում են Զերդ Գերազանցության ուսադրությանը, բանզի կարծում են, որ շատ շատ հայերի դահլիճները կարող են վերջնական լուծում է դահլիճները:

Գարունի

Իտալիայի Արտահին Գործերի Նախարարության Պատմական Դիվանագիտական Արխիվ՝ այսուհետ ԻԱԳՆԴՌԱ, Թուրիայի Դեսպանատուն 1829-1937թթ., բորապանակ 161:

2

Իտալիայի Արտահին Գործերի Նախարար Սան Ջովանին՝ Կուսանդմուտուսում Իտալիայի դեսպան Գարունիին
Հուն, 1 փետրվարի 1913թ.

Հեռագիր

թիվ 700

Ըստ վստահելի տեղեկությունների, չնայած, հնարավոր է, որ Ռուսասանը բարձացնի Հայկական հարցը, այսուհանիւր դեռևս հնարավոր է, նոյնիսկ հավանական, որ դրանից խուսափելու մեր գործադրած ճիգերը հաջողություն ունենան: Դեռ համար անհրաժեշտ է, որդեսզի բալկանյան երկների հետ խաղաղության կմուլտը արագացվի, օսմանյան կառավարությունն անհարաջ իրականացնի լուրջ հայեր՝ հայերի վիճակը բարելավելու համար, սակայն այդ հայերը լինեն ոչ թե ձևական, այլ անկենծ և իսկաղես բարելավեն հայերի

դայմանները, նախարար Ռուսասանի կողմից Հայկական հարցի բարձրացումը, այլ խոսելու՝ բանի դեռ ուս չէ: Զերդ Գերազանցությանը խնդրում եմ այս ամենը ոչ դաշտունական կերպով հաղորդել օսմանյան կառավարությանը և հասկացնել նրանց, որ նրանց գաղանաբար տվյալ այս խորհությունը բխում է Թուրիայի շահերից և համընկնում է մեր շահերին՝ Ասիայում նրանց իշխանությունը դահլիճներու տեսակետից:

Սան Ջովանի

ԻԱԳՆԴՌԱ, Թուրիայի դեսպանատուն 1829-1937թթ., բորապանակ 161:

3

Իտալիայի արտահին գործերի նախարար Սան Ջովանին՝
Կուսանդմուտուսում Իտալիայի դեսպան Գարունիին
Հուն, 7 փետրվարի 1913թ.
Հեռագիր
թիվ 06247/67

Պարոն դեսպան,

Ընդհակալություն եմ հայտնում Զերդ Գերազանցությանը ս.թ. Իոնվարի 25-ի թիվ 103 հեռագրի² համար, որով ինձ տեղյակ եմ դահլիճ Հայոց դատիարականի ներկայացուցիչների այցի և Ասիայում հայերի վիճակի մասին նրանց նկատառումների մասին: Ըստ այդ ներկայացուցիչների՝ նման դայմաններ տիրում են վաղուց, այժմ դրանք ավելի են վատքարացել և կարող են առավել ծանրանալ մոտագայում:

Այդ կաղաքացությամբ առիթ եմ ունեցել վերջերս մի նամակ ուղարկել Նորին Գերազանցություն վաշչաղետին, որի կրկնօրինակը կից ուղարկում եմ Ձեզ: Այդ նամակում իմ արտահայտած սկզբունքները համընկնում են այն տեսակետներին, որ Զերդ Գերազանցությունը ներկայացրել է իր գրուցակիցներին:

Հաստատելով այդ գրույցում Զերդ արտահայտած մսերը՝ ավելացնում են, որ այս դահլիճն մեր հետարգությունների մեջ չի մտնում միջազգային մակարդակով բարձրացնել Հայկական հարցը: [Հարցի՝ միջազգային մակարդակի] բարձրացումն այս դահլիճն կարող է առիթ հանդիսանալ գուգակեռարար անդրադանալ նրան Թուրիայի ասիական սարածների հետ առնչվող շատ այլ հարցերին ևս, իսկ մեզ անհրաժեշտ է, որդեսզի Կայսրության այլ հասկածի սարածնայի ամբողջականությունը բննարկման նյութ չըստոնա առնվազն մի քանի տարի մինչև մեր կողմից կավարտվեն նախարարատական այն աշխատանքները որոնք կերպարագուրեն խնդրի լուծման մեջ մեր դերակատարությունն ու որու առավելությունները: Բայց որդեսզի այս անենոր սացվի, անհրաժեշտ է, որ օսմանյան կառավարությունը գիտակցի և ամենայն դատախանագությամբ մոտենա կրկնվող այն բողոքներին, որ սացվում են Փոքր Ասիայի հայ համայն-

Անդի կողմից: Այս իմաստով Ձեր Գերազանցությունն ամեն դեղբում կարող է սեփական նախաձեռնությամբ, դատի առիջի դեղբում, դիմել Օսմանյան կայսրության արքունախարարությանը, որդեսզի նա որքան հնարավոր է ուստի խաղաղություն հաստաք իր ժրադեմության այդ կարևոր ցանցներում:

Սան Չովիանոն

Առջի

Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Չովիանոն՝

Իսալիայի Նորին Գերազանցություն վաշշաղետին

Հռոմ, 28 հունվարի 1913թ.

Տեղեկացնում եմ, որ ս.թ. հունվարի 16-ին Սովհայի նախարարը³ երկու հուշագիր է ուղարկել՝ մեկը Նորին Գերազանցություն քաջապորին, մյուսը՝ Ձեր Գերազանցությամբ, Սովհայում հավանակած հայերի ինրիդի կողմից, որով ինդրում են Իսալիայի միջամտությունը Փոքր Ասիայում քնակվող հայ ժողովրդի վիճակի բարեկաման գործում։

Այս կապակցությամբ, կարծում եմ, օգտակար կիմի ավելացնել, որ Հռոմի արքայական համալսարանի պրոֆեսոր կոնս Անգելոն դի Գուբերնատիսի միջոցով վերջին ինչ հասալ մի հայ հրատարակչի՝ պարուն Առաջաման, դիմում։ Նա մաս է կազմում Հայոց պատրիարքի կողմից նշանակված այն պատվիրակության, որը Բենջինի համաշայազգիր ասուրագրած եւրոպական ժերությունների կառավարությունների մոտ ներկայացնում է քուրսիականակ հայ ժողովրդի իրավիճակը։ Դիմումում նա ցանկանում էր իմանալ, թե ե՞րբ կարող եմ ընդունել այդ պատվիրակությանը։

Կոմի դի Գուբերնատիսին պատասխանեցի, որ արքայական կառավարությունը լիովին ժեղակ է քուրսիական հայերի իրավիճակին, բանզի նրանցով քնակեցված շշաններում խոսվում է բարենրոգումների մասին, և զատ չէ լինի, որ այդ կապակցությամբ ժերությունները նմանակումներ կազմակերպեին բնակության առնելով այդ խնդիրը՝ հաշվի առնելով, սակայն, մեր բարեկամական հարաբերությունները Օսմանյան կայսրության հետ։ Նրան ասացի, որ ավելին չեմ կարող վստահեցնել այդ կապակցությամբ, նույնիսկ եթե այդ պատվիրակությունը ժամանակ Հռոմ, ապա իմ հայտարարությունները ոչնչով չեմ տարելի արդեն ասվածից։

Սան Չովիանոն

ԻԱԳՆՊՆԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թ., բորադանակ 161:

4

Տրամիզրնում Իսալիայի գլխավոր հյուրատու Գորդինիմ⁴
Կուսաննմուղը լուսում Իսալիայի դեսպան Գարունիին
Տրամիզրն, 8 մարտ 1913թ.

գաղտնի

թիվ 245/39

Պարուն դեսպան,

Պատասխանելով Երեկով Ձեր գրությանը՝ դատիվ ունեմ անհաղաղ Ձեզ ներկայացնելու Հայկական հարցի առնչությամբ իմ տեղեկությունները։

Հյուտառոսական իմ իրավասությունների ցանակի մեջ են մտնում Ձեզ հետաքրքրող ցանաններից Երեք՝ Վանի, Բիթլիսի և Եղրումի վիլայեթները։

Եղրումում իրավիճակը հանգիս է։ Լավատեսական այն դատելը, որ Ձեզ է ներկայացրել այդ դատանյան, իրատեսական է թվում, եթե վերաբերում և սահմանափակվում է միայն այս վիլայեթով, որտեղ, թե՛ կառավարուների գործումներյան, թե՛ բվականորեն գերիշտող հայ բնակչության հետ նրանց համագործակցության, թե՛ սահմանադրության հոչակման ժամանակաշրջանի մուսուլման բնակչության և Երեքի փուրարքի լինելու հանգամանեներն այստեղ հաստաել են կենսական բնականոն դայնաներ, որի արդյունքում ցնցումներ և բախումներ գրեթե տեղի չեն ունենում, և այս ամենը կարող է գրավել միջազգային հանրության ուշադրությունը։

Բայազետում, որ Եղրումի վիլայեթի կարտորագոյն բարձրն է, որտեղով անցնում են Պարսկաստան մեկնող բարավանները, և ուր նկատվում է ռուսական շունչը, մասնավորապես 1876-1877թթ. դատերազմից և Սան Ստեփանոյի դայմանագրի կնումից հետո, իրավիճակը նույնութեան հանգիս է, ինչքանով որ ինձ տեղեկացրեց ոչ մուսուլման մի դատանյա, ով մի բանի օր առաջ էր այդտեղի եկել։

Ինչ վերաբերում է Վանին, որը միանանակորեն կարելի է հայկական վիլայեթ անվանել, և Բիթլիսին, որն անմիջապես հաջորդում է Վանին, չի կարելի ասել նույնը։ Սակայն Բալկանյան դատերազմի սկզբից իհչ անց, այս երկու վիլայեթներում իրավիճակը զգալիորեն բարելավվել է, բայց խոսք վերաբերում է միայն այս դատին, և կոնկրետ այս դատի համար այդ դատանյայի կողմից Ձեզ ներկայացրած լավատեսական դատերեն ընդիանուր առնամբ, իրոք, համադատասխանում է իրականությանը։

Վանում և Բիթլիսում շարունակվում են հայերի սղանությունները և դրանք կատարվում են ամեն օր, սակայն ի տարբերություն ոչ վաղ անցյալի, այժմ դրանք կատարվում են ոչ մասսայաբար և ոչ մուսուլման [թուրքերի] կողմից, այլ՝ Երական առանձին խմբերի կողմից։ Քրեթեն ավագակ, վրանաբնակ, դաժան, արյունաբրու և ընդպղող ցեղախումբ են։

Ոսիկանությունը ցոյց է տալիս, թե եռանդաբար փնտում է մեղավորներին, սակայն նրանց անկարողության, կամ, ավելի ճիշ կլինի ասել, հայերի

հանդեղ ատելության դաշտառով, մեղավորները գրեթե միշտ չեն գտնվում և անդամակի են մնում: Նույնիսկ Վանի բաղաբաղետ Կատամաջյանի սղանությունը դեռևս բացահայտված չէ:

Մի շարք աղյուսներից ինձ հայեցի դարձավ, որ Վանի զիշավոր նահանգադեր համաձայնության մեջ է եղել բրեթի հետ՝ ընդդեմ Հայ հեղափոխական դաշնակցության: Միգույն նա վախենալով ինչողեւ բրեթից, այնուեւ է հայեթից, (առաջինները դաժան և վայրենի են, հայեթ՝ ավելի բազմամարդ, համառ և հաստատման), սակայն ընտելով առաջիններին, բանզի նրանի մուսուլման են, իսկ հայեթ՝ ժիտոնյա, թեմամանի է առաջացնում նրանց մեջ, կիրառելով «բաժանիր և տիրի» սկզբունքը:

Այս վերջին օրերին մի բախում տեղի ունեցավ Վանի ժանդարմների և բրեթական մի ավազակախմբի միջև: Հայ ժանդարմը սղանեց բուրդ ավազակադեմին, որին վերագրվում էր նաև Կատամաջյանի սղանությունը: Հայ ժանդարմն այժմ ձերքակալված է և դատադարտվում է:

Հայկական հարցի կողմին այժմ առաջ է եկել նաև բրեթական հարցը: Իրեն, կան բրեթ, որոնք նոյնական բարոգում են անկախության գաղափարը և սղանում են աղոստամբել: Իմ կողմից ճշճված սվյալներով, բրեթը դատրաս են համագործակցել նաև հայեթի հետ՝ ընդդեմ մուսուլմանների, եթե նրանց խնդիրը չբավարարվի:

Սուս աղապայում մեկ այլ խժիժություն է սղանում, որը նախադատասաւում, սակայն գաղտնի է դահլիճում: Կարծում եմ այն կազմակերպվում է սահմանին գտնվող ռուս գործակալների կողմից:

Թեև չեմ կարող բացառել այս ամենը, բայց կասեմ, որ ինձ չի բվում, թե այդ ցանցներում տեղակայված ժանդարմերին համարվել է Մակեդոնիայից եկած հրամանատարներով և զորամասերով: Սակայն ձիւս է, որ 1911թ. սկզբներին, ինչողևս տեղեկացրել եմ արքայական դեսպանատանը, Վան է ուղարկվել օսմանյան ժանդարմերից մի ընտրված զորաբանակ, որը դեկավարում էին չորս օստաներկացի հրամանատարներ՝ մեկ գերմանացի, մեկ ֆրանսիացի, մեկ իտալացի և մեկ անգլիացի: Ժանդարմների այդ լավագույն զորախումբն այլևս հետ չվերադարձ և մնաց բուրժ-դարսկական սահմանին՝ Վանի ցանում, և կարծում եմ, որ դրա հրամանատարությունը տեղակայված է հետու Վան բաղադրությունը:

Վարչական բարեփոխումներ, որոնք այդուհին, այդուեւ է չիրագործվեցին, բայց տեղական իշխանությունները տացված հրահանգներից և դահի անհրաժեշտությունից ենելով մի փոքր բարելավեցին կառավարման եղանակներ՝ ավելի ինչ անհանգույն բնակչությանը: Նույնիսկ հանդուժում էին, որուսպի ջարդեթից, բռնություններից, բաղաբաղան հետադրություններից և վախից իրենց բնակավայրերը լած հայերն ու բրեթը վերադառնան իրենց տեղությունը: Այս դրական տեղաշարժը հերթել չի լինի, սակայն, այն բավարար չէ, և որևէ երաշխիներ չկան աղապայի համար:

Տակավին չլուծված է մնում այն մեծ խնդիրը, որ վերաբերում է հայեթի հողերին և գույշին, որոնք բռնազավթվել և թալանվել են բրեթի և մուսուլմանների կողմից 1895 թ. ջարդեթի ընթացքում և դրանցից հետո: Խնդիրը շատ ծանր է, և դա է այն հիմնական դաշտառը, որը վաղվա ուղարկան հանդեղ վատահություն չունենալու դաշտառով, ծնում է մնան իրավիճակ:

Դեսք է ավելացնեմ սակայն, որ հայեթի դարակտվածությունը հենց իրենից մեջ, բաղաբաղան և կրոնական տարածայնությունները, բնակության փոփոխական լինելու ու տարայունությունը շատ են դժվարեցնում դեմքների ընթացքն ու իրավիճակը:

Հայեթի թիվը հաշվում է մոտ 3 միլիոն, որոնցից 1.250 հազարը բնակվում են Թուրքիայում, այդքան է՝ Ռուսաստանում, մնացած կես միլիոնը ցըված են Պարսկաստանում, Հնդկաստանում, Եգիպտոսում, Ճաղոնիայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Հարավային Ամերիկայում և Եվրոպայում: Մասնաւությունը 200 հազարը կարողիկներ են, մնացածը՝ Արաբելական Եկեղեցու հետևողներ, կան նաև փոքրարիկ բողոքականներ և այլք:

Օսմանյան կայսրությունում բնակվողները՝ սոցիալ-բաղաբաղան տեսանկյունից բաժանված են երեք խմբի:

1. Պահպանողականներ, սրանք բարոգում են բացառադես հայ ժողովրդի իննուրուության սկզբունքը, կրոնի, լեզվի և ավանդույթների անաղատականությունը, բացառում են ցանկացած ժիղու ձուլում և համագործակցություն մուսուլմանների հետ և ցանկանում են, որդես կանոնադրությունը դեկավարման գործում նաև կազմի նաև հոգևորականությունը:

2. Հնչալյաններ. չափավոր ժողովրդական այս խմբավորումը հնարավոր է համարում բուրժերի հետ բարիդացիական հարաբերությունների հաստատում՝ առանց նրանց հետ համագործակցելու, և բացառում է համայնքային կյանքում հոգևորականության դեկավար դիրք ունենալու հանգամանքը:

3. Ռաւսնականականներ. սրանք սահմանադրության հաստաման ընթացքում բարվականին լավ համագործակցում էին երիտրոսերերի հետ և շատեր անդամագրվում էին «Միություն և առաջադիմություն» կուսակցության տեղական կոմիտեներին: Սակայն նրանց շարժումը հիասքափություն մտավ, և նրանք ընդդեմ կայսերական բարոգության դիրք ունենալու հանգամանքը:

Հայեթ երկու երրորդը դատկանում է առաջին խմբին, մնացած մասը, որոնք ավելի անհնագան կարելի է կոչել, անդամագրվել է մյուս երկու խմբերին, և այս հաճախ հայեթի դժվարացնություններն արդյունք են նրանց գործողությունների, որոնք գրգռում են մուսուլմաններին և բրեթերին:

Այս ամենից դարձ երևում է, որ Հայկական հարցի այժմ չի կարելի համար որոնք լուծման փուլում գտնվող հարց. այն գտնվում է դադարի և սղա-

ման փոլոս: Թուրքեն այս վիճակը համարում են բարելավում, և դրա համար նրանց չի կարելի մեղադրել: Հայերը, սակայն, որ բնավորությամբ թերահավաս են և ունեն անցյալի դառը փորձը, չեն վստահում և կարծում են, որ թուրքերը չեն հրաժարվել իրենց ձուլելու ծրագիր և նրանց բարյացակամ վերաբերմունքը հայերի նկատմամբ դարձաղեն դահի թելադրանք է, բանօիք [թուրքերը] վախենում են իրարեկ Ռուսաստանի զայրությը, որի արդյունքում կարող է գրավվել Հայաստանի տարածքը, ինչդես նաև վախենում են կորցնել տերությունների համակրանքը: Հայերը վստահ են, որ շուտով թուրքերը կսկսեն լայնածավալ գործողություններ, իսկ այժմ բռնություններ գործադրում են որտեղ կարող են. նրանք բռնություններ են իրազրծում այն հայ կանանց և ընտանիքների նկատմամբ, որոնց տրամադրիկ մեկնել են մարդի դաւա, իրանում են նրանց ունեցվածքին և, նոյնիսկ, սպառում են վիրավոր հայ զինվորներին, որդեսզի հիվանդանոցներում տեղ լինի մուսուլման վիրավորների համար ... Չաս շաս են հայերի զանգաները:

Մինույն ժամանակ հայերը զայտնաբար զինվում են ինչդես հոյսները, որդեսզի այս անգամ թանկ վաճառեն իրենց կյանքը, դրան սպառնացողներին հակարելով ջարդե՝ ջարդերի դիմաց:

Խնդիրն ավելի է բարդանում ու խճվում, ինչդես արդեն ասել եմ, բողերի գործնարար հուզումների և ռուսների միջամտության հետևանքով:

Թուրքական կառավարությունը, խաղաղությանը նոյասելու համար, շուտով կուսակի կիրառել վերջերս ընդունված գույքահարկի մասին օրենքը, սակայն, ցավով մրցի, կիանողի այն դժվարություններին, որոնց մասին արդեն նշեցի:

Հայտարարվում է նաև, որ շուտով Կոստանդնուպոլիսից մի հանձնախոսումբ կզարք կհամարվի տեղական մարմինների ներկայացուցիչներով և կայցելի հայկական վիլայեթներ՝ նոյատակ ունենալով վերականգնել ժամանակիան, հետարքելով նաև առկա այլ խնդիրներով՝ բարեփոխումներն իրականացնելու համար: Անկասկած սա բարի կամքի դրսուրման ևս մի ձև է, սակայն դեռևս շիրագործված, նրա շուրջ արդեն ձևավորվել է մեծ անվտանգության մքնողոր:

Կառավարության մեկ այլ նախաձեռնությամբ՝ վերջին զորակոչով հավաքագրված զինվորներն ուղարկվում են Երկրի խորենը. ամեն օր բազմաթիվ զինվորներ են քայլս և տեղակայվում այստեղ: Մասն շուտով ուղամական կարգադրություններ կուսանան և կտեղաշարժմեն դեղի արդեն որոշված սահմանագոտներ՝ Բայրութ, Երզնկա, Երզրում, Բայազես և Վան: Այդ զինվորների և ժամանակաշինության միջոցով Բարձր Դուռը հույս ունի վերահսկել սահմանին շիրո իրավակը, որտեղ տեղակայված ռուսական զորքերը կանգնած են որդես մշական սպառնալիք:

Թուրքիայում բնակվող հայերի վիճակի մասին տարածվող ահազանգերը, ըստ վերջին իրադարձությունների, չեն հաստատվում. վիճակը կայուն է և, նոյնիսկ, նշանակում է մի փոքր բարելավում:

Իրավիճակը, որ ներկայացրի, այս դաիին համադրասախանում է իրականությանը: Եթե ձյուն տեղա, և դրա ժերը մի բանի մետրով բարձրանա և փակի ձանաղարիները, աղա վիճակի կտրուկ փոփոխություն մոտ աղագայում չի լինի: Խնդիրն իմ ուշադրության տակ կլինի, և յուրաքանչյուր հնարավորության դեղում Ձերդ Գերազանցությանը կտեղեկացնեմ իրավիճակի մասին:

Պարոն դեսպան, ընդունե՛ք հարգանքներիս հավաստիք:

Գորդինի

ԽԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թ., թրամանակ 161:

5

Կուսանդմուտրուսում Խալիայի դեսպան Գարրոնին՝
Խալիայի արտաֆին գործերի նախարար Սան Զովիանոյին
Կուսանդմուպողի, 18 մարտի 1913թ.

Հեռագիր

թիվ 1290/295

Պարոն նախարար,

Տրամիզոնի արքայական գլխավոր հյուտատոսը իր գեկուցում ներկայացրել է Հայաստանում միարու իրավիճակը: Այդ գեկուցը՝ կից ուղարկում եմ Ձեզ: Դրանից կարենի է հետևողություն ամեն, որ իրավիճակն այնուղ այրբան է վարդագույն չէ, ինչդես Ձեզ ներկայացրել է Նարի քեզը: Մեր հյուտատոսը կիեմին իրադարձություններին և մեզ կտեղեկացնի իրավիճակի փոփոխությունների մասին:

Պարոն նախարար, ընդունե՛ք հարգանքներիս հավաստիք:

Գարրոնի

ԽԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թ., թրամանակ 161:

6

Խալիայի արտաֆին գործերի նախարար Սան Զովիանոն՝
Կուսանդմուտրուսում Խալիայի դեսպան Գարրոնին
Հուն 8 սպրինգի 1913թ.

Հեռագիր

թիվ 2103

Պարոն դեսպան,

Այսօր հանդիդեցի դարոն դե Սերեյին⁶ և զրուցեցին Հայաստանի խնդիր մասին: Նա կիսեց իմ կարծիքն այն մասին, որ այժմ նոյատակահարմա չէ Հայկական հարցի բարձրացումը: Կածում ենք, որ Երիտրուսերը դեմք է բարեկամաբար խորհուրդ տան Բարձր Դուռը, որդեսզի այն որքան հնարավոր է խոսակի



հայերին վճանեց դաշճառող գործողություններից: Նրան տեղեկացրի, որ, ըստ Տրամիզնում մեր հյուտառոսի գործյան, վիճակը մի փոքր բարելավվել է:

Սան Ջովիանո

ԻԱԳՎՄԴԱ, Թուրիայի դեսպանատուն 1829-1937թթ., թրամանակ 161:

7

Հալետում Իտալիայի գլխավոր հյուտառոս Գաուտիերին՝
Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարրոնիին
Հայկա, 17 սպրինգ 1913թ.

Հեռագիր

թիվ 2186

Պարոն դեսպան,

Դեմքն այնքան իրատադ է, որ հեռագրել եմ նաև արքայական նախարարին: Այս գիտեր կարողիկ հայերի եղիսկողոսը մի հեռազիր է սատել, որում ասվում է. «Նախորդ երեկո ուղարկի կենտրոնում երկու ժամկարմներ առանց դաշճառի սվիններով հաջակվել են բնակչության վրա: Հրամանատարի իրամանով նրանց են միացել ժամկարմների մի խումբ և շարունակել խուսանգումները: Մեր կյանքը վաճագի մեջ է, անհրաժեշտ է անհաղող միջամտություն: Նմանաժիդ հեռագրեր են ուղարկել տարբեր գյուղեր, և այժմ Արքանայի բնակչության մեջ ջարերի վախից ահավոր տագմադ է առաջացել: Քիչսոնյանեւն աղաստան են գտնում Եվրոպացիների ըներում: Խնդրում ենք արքայական նավելից ուղարկել մեզ դաշճառական համար»:

Անմիջապես կաղաքեցի Հալետի եղիսկողոսների հետ, քայլ նրանք ավել ոչինչ չգիտեին: Առավոյսան կկաղաքեմ կողեզաների հետ, բանզի այժմ կեսզիւ և տեղեկանալու համար, թե նրանք ի՞նչ նորություններ ունեն:

Գաուտիերի

ԻԱԳՎՄԴԱ, Թուրիայի դեսպանատուն 1829-1937թթ., թրամանակ 161:

8

Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարրոնին՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Կոստանդնուպոլիս, 13 մայիս 1913թ.

Հեռագիր

թիվ 2832/500

Պարոն նախարար,

Պատշիվ ունեմ Ձեզ տեղեկացնելու, որ հայկական դատվիրակությունը, որը գլխավորում է դատիարքը, երեկ մի հուսազիր է ներկայացրել Մեծ Վեզիրին,

որում ներկայացնում են հայերի ցավախի վիճակը, հայկական նահանգներում միջուկը մթնոլորտը և այլն:

Հուսագիրը հետաքրի մի փաստաթուղթ է, որը ստեղծված իրավիճակում չափազանց կարևոր դեր կարող է խաղալ հայ համայնքի և թուրքական կառավարության հարաբերություններում: Հուսագրում հսակ նեւում է, որ հայ ժողովուրդը չի ցանկանում անջատվել Օսմանյան կայսրությունից, սակայն անհրաժեշտ է համարում դեռևս 1878թ. Բեղլինի կոնգրեսով խոստացված բարեփոխումների իրականացումը, որդեմ հսակ երևան հայերի կյանքի և ունեցվածքի աղահովության երաշխիքները:

Եթե օսմանյան կառավարությունն այս անգամ էլ անտեսի այս կոչքը, որը, եւսում է, վերջինն է, և անհաղող չարգելի նոր բռնությունները, նոր ջարդերն ու հետաքրնումները, աղա Օսմանյան կայսրությունում բնակվող հայերը չեն կարող իրենց հայացքը չուղղել դեռի իրենց այն կրոնակիցները, որոնք հանգիս աղբում են Ռուսաստանում, և եթե նոյնիսկ անկախությունն այնտեղ անհնար լինի, կգերադասեն աղբեկ մոսկովյան ցարի, բան Կոստանդնուպոլիսի սուլթանի իշխանության ներքին:

Վերջում դատիվ ունեմ Ձեր Գերազանցությանն ուղարկելու վսահելի աղբյուններից ինձ հասած՝ Հայկական հարցին առնչվող մի քանի զարդնի նորություններ:

Գարրոնի

Առողիր

1. Գյամիլ փաշայի⁷ կառավարությունը ուսասկան միջամտության սպանալիքի ներքին, ինչպես նաև հաշվի առնելով, որ երկրի արզործնախարար՝ պարուն Նորասունկյանը,⁸ հայ է, խաղաղության հաստատման նախաշեմին սկսել է լրջորեն գրաղվել Հայկական հարցով: Թվում է, թե երիսրուրերի այս կառավարությունը դեմ չէ ականչալուր լինել հայերի ցանկություններին: Ինչպես ինչ տեղեկացրեցին վսահելի աղբյուրից, երիսրուրերի կոմիտեի համագումարի վերջին հիմունք լսել է Հայկական հարցը: Նախկին պատգամապար Սերրես Միդիաս Ծուրին, անդրադառնալով խնդրին, հայտարարել է, որ կառավարությունը որոշել է մի շարժ օսւրելրացիներ հրավիրել՝ Հայաստանու բարեփոխումներն իրականացնելու համար: Հենց որ նրանք ժամանեն Անասուլիս, կառավարությունը մարդարամար կանցկացնի՝ ցույց տալու համար Եվրոպային, որ հայերն այդ շրջաններում ընդամենը փորեամասնություն են կազմում: Նրանց տկոսային թվաբանակը տասնակուն է 10-ից 37 տկոսի սահմաններում:

Ինչպես ինչ տեղեկացրեց հայերի նախկին պատրիարք Օրմանյանը,⁹ Հայաստանու անցկացվելիք բարեփոխումների այս նախաձեռնությանը հավանություն են տալիս բնակչության բոլոր շերտերը: Նոյնիսկ Փարիզում գործող հայկական պատմիրակությունը ցանկանում է բրդերին և մասնակից դաշնել

այս գործին հայերին հաւասարով անշուշ, զիսավոր դերը: Օրմանյանն ինչ ասաց նաև, որ հայերն այսօր բաժանված են երկու խմբի. մի խումբն ուզում է Փարիզում գտնվող հայկական պատվիրակության միջոցով շարժել ելքուական տեղությունների հետադրությունը Հայկական հարցի շուրջ, իսկ մյուս խումբը ցանկանում է տեղական հայկական կոմիտեների միջոցով սարտաներ և խժություններ իրականացնել: Ներկայում կան երկու պատսամքական կենտրոններ. մեկը՝ Զեյթունում, որը հունական կառավարության հետ սեր կապի մեջ է և գտնվում է նրա ազդեցության տակ, մյուսը՝ Վանում: Ուստամբանն իր հերթին ակտիվ աշխատանքներ է իրականացնում երերի շշանում: Քրիստոնեության Արքունեակն է, որը բավական երկար ժամանակ գտնվում էր Թիֆլիսում: Խորհրդական կառավարությունը ցանկանում է նվազեցնել հայերի քիվ՝ այդ նպատակով կազմակերպելով ելքուական շշաներից նույնանելի տեղափոխությունը դեպի հայկական շշաներ:

2. Հայկական հարցի ներկա վիճակի մասին որոշ տեղեկություններ սացագրապահի Օրմանյանից և հայկական այլ աղբյուրներից:

Հայկական շարժման կենտրոնը գտնվում է Եզիզոսում: Դրա ղեկավար հայտնի հեղափոխական Դամադյանն է: Հայկական կոմիտեներն աջակցություն են սամանում Հունաստանից և բվում է, թե այսեղից զեմք և զինամքեր են ներկրում: Երգնակայում տեղի ունեցած պայքարունք ցույց է տալիս, որ այստեղ բավականին շատ զինամքեր է կուտակված եղել: Հայերի առավել խոհեմ մասը բնադրատում է այդ շարժումը: Հայոց Կաթողիկոսը փորձում է սանձել հայկական բոլոր կուսակցությունների ծայրահեղական բների գործողությունները: Կուսանդնուպոլիսի Հայոց պատրիարքի Եզիզոսն է ուղարկել Օսմանյան բանկի աշխատակից պարոն Փահազյանին և վասհելի մեկ այլ անձնակորության Դամադյանին սասելու համար:

Երիտրության կոմիտեի վեցին հավաքի ժամանակ որոշվել է, որ կառավարությունը բոլոր հնարավոր միջոցներով պետք է աջակցի Հայոց պատրիարքին, որի բոլոր պատճենությունը հայկական որոշակի շրջանակներ ակտիվ պայման ու սկսել նրան դեմ: Նիսի ընթացքում Մուսա Քյազիմը տեղեկություններ պահանջեց «Ճանին»¹⁰-ում սպագրված այն հոդվածի մասին, որ դրականությն էր խոսվում Հայկական հարցի մասին: Ճանիաքը¹¹ նրան պատասխանեց, որ այդ հանդեպ չի արտահայտում կոմիտեի տեսակետները:

Տարեր աղբյուրներից սացված տեղեկություններից երկում է, որ Ուստամբանը ցանկանում է բարչացնել Անասույսայի շրջանների հարցը: Եթե նախկինում բվում էր, որ Ուստամբանը ցանկանում է սեղանին դնել Հայկական հարցը, ապա այժմ կարելի է վատահարաց ասել, որ նա ինսրին ցանկանում է տա երական երանգ և ստեղծել մի նոր Ուստամբան՝ Անասույսայի առևտություն: Այս փաստն ապացուցվում է նաև այն հուշագրով, որ մարտի 17-ին ուղարկվել է Մուծ Վեզիրի գրասենյակ, որտեղ կարծում են, որ հուշագրը կազմվել է Ուստ-

աստամի դեսպանատան դրումով: Մուծ Վեզիրը կարգադրել էր պարզել հուշագրի ծագումը, սակայն Պալուի (այդ բնակավայրից էր ուղարկվել հուշագրը) ազդեցիկ դեմքերը կտրականապես հերթել էին իրենց մասնակցությունն այդ գործում:

Ծարունակվում են ուստական զորժիքի կենտրոնացումները քուրպական սահմանին:

3. Վասահելի աղբյուրներից սացված տեղեկությունների համաշայն, Զամկի սոներից հետո Հայոց պատրիարքի և Բարձր Դուռա հաւաքերություններում սրում է նկատվում, որը շուտով ճգնաժամ կառաջացնելու պատրիարքական կերպում, բանզար ներկա պատրիարքի չի կարողանում վերահսկել իրավիճակը: Այդ պաշտոնում առավել նպատակահարմար քեկնածու է համարվում Դիարենիրի արժապիսկոպոս Զավենը: Պատրիարքի պաշտոնագրկումն ազգային ներին անհրաժեշտություն է, որով արտահայտվում է հայերի բողոքն ընդդեմ առկա իրավիճակի: Պատրիարքական ճգնաժամը կազմանչի դիվանագիտական միջամտության սկզբը:

4. Հաստատվում է, որ Երիտրության կոմիտեն և կառավարությունը են հայ պատճենավորների և ազդեցիկ այլ անձանց միջոցով հայերի շրջանում բարեկիրտումներ առաջանանան: Ուստական դեսպանատանը շարունակում է գումարներ վճարելով ակտիվ պահել հայկական հուզումները: Կառավարությունն իր հերթին ջամանակ չի խնայում նպասելու այն շարժմանը, որը դեմ է արտեկրի հակողության տակ բարեկիրտումներ անցկացնելուն: Անեն դեպում Հայկական հարցը մի ժամանակ հանգիս փուլում է գտնվում:

Վասահելի աղբյուրից իմացա, որ Եզիզոսուի կոմիտեի ղեկավար Դամադյանը Բալկանյան պատերազմի ընթացքում իր հոյն ընկերների միջոցով բանակցություններ է վարել Վենետիկոսի¹² հետ՝ Հունաստանի աջակցությունը սամանալու համար: Վենետիկոսը նրան մերժել է, սակայն հասկացրել, որ Հունաստանի կառավարությունը չի կարող պաշտոնապես աջակցել հայերի շարժմանը և խորհուրդ է սկսել հայագրծակցել հելլենական գաղտնի կազմակերպության հետ, որի միջոցով կարողանան գեմք և զինամքեր չենք բերել: Ինչ տեղեկացրել, որ հայկական կոմիտեները 4-5 քրանկու «մաուզեր» ժամանել են զեմք են զնում բուլղարացիներից: Բուլղարական կառավարությունը ևս աջակցություն է խոսացել հայկական զուարտերի ղեկավար Անդրամիկին,¹³ որը հայ կամավորների հետ մասնակցել է Կիրկիիսի ճակատամարտին:

ԻԱԳՆՊԴԱ, Քաղաքական տարբ 1891-1916թթ., բորբականակ 332:



9

Կուսանդմուտուսում Իտալիայի դեսպան Գարրոնին՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Կուսանդմուպոլիս, 17 մայիսի 1913թ.

Հեռագիր
Քի 2908/511

Պարոն նախարար,

Հայկական դեկանար տղանակները դժողի են մնացել Մեծ Վեզիին ուղղված հուշագրի դատասխանից: Այդ դատասխանում նոյնիսկ չկա խոստումների այն շարքը, որ բուրքական կառավարությունը սովորություն ունի ներկայացնելու: Ամենայն հավանականությամբ՝ եկել է հսակ դատասխանների ժամանակը: Այսուհետ բուրքակարգություն էին դարձնակում բանախոսների ելույթները հայկական ազգային համագումարի երեկ անցկացվող հնարկումների ժամանակը: Համագումարը հավաքվել է նեւու իր հիմնադրման հնգամյակը: Այս տղանակն անհանգստացած է նաև հայտարարված անգլո-բուրքական համաձայնագրի կնումից, բանջի մասվախություն ունեն, որ հենց իրեն են վճարելու դրա դիմաց, որովհետև Անգլիան Թուրքիայից արտօնություններ սահմանով, կփորձի օժանդակել Օսմանյան կայսրությանը և ակնկալվող բարեփոխումների ծրագիրը կհամադատասխանեցնի վերջինիս շահերին:

Գարրոնի

ԻԱԳՆՊԴԱ, Տղագված դիվանագիտական փաստաթուրեր (այս ժողովածուն տղագրել է բացառապես Իտալիայի արտօնության հետին օգտագործման համար), հ. LXVI, Քի 556:

10

Կուսանդմուտուսում Իտալիայի դեսպան Գարրոնին՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Կուսանդմուպոլիս, 24 մայիսի 1913թ.

Հեռագիր
Քի 3026/535

Պարոն նախարար,

Հայկական խնդրով ամենայն լրջությամբ գրադիւնու օսմանյան կառավարության անունից Մեծ Վեզիի տված խոստումները բավական դրական ազդեցություն են առաջացրել: Հայկական ազգային համագումարը, սակայն, որ այս օրերին հաճախ է հավաքվում, այնքան էլ չի վսահում այդ խոստումներին և փորձում է հնարքներ գտնել՝ կառավարության խոստումները գործնականում կիրառելու համար: Մայրախարարի հայկական տղանակներն իրենց հերթին միջոցառումներ են կազմակերպում Եվրոպայի ուսարցությունն Արևելյան Անատոլիայի վիլայեթների ծանր դրության վրա իրավիրելու համար: Այդ

նորատակով նրանք այս օրերին քույցիկներ են դատարանել այդ վիլայեթների ներկա իրավիճակի նկարագրությամբ և նախադատարասվում են փասերի հիման վրա մի աշխատություն իրարակել, որ կարարվի վիլայեթների նախկին վիլակը՝ ցույց տալու համար նոր համակարգի ժամանակ դրանցում եղած փոփոխությունները:

Գարրոնի

ԻԱԳՆՊԴԱ, Քաղաքական շարք P 1891-1916թ., բրատանակ 332:

11

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոն՝
Կուսանդմուտուսում Իտալիայի դեսպան Գարրոնին
Հռոմ, 7 հունիսի 1913թ.

Հեռագիր
Քի 3875

Պարոն դեսպան,


Պետերություն մեր արքայական դեսպանն ինձ է ուղարկել հետևյալ հայորդագրությունները.

1. «Կուսանդմուտուսի օսարեւելյա դեսպաններից մեկի կառձիքով, Հայկական հարցում ուսուական կառավարության խաղաքանությունն ուղղված է ընդդեմ օսմանյան կառավարության՝ հայ-քրդական համագործակցության ստեղծմանը և նրանց անկախության համար մղվող դայլարի աջակցմանը:

Նման խաղաքանություն Ռուսաստանն արդեն վարել է բալկանյան երկրների հետ՝ ընդդեմ Թուրքիայի: Ելնելով երկու ավանդական թեսամիններին՝ շիրողներին և ենթականներին, հողատերերին և այդ հողը մշակողներին, բրիտոնյաններին և մուսուլմաններին հնարավոր հաշտեցնելու փորձից, կարելի է ասել, որ եթե Ռուսաստանի խաղաքանությունն իրոք դա է, առաջ այն, գոնե իր սկզբան փոլում, համընկնում է մեծ ետքություններ՝ Հայկական հարցը սառեցնելու խաղաքանության հետ: Հետագան կախված կլինի Բարձր Դունից, որ կարողանա այնուես անել, որ հանդարտված և իրար միացած հայերն ու բրդերը չընկնեն օսար երկների ազդեցության տակ և չաղտամբեն նրա դեմ:

Որքանով ինձ հասկանալի են այս կառավարության մտադրությունները, կարող եմ ենթադրել, որ չնայած Ռուսաստանը, որդես սահմանակից, ամենա շահագրիոն է Հայկական հարցը դրականորեն լուծելու գործում, բայց նրա առավել ձեռնուու է Արևելյան Անատոլիայի ճգնաժամի երկարաձգումը, որն, ի վերջո, հնարավորություն կընձեռի իրեն՝ գրադիւնու Օսմանյան կայսրության ասիական տարածների խնդրով:

Հավանական է, որ Հայկական հարցի լուծումից հեռու նորատակներ են տաղմադրություն Ռուսաստանի այս խաղաքանությունն աջակցություն չգտնի Անգ-



լիայի կողմից, և դա բացահայտի մինչ այս դաիր քարտու դահվող նրանց հետարքությունները»:

2. «Ինձ թվում է, որ վերջին շրջանում ոռուական կառավարությունը հաճախ է թուրքական դեսպանի ուսադիրական ներկայացնում այն ծայրահեղ իրավիճակը, որում գտնվում է հայ բնակչությունը և խորհուրդ է տալիս դնդել Բարձր Դռանը, որդեսզի միջոցներ ձեռք առնի այդ ուղղությամբ, հակառակ դարագյում ինը կատարելու բարեփոխումների իրականացման նախաձեռնությունը և հանրային աղահովության տեսանկյունից ամենայն լրջությամբ կվերահսկի այս շրջանները, որ բոլոր բնակչությունը հայերի հարևանությամբ»:

Սան Զովիանո

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., բրադանակ 161:

12

Իտալիայի արտաֆին գործերի նախարար Սան Զովիանոն՝
Կոստանդնուպոլիսում Իտալիայի դեսպան Գարրոնիին
Հուն, 8 հունիսի 1913թ.

Հեռագիր
թիվ 3889

Ոռուաստանի դեսպանն իր կառավարության իրահանգով ինձ ներկայացրեց հետևյալ հաղորդագրությունը.

«Թուրքիայի հայ բնակչության վիճակից ելնելով՝ անհրաժեշտ էնք համարում բարեփոխումների անհաղող իրականացումը՝ խաղաղության հասնելու համար: Ոռուաստանը, որդես Թուրքիային սահմանակից տերություն, որի Կովկասի տարածաշանումը բազմաթիվ հայեր են բնակվում, առավել բան շահագրված է, որդեսզի խաղաղությունն այստեղ չխարարվի: Ոռուական կառավարությունը նղատակահարմար է համարում, որդեսզի մեծ տերությունները հննության առնեն բարեփոխումների հարցը: Նա կածում է, որ այդ ուսումնահրության համար որդես սկզբնակես կարող է ծառայել 1895թ. նախագիծը՝ ավելացնելով դրան նոր դահանջներ: Ոռուական կառավարությունը ցանկանում է, որդեսզի Կոստանդնուպոլիսի դեսպանները ստանան համարասխան կարգադրություններ՝ խնդիրն ուսումնասիրելու համար»:

Պարուն Կորուպենսկուն¹⁴ խոստացա դասախանել հաղորդագրությանը:
Խնդրում եմ ինձ ուղարկել Ձեր կաժիքը:

Սան Զովիանո

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., բրադանակ 161:

13

Իտալիայի արտաֆին գործերի նախարար Սան Զովիանոն՝
Կոստանդնուպոլիսում Իտալիայի դեսպան Գարրոնիին
Հուն, 9 հունիսի 1913թ.
Հեռագիր
թիվ 3935

Ավստր-Հոնգարիայի դեսպանն ինձ ասաց, որ իր կառավարությունը ցանկանում է համաձայնության գալ Իտալիայի և Գերմանիայի հետ Հայկական հարցի առնչությամբ ոռուական հաղորդագրությանը դատասխան տալու հարցում:

Բերքը լրիվ¹⁵ դատասխանեցի, որ կարող ենք դատաստակամություն հայ-ներ հննարկելու բարեփոխումների հարցը՝ դայմանով, որ հաւաք առնվեն Թուրքիայի տարածային ամբողջականությունը և սովորական հեղինակությունը: Կարծում եմ, որ Կոստանդնուպոլիսն ամենահարմար վայրն է՝ նման հննարկումներն իրականացնելու համար: Ներդի նաև, որ ձիւս կլինի, որդեսզի Իտալիան, Ավստր-Հոնգարիան և Գերմանիան նույն բովանդակությամբ դատասխան ուղարկեն Ռուսաստանին:

Սան Զովիանո

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., բրադանակ 161:

14

Կոստանդնուպոլիսում Իտալիայի դեսպան Գարրոնին՝
Իտալիայի արտաֆին գործերի նախարար Սան Զովիանոյին
Կոստանդնուպոլիս, 10 հունիսի 1913թ.
Հեռագիր
թիվ 412

Պարուն նախարար,

Պարասխանում եմ Ձեր թիվ 3875 հեռագրին:¹⁶

Հայ-Երիական դաշինքն ընդհանուր առնամբ համադատասխանում է Ռուսաստանի՝ Փոքր Ասիայում վարվող ներկա բաղադրականությանը: Այս նղատակով վերջին շրջանում հննարկումներ են սկսվել հայկական տեղական կոմիտեների և ինչ-որ Արդու Ունակ Բերերիանի միջն, որը Արդու Համիլի ծիսակատարությունները կազմակերող ազրեցիկ ցեղախմբի անդամ Ռուսական գործակալ, ինչդես նաև՝ Ռեզվան փառայի ստանության գլխավոր կասկածյալը: Այս հննարկումները մինչ օրս Թուրքահայաստանում ունեն ազդեցություն չեն բողեք: Որուակի աղմուկ են առաջարել, սակայն, ոռուական գործակալների միջոցով Պետերուտքի «Կորիերն դելլա բուրսա» ամսագրի խմբագրի միջոցով ամսագրին ուղարկած մի բանի հաղորդագրությունները:

Հայկական ցղանակները դատիարխանի և ռուսական դեսպանատան հովանավորությամբ տղագրել են թուղթիկներ, որ ներկայացվում են Արևելյան Անառողջայում իրականացվող ճնշումները:

Օսմանյան կայսրությունում բնակվող հայերը, որքան է հղաց են, որ կարդացել են դատիարխներ իրենց ազգային նկարագիրն ու անցյալում ունեցած անկախ դետության գաղափարը, այժմ այնքան էլ չեն կենտրոնանում ինքնավարության գաղափարի վրա և ոչ էլ իրադրությունը են ռուսական ժիրադետության տակ անցնելու գաղափարով՝ չնայած իրենց հայրենակիցների այն խաղաղ վիճակին, որ ձեռք են բերել [վերջիններս] Ռուսաստանի իշխանության ներքո: Հայերի հիմնական նորատակը Բեռլինի դայմանագրի 61-րդ հոդվածի իրականացումն է:

Գարրնի

ԻՍԳՆՊԴԱ, Թուրքայի դեսպանատուն 1829-1937թթ., բրատանակ 161:

15

Կուսանդնուղղում Իտալիայի դեսպան Գարրնին՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Կուսանդնուղղում, 10 հունիսի 1913թ.

Հեռագիր
թիվ 416

Պարոն նախարար,

Պատասխանում եմ Ձեր թիվ 3889 հեռագրին:¹⁸

Հայկական բարեփոխումների խնդիրն այստեղ ամենահրատապն է: Արևելյան Անառողջայի վիլայեթներում խաղաղության հասնելու համար, իրոք, անհրաժեշտ է լրջությամբ և անհաղաղ գրավվել դրանցով՝ իիմ ընդունելով Բեռլինի համաձայնագրի 61-րդ հոդվածը, որը ոչ միայն կաղափարի այդ ցղանների բիւսոնյա բնակչության անվտանգությունը, այլ նաև՝ երաշխիքի կիանդիսանա Օսմանյան կայսրության դատիարխան համար: Ամեն դարագյում, բարեփոխումների ուսումնասիրության համար գերազանց իիմ կարող է հանդիսանալ նաև 1895թ. առդիլին Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի դեսպանների կողմից մշակված նախագիծը:

Օսմանյան կառավարությունը տերությունների կողմից սղասկելիք առաջարկություններից վախենալով՝ ցղանառության մեջ է դրել բարեփոխումների ծագրի սեփական նախագիծը, որը վերաբերում է Օսմանյան կայսրության ողջ տարածքին: Ճիշտ է, դրանում առկա են դրական մոտեցումներ, բայց դրանի լուրջ վսահություն չեն ներւչչում, քեզ երբեւ կվիրառվեն գործնականում: Նման իրավիճակում օսմանյան կառավարությունը վսահարա կիասկացնի, որ իր մշակած նախագծի կողին այլ նախագծի առաջ բաւում այնքան է

բարիդրացիական վերաբերմունք չի լինի իր նկամամբ: Կարծում եմ, որ նման դարագյում մենք առավել խոհեմ դեմք է լինենք և չըսաղենք ռուսական նախաձեռնությանն աջակցել և, որ ամենակարևորն է՝ չդեմք է հեռանանք մեր դաշնակիցների դիրքորոշումից:

Գարրնի

ԻՍԳՆՊԴԱ, Թուրքայի դեսպանատուն 1829-1937թթ., բրատանակ 161:

16

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոն՝
Կուսանդնուղղում Իտալիայի դեսպան Գարրնին
Հուն. 10 հունիսի 1913թ.

Հեռագիր
թիվ 3953

Այստեղի՝ Գերմանիայի դեսպանն ինձ ասաց, որ Յագովլը¹⁹ կարգադրել է բարոն ֆոն Վանգենհայմին²⁰ մասնակցել Եոյակ միության կողմից առաջարկված՝ Հայաստանում անցկացվելիք բարեփոխումների ծագրի ըննարկմանը: Բարձր Դոանը ևս դեմք է բույլ տվի մասնակցելու այդ ըննարկումներին:

Բարոն Վանգենհայմը կարգադրություններ է սացել նաև՝ կազմակերպել իր գործընկերների հավաք, որին գաղտնաբար դեմք է մասնակցի նաև Մեծ Վեգիոր:

Լիազորում եմ Ձեզ մասնակցել հայկական խնդիրների ուսուց ընթացող այդ ըննարկումներին՝ գործելով Գերմանիայի և Ավստր-Հունգարիայի դեսպանների հետ համաձայնեցված:

Սան Ջովիանո

ԻՍԳՆՊԴԱ, Թուրքայի դեսպանատուն 1829-1937թթ., բրատանակ 161:

17

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոն՝
Կուսանդնուղղում Իտալիայի դեսպան Գարրնին
Հուն. 11 հունիսի 1913թ.

Հեռագիր
թիվ 3971

Պետերությունի մեր արքայական դեսպանն ինձ է ուղարկել հետևյալ հեռագիրը:

«Եղրում, Վան, Բիթլիս, Դիարբեր, Խարբերդ և Սվագ. ահա այն 6 վիլայեթները, որտեղ Ռուսաստանը մտադիր է անցկացնել բարեփոխումները: Այս վիլայեթներում հայերի ծանր վիճակը և դրա արդյունքում ռուսահայերի ակն-

33

Կալվոր շարժում սկսելու վտանգի անցած առնանց առաջացրել են Կովկասի փոխարքա Վլորնցով Դաւկովի²¹ հետարրությունը խնդրի նկատմամբ:

Կանխելու համար նման վասնզը, ինչքանով ինձ է հայտնի, եվրոպական կառավարությունները, որոնք վեցին շրջանում ևս հետաքրքրում են դրանով բազմիցս խորհուրդ են սկզել Բարձ Դուանը՝ համարատասխան բարեփոխում ներ անցկացնել: Թվում է, որ չնայած հայերը չեն դահանջում ինքնավարություն, որ անիրականանալի կլիներ, բանզի նրանք ներկայացնում են այդ տարածների խառը բնակչության ոչ ավելի՝ բան 39 տոկոսը, դահանջում են Լիբանանի օրինակով կառավարիչների նշանակում, մասնակցություն տեղական վարչակազմի աշխատանքներին, ինչդեռ նաև՝ կյանքի և ունեցվածքի աղափողության հսկակ երաշխիքներ»:

Ապօղական

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատոմ 1829-1937թ., թուրքականական 16

18

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովաննի
Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարրոնիին
Հռով, 11 հունիսի 1913թ.

Հեռագիր
թիվ 3972

Քեռվինի մեր արքայական դեսպանն ինձ է ուղարկել հետևյալ հերածիք

«[Բերլինում] Ռուսաստանի դեսպանը տեղի կառավարությանը ևս ներկայացրել է Հայաստանում անցկացվելիք բարեփոխումների շուրջ մննարկումների մասին մի հեռազիր: Յագովը նրան դատախանել է, որ այդ մննարկումներին դեմք է մասնակցեն նաև Թուրքիայի ներկայացուցիչները: Նման դատախանով, փասուրեն Յագովը դարձասակամություն է հայսնել ընդունելու կոմս Բերքրուդին ներկայացրած Ձեր մուտքումները, ավելացնելով դրան քուրքական դատավիրակների մասնակցության հարցը»:

Հասարակում եմ քորի դասվիրակների մասնակցության անհրաժեշտությունը:

Ապօղական

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937 թթ., բորբոքամասի 16

19

Իւալիայի արտադրութեան գործեան նախարար Սահմանադրութեան
Կուսանականութեան վեհապետ Իւալիայի դեսպան Գարրենին
Հունիս, 12 հունիսի 1913թ.
Հեռացիր
Թիվ 3997

Պատասխանում եմ Ձեր թիվ 416 հեռագիրին։²

Հայկական բարեփոխումները մենք դեմք է օգտագործենք ցանկացած եղանակով Բարձր Դռանն աջակցություն ցույց տալու համար և, Գերմանիայի և Ավստր-Հունգարիայի հետ համաձայնությունը դադարանելով, բարյացակամ դիրք գրավենք Թուրքիայի նկատմամբ:

Մինչույն ժամանակ չդես է մոռանան, որ հետո բարեփոխումների անհատագությունը կապահպանվում է Օսմանյան կայսրությունը դադարեցնելու զիսավորումամբ:

Աան Զուլիան

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937 թթ., թուրքականակ 161:

3

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովաննի
Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարրոնիին
Հրամ. 12 հունիսի 1913թ.

Ենազի
թիվ 398

Այսեղի՝ ԱվտորՀոնգարիայի դեսպանն ինձ ասաց, որ կոմս Բերքոլդը կարգադրել է մարկիզ Պալլավիշինին²³ մասնակցել հայկական բարեփոխումների նորատակով գումարված դեսպանների հավաքին՝ դայնանով, որ դրանց մասնակցեն Թուրքիայի ներկայացուցիչները և այդ հննարկումները ելնեն Թուրքիայի տարածքային ամբողջականության դահդաննան և նրա կառավարության հանդեղ հարգանքի սկզբունքից:

Ձեր Գերազանցությանը ևս լիազորում եմ մասնակցելու դեսպանների հավաքին՝ նոյն դայտաներով։

Աան Օուլիան

ԻՎԱԶՄԴԱ, Թուրքիայի ռեստանարուն 1829-1937թ., բղբանակ 161:

21

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովանոն՝
Կոստանդնուպոլիսում Իտալիայի դեսպան Գարրոնիին
Հռոմ, 14 հունիսի 1913թ.

Հեռագիր

Քիվ 4037

Կոտորենսկին ինձ ծանոթացեց Սազոնովի²⁴ հետագրին, որտեղ նա նշում է, որ Գերմանիայի դեսպանի ուսադրությունն է հրավիրել բոլոր այն անհամարությունների վրա, որ կառաջացնի բուրգ ներկայացուցի մասնակցությունը հայկական խնդրի համար գումարվելիք դեսպանների հավաքին:

Թուրք ներկայացուցի ներկայությունն առաջ կրերի խառնաւչփոթություն, որի արդյունքում հարցի լուծումը կձգձգվի, իսկ հայկական վիլայեթների դրությունն այնովհետ է, որ ոչ մի հետաձգում չի կարելի բոլյ տալ. Բացի այդ, թուրք ներկայացուցի մասնակցությունը խորը հիասքափություն կառաջացնի հայկական վիլայեթներում, մինչքո ոռոսական նախաձեռնության նորատակը խաղաղության հաստատում է այդ ցանցներում:

Ուստան կառավարությանը թվում է, թե այս հարցում բոլոր տերություններ համակածիք են, և ընդհանուր համաձայնությամբ նրա կողմից մշակված ընդունվելիք բարեփոխումների ծրագրը, երբ ներկայացվի Բարձր Դռանը, անհետանի չի լինի:

Կոտորենսկուն դատավանեցի, որ կցանկանայի խորհրդակցել մյուս տերությունների հետ, սակայն վախենում եմ, որ Թուրքիայի մասնակցության հարցի բննարկումը կարող է վիճաբանություն առաջացնել Կոստանդնուպոլիսի դեսպանների միջև:

Կոտորենսկին դատավանեց, որ միշտ էլ այդպես է եղել:

Սան Ջովանոն

ԻԱԳՆՊԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թ., բորապանակ 161:

22

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովանոն՝
Կոստանդնուպոլիսում Իտալիայի դեսպան Գարրոնիին
Հռոմ, 14 հունիսի 1913թ.

Հեռագիր

Քիվ 4042

Բեղլինում մեր դեսպանն ինձ է ուղարկել հետևյալ հաղորդագրությունը.
«Գերմանական կառավարությունը Կոստանդնուպոլիսի իր դեսպանին սկզբ է նոյն կարգադրությունները, ինչ Զերդ Գերազանցությունը և կոնս Բերթոլդը: Ուստական առաջարկության վերաբերյալ Զվերեքնեկանի²⁵ կողմից ուղարկված

Իտալիա դիվանագիտական վագերագրեր. 1913

բազմաթիվ հեռագրերին Յագովը դատասխանել է, որ նա համաձայն է Իտալիայի արած առաջարկին, այսինքն՝ Հայաստանում անցկացվելիք բարեփոխումների ծրագրը կազմելիս դեմք է հաւաքի առնվի Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը և կառավարության հեղինակությունը»:

Սան Ջովանոն

ԻԱԳՆՊԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թ., բորապանակ 161:

23

Կոստանդնուպոլիսում Իտալիայի դեսպան Գարրոնին՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովանոնին
Կոստանդնուպոլիս, 14 հունիսի 1913թ.

Հեռագիր

Քիվ 431

Այսեղի իմ բոլոր գործընկերները, բացառությամբ Անգլիայի դեսպանի, որը մինչ այժմ հրահանգմեր չի սացել իր կառավարությունից, լիազորվել են նաև նակագել Ուստասանի կողմից առաջարկված՝ Հայաստանում անցկացվելիք բարեփոխումների մասին բննարկմանը: Իմ գործընկերները, այդ թվում և Ուստասանի դեսպանը, եկել են այն կարծիքին, որ օսմանյան կառավարության ներկայացուցին հնարավորություն տրվի մասնակցել այդ բննարկումներին:

Պարուն Գիրսը²⁶ գտնում է սակայն, որ նախան լսումների սկսումն անհատեց է, որդեսզի դեսպանները նախադես հավաքվեն և մտնեն փոխանակություն կատարեն:

Պալլավիշինին և Վանգենհայմը կարծում են, որ մենք մեր հերքին՝ նախան մյուս դեսպանների հետ հանդիդելոր դեմք է առանձին հավաքվեն որուելու համար մեր դիմուրումը:

Գարրոնի

ԻԱԳՆՊԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թ., բորապանակ 161:

24

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովանոն՝
Կոստանդնուպոլիսում Իտալիայի դեսպան Գարրոնիին
Հռոմ, 17 հունիսի 1913թ.

Հեռագիր

Քիվ 4095

Այսեղի՝ Ուստասանի դեսպանը Սազոնովի անունից ինձ ներկայացեած հետևյալ հաղորդագրությունը.

«Մի եղանակ Գրեյը²⁷ հայկական բարեփոխումների առնչությամբ մեզ է ուղարկել իր տեսակետները, որին հետևելու են այս գործընթացի ժամանակ:

33

Հս այլմ, նա առաջարկում է Թուրքիային առաջարկել՝ մշակել հայկական վիլայեթներում անցկացվելիք բարեփոխումների սեփական ծրագիր, որը կդրվի դեսպանների բննարկմանը, և այդ ծրագրի հիման վրա դեսպանները կմշակեն իրենց բաղաբանությունը Բարձր Դուռ հանդիպ:

Պատասխաննեցին, որ ննան մոտեցումը չի բվում թե գործնական է, քանզի այն նախագիծը, որի հիման վրա դեմք է անցկացվեն բննարկումները, արդեն իսկ մշակվել և ընդունվել է բուրժերի կողմից 1895թ.: Դրանում փոփոխություններ մասնաւոր հարցում, երբ համաձայնություն ձեռք կրերվի տերությունների միջև, այդժամ, անունու Բարձր Դուռը կտեղեկացվի, և նրան կառաջարկվի դիմակումներ կատարել: Հեռու լինելով սովորանի հեղինակությունն ու փառք նսեմացնելու կարծում ենք, որ անհաղղա բարեփոխումները միայն կարող են ամրապնդել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, և, ելնելով տեղի դժվար իրավիճակից, ըստ բարեփոխումներ անցկացնելու մեր նախաձեռնությունն ունի բացառապես բարեկամական ուղղվածություն Թուրքիայի հանդիպ»:

Այս հաղորդագրությունն ուղարկեցի նաև Բոլլատիին²⁸ և Ավառնային²⁹ ավելացնելով. «Կարծում եմ, որ Ռուսաստանի այս առաջարկն ընդիանուածնամբ կարելի է ընդունել: Անհրաժեշտ է, սակայն, որ Եղյակ դաշինքը միակարծիք լինի այս հարցում, ուստի խնդրում եմ Ձեզ դարձել տեղի արզունական կարծիքը»:

Սան Զովիանն

ԻՎԱՆԴՐԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թ., բորբականակ 161:

25

Կուսանդնություն Իսալիայի դեսպան Գարրոնին՝
Իսալիայի արտաքին գործների նախարար Սան Զովիանոյին
Կուսանդնություն, 18 հունիսի 1913թ.

Հեռագիր

Քիվ 446

Հայաստանում անցկացվելիք բարեփոխումների մասին երեկ գրություն Պալլավիշինի և Վանգենհայմի հետ: Երկուսն էլ ինձ ասացին, որ լավ կլիներ որու ժամանակ սղասել, նախան Բարձր Դուռը դեսպանների կողմից դիմելը: Անզիայի մեր գործընկերը մինչ այժմ իրահանգներ չի սացել իր կառավարությունից:

Պալլավիշինի և Վանգենհայմն ասացին նաև, որ առավել նորատակահամար են համարում, որդեսզի դեսպանների հավաքը որդես բննարկումների հիմք ընդունի 1895թ. հոկտեմբերի 20-ի դեկտեմբեր: Այն ավելի հետևությամբ կը նույնիք Բարձր Դուռ կողմից և բացի այդ, այն ժամանակին հավանության է

արժանացել բոլոր դեսպանների կողմից և որու դրույթներ նոյնիսկ կյանքի են կոչվել: Այնուհետև համաձայնվեցինք, որ նախան դեսպանների գլխավոր հավաքը դեմք է մի նիս անենք նաև մենք երեխով: Ինձ ասացին սակայն, որ դեմք չէ ըստել, և լավ կլինի որդեսզի դեմքներ իրենց հունով ընթանան:

Գարրոնի

ԻՎԱՆԴՐԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թ., բորբականակ 161:

26

Իտալիայի արտաքին գործների նախարար Սան Զովիանոն՝
Կուսանդնություն Իտալիայի դեսպան Գարրոնիին
Հուն, 23 հունիսի 1913թ.

Հեռագիր
Քիվ 4279

Ֆրանսիայի դեսպանատան դասախսանատուն հարտությար եկել է ինձ մոտ և առաջարկում էր, որդեսզի վեց մեծ տերությունները նոյն բովանդակությամբ ուղեւած եղեն Բարձր Դուռը՝ վերջինիս դարտավորեցնելով ժամանակավոր մի հանձնաժողով ստեղծել, որը օսման վերահսկչի գլխավորությամբ կուրարկվի Հայաստան՝ ջարդերն արգելելու և կարգ ու կանոն հաստաելու համար:

Պատասխաննեցի, որ առաջարկը գործնականում կիրառելի է, և Իտալիան կմիանա դրան, եթե բոլոր վեց տերությունները համաձայնություն տան:

Սան Զովիանն

ԻՎԱՆԴՐԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թ., բորբականակ 161:

27

Իտալիայի արտաքին գործների նախարար Սան Զովիանոն՝
Կուսանդնություն Իտալիայի դեսպան Գարրոնիին
Հուն, 25 հունիսի 1913թ.

Հեռագիր
Քիվ 4324

Բերլինում մեր դեսպանը հեռացել է.

«Այսեղի՝ Ֆրանսիայի դեսպանը դիմել է նաև Գերմանիայի կառավարությանը՝ Բարձր Դուռն ուղարկելիք ուղեւած համար: Յագովն առանց հսակեցնելու [մանրանասները] դրականութեն է արտահայտվել նշելով, որ կմիանա դրան, եթե բոլոր տերությունները համաձայնվեն և եթե վսահ լինեն, որ Թուրքիան կհանձնայնվի այդ առաջարկին: Յագովը կարծում է, որ Հայաստանի հարցում Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև հսակ հանձնայնություն չկա»:

Սան Զովիանն

ԻՎԱՆԴՐԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թ., բորբականակ 161:

28

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովանին՝
Կուսանդնուղղուում Իտալիայի դեսպան Գարրոնիին
Հռոմ, 26 հունիսի 1913թ.

Հեռագիր
թիվ 4346

Հնարավորություն ունեցած հանդիդել Թուրքայի դեսպանի հետ, որը փորձում է վստահեցնել, որ Ֆրանսիայի՝ Հայաստան ուղարկվելիք վերահսկիչ [իանձնաժողովի] (այնտեղ անկազմություններն արգելելու համար) առաջարկը բխում է Թուրքայի շահերից:

Սան Ջովանի

ԻԱԳՆՊԱ, Թուրքայի դեսպանատուն 1829-1937թթ., թղթադրանակ 161:

29

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովանին՝
Կուսանդնուղղուում Իտալիայի դեսպան Գարրոնիին
Հռոմ, 29 հունիսի 1913թ.

Հեռագիր
թիվ 4420

Պարոն դե Մերեյն ինձ սսաց, որ դարոն Գիրսը Պալլավիչինիին տեղեկացրել է, որ Ռուսաստանը մտադիր է Հայաստանը դարձնել արտօնյալ մի նահանգ՝ ինչպես Լիբանանն է: Պալլավիչինիին և Վանքենիայը դեմ են այդ մտադրությանը: Մերեյը ցանկանում է իմանալ ին կաժիքը և, միևնույն ժամանակ, հայտնեց, որ կոմս Բերքոլը ևս դեմ է դրան: Պատասխանեցի նրան, որ ռուսական մտադրությունն, իրոք, վսանգավոր է և այն կասեցնելու համար անհրաժեշտ է, որդեսզի Հայաստանում դադարեցվեն ջարդերն ու անկազմությունները, ուստի լավ կիմնի ընդունել ֆրանսիական առաջարկը:

Սան Ջովանի

ԻԱԳՆՊԱ, Թուրքայի դեսպանատուն 1829-1937թթ., թղթադրանակ 161:

30

Պետարուգում Իտալիայի դեսպան Կառլոսին՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովանոյին
Պետարուգ, 29 հունիսի 1913թ.

Հեռագիր
թիվ 891/244

Պարոն նախարար,

«Նովյե Վենյա» թերթի այսօրվա համարում տեղ է գտել մի հոդված, որում ներկայացվում են այն փոփոխությունները, որ կրում է Ռուսաստանի նկա-

մամբ իայ հասարակական կարծիքը: Ըստ այդ հոդվածի, 1908թ. Երիտրութական հեղափոխությունը հայերի մեջ այնովիս հույսեր եր արքանցրել, որ նամակ կարծում էին թե ուստով Թուրքիայում կկարողանան համախմբվել, դառնալ ազդեցիկ էրնիկական այնովիս միավոր, որ ձգողական կենտրոն հանդիսանար Ռուսաստանի և Պարսկաստանի հայ համայնքների համար: Նման հույսը հակառակական տաճարդություններ եր առաջ թերել: Սակայն հույսը մարեց, Երիտրութական վարչակազմն ավելի դաժան գտնվեց, բան աբրուկամիջյանը, և հայերը սկսեցին նայել Ռուսաստանին, որդես այն միակ տերությանը, որն ի վիճակի է վրկել իրենց: Հայերի նման մոտեցումը հետազոյում կարող է իրականացնել դառնալ, եղակացնում է «Նովյե Վենյա»: Հորվածագրին նման եղակացնության գալու համար հիմք է հանդիսացել ուսամես այն գեկոյցը, որ վեցիր ունեցել է հայերի առաջնորդը Ռումանիում: Նա հիշեցրել է, որ կայսեր ժիշոսաւարում առկա է նաև «Հայաստանի նահանգների տեր և ժիրակալ» ժիշոսը, բազմից վստահեցրել է Ռուսաստանի հանդեր հայերի հավատարմությունը և ցանկություն հայսնել, որ Փոքր Ասիայում անցկացվելիք բարեփոխումներն իրականացվեն Ռուսաստանի նախաձեռնությամբ և հսկողությամբ:

Այս փասն ինքնին տա կարեռ է, քանզի բավական երկար ժամանակ ուսահայերն այսչափ բարեկամական բառաղացաւ չին օգտագործում իրենց ուստի ժիրակալների հասցեին, սակայն վաղ է եղակացնել, որ նման տաճարդություններ կան նաև Թուրքայի հայերի ցանում: Վերջինների դաշտաները հիմնականում սոցիալ-սնէտսական են: Եթե թուրքական կառավարությունն իր մեջ ուժ չգտնի Արևելյան Անատոլիայում արդարություն հաստելու համար, որին, ի դեպ, ուղղված է բարեփոխումների այս ողջ գործընթացը, աղա հայերն, ամենայն հավանականությամբ, իրենց հայացները կողդեն դեմի Ռուսաստան: Դա կիմնի դաշտանության անհրաժեշտության արդյունք, քանզի թուրքահայերի ցանում ազգային ձգումները մինչ այժմ հաստաված չեն և չունեն համակազմված քննոյք: Սակայն, եթե չենք խոսում դեռի Ռուսաստան հայերի կողմնորոշման մասին, կարող ենի վսահարար ասել, որ Բարձր Շուան նախարարական բաղադրանությունը և տերությունների կողմից նման բաղադրանության հանդեր զիջողական վերաբերմունքը կիանգեցնի նրան, որ հայերը Ռուսաստանին կիցեն՝ որդես միակ վրկչի: Ամեն դեմքում հայերի դիրքուում փոփոխության համար դեսերտության թերթի արտահայտած գոհունակությունը վաղաժամ է, և, նոյնիսկ, կարող է չիրականանալ աղազմայում, եթե Բարձր Շուան անհաղղադ բարելավի իր վաշչակարգը այդ վեց վիլայեթներու և նշանակի հմուտ նահանգագլետեր՝ տալով նրանց լայն իրավունքներ:

Կառլոսի

ԻԱԳՆՊԱ, Տղագրված դիվանագիտական փաստաթուրեր, հ. LXVI, թիվ 560:

1913

31

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպան Գարրոնին՝
Իսալիայի արտաքին գործերի նախարար Սահ Զովիանոյին
Կոստանդնուպոլիս, 30 հունիսի 1913թ.

Հեռագիր

թիվ 3524/654

Պարոն նախարար,

Պատիվ ունեմ Ձեր Գերազանցության ուղարկելու Ռուսաստանի դեսպանան առաջին դրագոմանի մշակած բարեփոխումների այն նախագիծը՝³⁰ որը դրան Գիրսն այսօր ներկայացրեց դեսպանների հավաքին: Որում այդ փաստաթուղթը նենության հանձնել հատուկ հանձնաժողովին, որը կազմված կլինի յուրաքանչյուր դեսպանատան մեկ աշխատակցից: Ռուսաստանի և Անգլիայի դեսպանները լիազորել են իրենց առաջին դրագոմաններին, իսկ մյուսները՝ ավելի ցածր դաշտների: Ես ևս, ինչպես և Ավստրիայի և Գերմանիայի դեսպանները, նորատակահարմար համարեցինք երկրորդ տարերակը: Լիազորել եմ կավալեր Չարենցին, որը բավական երկար ժամանակ աշխատում է այստեղ և բազմանոր է խնդրին: Նրան կարգադրել եմ նենարկումների ժամանակ չցուցաբերել շետքած նախաձեռնություն, մշակելու համագործակցել Ավստրիայի և Գերմանիայի իր գործընկերների հետ, գործադրել բոլոր ջանքերը, որոյնք հաղթանակի բարեփոխումներին բուրական նկարագիր տալու սկզբունքը, (ինչու դա հաստատեց 1895թ. հոկտեմբերի 20-ի դեկտեմբեր), չքացնել իր ընդդիմադիր կեցվածքը Ռուսաստանի բոլոր այն նախաձեռնությունների առնչությամբ, որոնց միջոցով փորձ կարվի Հայաստանին տալ Լիքանանի օրինակով մի կարգավիճակ:

Հավատացած եմ, որ այստիսով ներկայացրել եմ Ձեր Գերազանցության կարգադրությունները:

Գարրոնի

ԻԱԳՆՊԱ, Տողագրած ովկանագիտական փաստարքեր, հ. LXVI, թիվ 559:

32

Իսալիայի արտաքին գործերի նախարար Սահ Զովիանոն՝
Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպան Գարրոնիին
Հոռո, 30 հունիսի 1913թ.

Հեռագիր

թիվ 4454

Բերլինի մեր արքայական դեսպանը հեռագրել է հետևյալը.

«Այստեղ ևս դեմ են այն զաղափարին, որ Հայաստանը դեմք է Լիքանանի օրինակով դաշնել արտօնյալ նահանգ: Յազովն ինձ ասաց, որ չի կիսում Բեր-

լիլի այն կարծիքը, ըստ որի նա դեմ չէ նենության առնել Մանելեսամի³¹ ծագ-գիրը: Յազովը կածում է, որ այս հարցում չափազանց խոհեմ դեմք է լինել»:

Հաստատում եմ Յազովի կարծիքը:

Սահ Զովիանոն

ԻԱԳՆՊԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թ., բորագիրանակ 161:

33

Իսալիայի արտաքին գործերի փոխնախարար Ակալեան՝
Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպան Գարրոնիին
Հոռո, 1 հունիսի 1913թ.

Հեռագիր

թիվ 4475

Տեղեկացնում եմ ի գիտություն, որ Մերեն այսօր ինձ ասաց, որ Բերքուլը հավանություն է ովել ֆրանսիական առաջարկին Փոքր Ասիայի ուր վիլայեթ ներ ուղարկել թուրք հատուկ կոմիսար:

Ակալեան

ԻԱԳՆՊԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թ., բորագիրանակ 161:

34

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպան Գարրոնին՝
Իսալիայի արտաքին գործերի նախարար Սահ Զովիանոյին
Կոստանդնուպոլիս, 2 հունիսի 1913թ.

Հեռագիր

թիվ 477

Դեսպանաների ներկայացուցիչների հավաքը, որը դեմք է նենարկել Մանելեսամի ծագիրը, հետաձգմեց մինչև վաղը: Ձեզ արդեն ուղարկել եմ այդ նախագիծը, որի համար իհմ են հանդիսացել 1895թ. դեկտեմբեր, Թուրքիայի՝ Եվրոպական վիլայեթների մասին 1880թ. ընդունված օրենքը, և, նոյնիսկ, Լիքանանին առնչվող արձանագրության դրույթները: Եթե ընդունվի այս ծագիրը, դա նշանակում է Արևելյան Անատոլիայի վիլայեթներին տալ լիքանան աշխատարկություն:

Պալլավիշինին, Վանգենիայմը և ես որոշեցինք միանգամից չընդդիմանաց ծագիր բնարկմանը, որոյնք առաջ չընեմ տեղի հայկական կոմիտեների հուզումը և չմասնակցենք Անգլիայի խաղին, որը, դեմ լինելով Հայաստանի ինքնավարությանը, նախընտրում է, որ դրա դեմ առաջինը հանդիս գտն տերությունները: Հատուկ հանձնաժողովում ընդրբկված մեր ներկայացուցիչներին կարգադրել ենք առաջին ընդգծված ընդդիմադիր կեցվածք չընդունել, և ժամանակ շահելու նորագույն Մանելեսամին հղել բազում հարցեր:

Մամդելսամի ծրագրի առաջ գալի ավելի բարդացրեց առանց այն էլ բարդ իրավիճակը: Այժմ Հայաստանի հետ կաղված դեղությունը երկու ձևով կարող են զարգանալ. կամ Ռուսաստանը, տեսնելով, որ չի կարողանում դիմադրել իր ծրագրի հանդել առաջ եկած ընդդիմությանը, կիայտարակի, որ դրու է գալիս խաղից, ինչն էլ առաջ կրերի այնպիսի հուզումներ, որ նրա համար հիմք կիանդիսան ռազմական միջամտություն կատարել, կամ, դնդելով իր առաջարկի վրա, նա կիասմի հաջողության՝ սահմանով հարդողի փառք, որն էլ Գերմանիային հնարավորություն կտա նման սցենար մշակել նաև Կիլիկիայի հայերի համար:

Թե՛ մեկ և թե՛ մյուս դեղբում ասիական Թուրքիայի մեծ խնդիրը սեղանին կորվի իր ողջ բովանդակությամբ:

Գարրնի

ԻԱԳՆՊԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թ., թղթադրամակ 161:

35

Իտալիայի արտաֆին գործերի փոխնախարար Սկալեան՝
Կուսանդմուղղուսում Իտալիայի դեսպան Գարրնիին
Հռոմ, 3 հուլիսի 1913թ.

Հեռագիր

թիվ 4527

Տեղեկացնում եմ ի գիտություն, որ դարուն Ֆլուուլն³² ինձ հաղորդեց, որ գերմանական կառավարությունը ևս հավանություն է սկել ֆրանսիական առաջարկին՝ Փոքր Ասիայի ութ վիլայեթներ ուղարկել հատուկ կոմիսար, որը դեմք է լինի թուրքահղացակ:

Սկալեան

ԻԱԳՆՊԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թ., թղթադրամակ 161:

36

Կուսանդմուղղուսում Իտալիայի դեսպան Գարրնին՝
Իտալիայի արտաֆին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Կուսանդմուղղուսում, 4 հուլիսի 1913թ.

Հեռագիր

թիվ 481

Հայաստանում անցկացվելիք բարեփոխումների հարցը բննարկելու համար երեկ տեղի ունեցավ հատուկ հանձնաժողովի նիս: Այն վարում էր Ավստր-Հունգարիայի ներկայացուցիչը, որը բացման խոսից հետո հայտարակեց, որ հաւաքի առնելով այն փասրը, որ Բարձր Դուռը դեսպաններին է ներկայացրել

Օսմանյան կայսրության ողջ տարածքում բարեփոխումներ անցկացնելու սեփական ծրագիրը, բննարկումները դեռև է սկսել հենց այդ նախագծից:

Դեսպանների վերջին հավաքի ժամանակ ես ևս ասացի, որ լավ կիմնի Բարձր Դուռն առաջարկած բարեփոխումների ծրագիրը Մամդելսամի ծրագրի հետ միասին ներկայացնել հատուկ հանձնաժողովի բննարկմանը: Հատուկ հանձնաժողովը, չկարողանալով համաձայնության գալ այս հարցի ուրաց, դադարեցրեց երեկով աշխատանքները:

Պալլավիշինին և Վանգենհայմը կիսում են իրենց ներկայացուցիչների դիրքուումը, որն ինձ էլ է ձիւ բվում: Ամեն դեղբում հարցը կբննարկվի հաջորդ նիստին:

Կցանկանայի տեղեկացնել նաև, որ Թուրքիայի արքութեախարակի գրասենյակի դեկավար մեր առաջին դրագումանին խնդրել է, որդեսզի ինձ ասի, որ թուրքական կառավարությունը հաւաքի չի առնի հատուկ հանձնաժողովի այս բննարկումները, բանզի արդեն սկսել է գործողության մեջ դնել բարեփոխումների իր ծրագիրը և հուսով է, որ իտալական կառավարությունը կաջակցի իրեն:

Գարրնի

ԻԱԳՆՊԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թ., թղթադրամակ 161:

37

Իտալիայի արտաֆին գործերի փոխնախարար Սկալեան՝
Կուսանդմուղղուսում, Լոնդոնում, Փարիզում, Պետերբուրգում և Բեռլինում
Իտալիայի դեսպաններին
Հռոմ, 5 հուլիսի 1913թ.

Հեռագիր

թիվ 4545

Այսեղի՝ Թուրքիայի դեսպանն ինձ ներկայացրեց մի հուշագիր, որում Սահմուդ փառայի կառավարության կողմից մշակված ներքին բարեփոխումների համառու նկարագրից հետո նշվում է, որ ներկա կառավարությունը որդեգրել է այդ նույն սկզբունքները և բանի որ արդեն որոշվել են արևելյան վիլայեթներ ուղարկվելիք յոր զորագների դաշտունաները և տեղի ժամանակերի երկու վերահսկները, ուստի նրանք ուսուվ կատարել են իրենց դարտականությունները և նրանց լիազորությունների մեջ կմտնեն ժանդարմերիան, արդարադատությունը, հասարակական աշխատանքներն ու զյուղանետությունը:

Հուսագրում նշված է նաև, որ օսմանյան նախարարությունները կունենա օսարելկրացի խորհրդականներ և վերահսկներ, իսկ որու վաշչություններու աշխատանքի կը նրունվեն օսարելկրացի աշխատակիցներ:

Սկալեան

ԻԱԳՆՊԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թ., թղթադրամակ 161:

38

Իտալիայի արտաքին գործերի փոխնախարար Ակալեան՝
Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարրոնիին
Հուն, 9 հուլիսի 1913թ.

Հեռագիր

թիվ 4642

Պետքուրզի մեր արքայական դեսպանը հեռագրել է.

«Սագոնվեն ինձ ասաց, որ դատասվում են ռուսական դեսպաններին մի շրջաբերական ուղարկել, որդեսզի նրանք տեղի կառավարություններին ծանոթացնեն հայկական քարեփիսումների նկատմամբ ռուսական դիրքություններին ծանոթացնեն: Նման շրջաբերականի իմաստն, անտես, վսահության մթնոլորշի ձևավորումն է ռուսական անկեղծության նկատմամբ, ինչորու նաև՝ քարեփիսումների անցկացման հրատարությունն ընդգծելը»:

Ակալեան

ԻՍԳՆՊԱ, Թուրիայի դեսպանատուն 1829-1937թ., բորապանակ 161:

39

Իտալիայի արտաքին գործերի փոխնախարար Ակալեան՝
Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարրոնիին
Հուն, 9 հուլիսի 1913թ.

Հեռագիր

թիվ 4646

Վիեննայի մեր արքայական դեսպանը հեռագրել է.

«Կոմս Բերթոլդն ինձ ասաց, որ Պալլավիշինին հատուկ հանձնաժողովի նիստերի մասին իրեն ուղարկել է նոյն տեղեկատվությունը, ինչ Զերդ Գերազանցությունը սացել է Կոստանդնուպոլիսի մեր արքայական դեսպանից: Նա ավելացրեց, որ Պալլավիշինին շատ անհանգուացած է այն ծանր իրավիճակով, որ առաջ է բերել Մանդելտամի ծրագիրը»:

Ակալեան

ԻՍԳՆՊԱ, Թուրիայի դեսպանատուն 1829-1937թ., բորապանակ 161:

40

Իտալիայի արտաքին գործերի փոխնախարար Ակալեան՝
Կոստանդնուպոլսում, Լոնդոնում, Փարիզում, Պետերբուրգում և Բեռլինում
Իտալիայի դեսպաններին
Հուն, 9 հուլիսի 1913թ.

Հեռագիր

թիվ 4647

Վիեննայի մեր արքայական դեսպանը հեռագրել է.

«Կոմս Բերթոլդն ինձ ասաց, որ լիովին կիսում է հատուկ հանձնաժողովով Ավստր-Հունգարիայի ներկայացուցչի տեսակետն առ այն, որ հանձնաժողովը քարեփիսումների հարցի բննարկման համար դեսք է հիմք ընդունի Բարձ Դաշն առաջարկած նախագիծը և ոչ թե՝ Մանդելտամի ծրագիրը»:

Ակալեան

ԻՍԳՆՊԱ, Թուրիայի դեսպանատուն 1829-1937թ., բորապանակ 161:

41

Իտալիայի արտաքին գործերի փոխնախարար Ակալեան՝
Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարրոնիին
Հուն, 10 հուլիսի 1913թ.

Հեռագիր

թիվ 4674

Որդես անձնական տեսակետ տեղեկացնում եմ Զերդ Գերազանցությանը, որ իմ կարծիքով Հայաստան ուղարկելիք հատուկ կոմիսարը դեսք է քուր լինի և ոչ թե եվրոպացի, որը կարող է վսանգավոր նախադեմ դառնալ: Պեսք է ջանի ջխնայել՝ Հայաստանում ջարդերը կանխելու համար, իսկ ինչ վերաբերում է քարեփիսումներին, աղա դեսք չէ շատ դնդել դրանց վրա, մինչև Թուրիայի բողարկալ մասնատումը:

Ակալեան

ԻՍԳՆՊԱ, Թուրիայի դեսպանատուն 1829-1937թ., բորապանակ 161:

42

Իտալիայի արտաքին գործերի փոխնախարար Ակալեան՝
Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարրոնիին
Հուն, 11 հուլիսի 1913թ.

Հեռագիր

թիվ 4697

Ին թիվ 4642 հեռագիրը.³³

Պետքուրզի մեր արքայական դեսպանը հեռագրել է.

«Հայկական քարեփիսումների մասին ռուսական շրջաբերական այսօն կուղարկվի արտերկի ռուս դեսպաններին: Դրանում ասվում է, որ Ռուսաստանը

13
12

Դայոց ցեղաստանություն. դիվանագիտական վավերագրեր դեմ է Թուրքիայի մասնամանը և համոզված է, որ նրա տարածմային ամբողջականությունը մեծ հաշվով կառված է հայկական նահանգներում խաղաղության հաստատման հետ, որը, սակայն չի իրագործվի, եթե մեծ տերություններն իրենց ձեռքը չառնեն բարեփոխումների անցկացման այս գործընթացը, որ կայսերական կառավարությունը բազմից ներկայացրել է նրանց ուսադրությանը: Ռուսական կայսրությունը չի կարող հանդուժել անարխիայի այն իրավիճակը, որը կարող է վտանգավոր հետևանքներ ունենալ Կովկասում: Վերջին նորությունները հաստատում են բրեերի հումկու սղառնալիքները: Տեղական քուրքական իշխանությունների անփորձությունն ու բոլորությունն ահազանգ են այնպիսի իրադարձությունների, որոնց նկատմամբ Ռուսաստանը չի կարող անտարել մնալ: Նման իրավիճակում տերությունների միջև հստակ համաձայնությունն անհրաժեշտ է՝ հետագա դժվարությունները կանխելու համար»:

Սկալեա

ԻԱԳՆՊՀԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., բրադանակ 161:

43

Իսալիայի արտաքին գործերի փոխնախարար Սկալեան՝
Կուսանդնությունում Իսալիայի դեսպան Գարրոնիին
Հռոմ, 11 հունիսի 1913թ.

Հետազիր
Քիվ 4700

Լոնդոնի մեր արքայական դեսպանը հեռացրել է. «Երկու օր առաջ դարձն Գրեյս ինձ ասաց, որ իր կածիքով Հայաստանում անցկացվելիք բարեփոխումների համար նվազագույնը, որ կարելի է անել՝ 1895թ. բարեփոխումների ծրագրի ընտրյունն է, քանզի իրավիճակն այդ ժամանակից ի վեր չի փոխվել և նույնիսկ վատացել է: Ինչ վերաբերում է Կայսրության ողջ տարածում բարեփոխումներ անցկացնելու հարցին, առա նղատակահարմար է ուսումնասիրել Բարձր Դուռը կողմից ներկայացված նախագիծը»:

Սկալեա

ԻԱԳՆՊՀԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., բրադանակ 161:

Իտալական դիվանագիտական վավերագրեր. 1913

44

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոն՝
Կուսանդնությունում Իտալիայի դեսպան Գարրոնիին
Հռոմ, 12 հունիսի 1913թ.

Հետազիր
Քիվ 4729

Հաստատում եմ, որ հասուկ հանձնաժողովում Հայաստանի բարեփոխումների համար առաջինը ընտրյան առնվի Բարձր Դուռը ներկայացրած նախագիծը:

Սան Ջովիանո

ԻԱԳՆՊՀԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., բրադանակ 161:

45

Կուսանդնությունում Իտալիայի դեսպան Գարրոնին՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Կուսանդնությունում, 12 հունիսի 1913թ.

Հետազիր
Քիվ 508

«Խստաների խորհուրդը, քննարկելով Հայաստանի բարեփոխումների հարցը, կարծում է, որ հասուկ հանձնաժողովը կարող է շարունակել իր աշխատանքները՝ քննության առնելով բարեփոխումների ռուսական և քուրքական տարբերակները միաժամանակ: Հանձնաժողովը գումարել է երեք նիստ՝ առանց գործնական արյունի հասնելու: Մինչ այժմ քննարկել են ռուսական նախագծի առաջին հոդվածները՝ դրանք համեմատելով քուրքական նախագծի համադարասախան հոդվածների հետ:

Գարրոնի

ԻԱԳՆՊՀԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., բրադանակ 161:

46

Կուսանդնությունում Իտալիայի դեսպան Գարրոնին՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Կուսանդնությունում, 16 հունիսի 1913թ.

Հետազիր
Քիվ 523

Տարբեր դեսպանատերին այսօր հասած տեղեկությունների համաձայն քուրքական երկու զորագումդ երեկ իջեցվել է Ռուդոսթրոյի ափ, ուր նրան լար նածավալ հաձակում են սկսել տեղի հայ բնակչության նկատմամբ՝ մեղադրելով նրանց բուլղարացիների կողմից բարձր ցագակմանն աջակցելու մեջ:



Քանի որ ինձ տեղեկացվեց, որ Կոստանդնուպոլիսից բաշխրովությունը են ուղարկվում Վերոհիշյալ խաղաք հայերի դեմ դայխարելու համար, իսկ այդտեղ հայերի թիվը տար հազարի է համում, ես անհաղաղ այդ փաստի վրա հրավիրեցի խաղաղական գործերի ժնօտնի ուսարդությունը՝ հորդորելով նրան բոլոր միջոցներով կանխել հայերի դեմ ուղղված գործողությունները։ Նա ինձ վստահեցրեց, որ այդ բռվանդակությամբ կարգադրություն կուղարկի տեղի բուրժական իշխանություններին։ Նրան ասացի նաև, որ եթե հանկարծ ինձ տեղեկություններ հասնեն, որ մեր արքայական հղատակների կյանքը որու չափով վսանգված է, առաջ անհաղաղ Ռոդոսը կուղարկեմ մեր ռազմանավերից մեկը, որն այս դահին հենց այդ ափերի մոտ է գտնվում։

Գարոնի

ԽԱԳՆՊԴԱ, Քաղաքական տարf P 1891-1916թ., բորապանակ 332:

47

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոն՝
Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարոնիին
Հռոմ, 16 հուլիսի 1913թ.

Հեռագիր

թիվ 4829

Բեռլինի մեր արքայական դեսպանը հեռագրել է.

«Հայաստանում անցկացվելիք բարեփոխումների մասին ոռոսական ցցարերական այս երեկո չի հաղորդվել գերմանական կառավագրությանը, որը դնդում է Կոստանդնուպոլսում իր դեսպանի արդեն արած առաջարկը՝ որդեռ քննակումների հիմք քննության առնել ոռոսական և բուրժական նախագծերը միաժամանակ։»

Սան Ջովիանոն

ԽԱԳՆՊԴԱ, Թուրքայի դեսպանատուն 1829-1937թ., բորապանակ 161:

48

Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարոնիին՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Կոստանդնուպոլիս, 18 հուլիսի 1913թ.

Հեռագիր

թիվ 531

Վանգենհայմը դժգոհում էր, որ հատուկ համաձայնորդվի նիստի ժամանակ իտալացի, գերմանացի և ավստրիացի դասվիրակները որու հարցերի ուրախամաձայնեցված չեն գործել։ Նորից կարգադրեցի Քարերին, որ յուրաքանչ

յուր նիստից առաջ նա հանդիմի իր գործընկերների հետ և համաձայնեցնեն իրենց դիրքորոշումները։ Այդ բննարկումները, սակայն, ակադեմիական բնույթ են կրում, որովհետև Վանգենհայմն ինձ բանից կրկնեց, որ հանձնաժողովում իրենց աշխատանքը ժամանակ ձգելու նղատակ ունի, բանզի իր կառավարությունը մտադիր չէ ընդունել Մանդելեսամի ծրագիրը։

Գարոնի

ԽԱԳՆՊԴԱ, Թուրքայի դեսպանատուն 1829-1937թ., բորապանակ 161:

49

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոն՝
Կոստանդնուպոլսում, Լոնդոնում, Փարիզում, Պետերբուրգում, Բեռլինում և
Վիեննայում Իտալիայի դեսպաններին
Հռոմ, 22 հուլիսի 1913թ.

Հեռագիր

թիվ 5074

Այսեղի՝ Գերմանիայի դեսպանն իր կառավարության անունից ինձ է սկզել հետևյալ հաղորդագրությունը.

«Մենք գործունակությամբ ողջունել ենք Հայաստանում բարեփոխումներ իրականացնելու ոռոսական նախաձեռնությունը, բանզի համոզված ենք, որ այդ ցցաններում կարգ ու կանոն հաստանու համար, իրոք, միջոցառումներ են անհրաժեշտություն կամ ու կանոն նախաձեռնություն արդեն իսկ հաջողությամբ համոզել է Թուրքային բարեփոխումների անհրաժեշտությունը և սիրել է նրան՝ մշակել սեփական նախագիծը։ Բարեփոխումների ոռոսական նախագիծը, սակայն, որու առաջկությունների տեղի է տալիս։ Վեց վիլայեթների միավորումը մեկ Հայաստանի մեջ, որն, ի դեպ, չի ներառի բոլոր հայերին, Թուրքայի երեկո-աշխարհագրական մասնատմանն ուղղված առաջին հայլը կլինի, որն անխուսափելիորեն նման տամադրություններ կստեղծի նաև Փոքր Ասիայի, Սիրիայի և Արարիայի այլ ցցաններում, չնայած նրան, որ նման զարգացումները չեն մտնում նույն Սազոնովի մտադրությունների մեջ։ Եթելով այս տեսանկյունից և կարծելով, որ յուրաքանչյուր երկիր ինքը դեմք է վարի իր ներքին խնդիրները, նղատակահարմար ենք համարում, որ քննության առնվի բարեփոխումների բուրժական մի նախագիծ։ Համոզված ենք, որ բուրժական գործողությունների ձախողությունը հետո միայն դեմք է դնդեն, որ բարեփոխումներն իրականացվեն համաձայն տերությունների կողմից մշակված ծրագրի։ Այժմ մենք ընդունենք կարող ենք խորհուրդ տալ Բարձր Դուռը՝ պարտին հասցնել 1895թ. ընդունած իր ծրագիրը։ Մեր համոզմամբ, այդ ծրագիրը ավարտին հասցնելու համար, դեմք է ստեղծել Թուրքայի գլխավորությամբ վերահսկողական մի հանձնաժողովը, որի անդամների կեսը կլինեն բուրժեր, իսկ մյուս կեսը՝ տերությունների ներկայացուցիչներ։

Նման հաճախաժողովը, որը նմնության կառնի հայերի ցանկություններն ու բողոքները, տեղական վաշչակազմի համար կմւակի գործողությունների ծրագիր, միևնույն ժամանակ քուրերի համար ցանկայի աղավեն կիհանդիսանա, իսկ տերությունների համար հսկողության իիհանայի միջոց: Ամեն դեղում, երկու նախագծերից մենք նախընտրում ենք քուրբական նախազիծը, որը, եթե հնարավոր է, կարող է լրացվել քիսունյա օգնականների ներգրավմամբ, ինչ- դեռ դա նախատեսված է 1895թ. դեկտեմբեր:

Պարոն Ֆլուսովն ուզեց իմանալ իմ կարծիքը, և ես նրան դատասխանեցի, որ հավատում եմ Ռուսաստանի մատուցույնների անկեղծությանը և համոզված եմ, որ նա այսօր չի ցանկանա խարաբել թուրքիայի ասիական մասի տարածքային ամբողջականությունը, սակայն Մանիկեցամի նախազիծն ինքնին, վատազավոր է, չնայած այն բոլոր դրական կողմերին, որ տեղ են գտել դրանում: Մյուս կողմից՝ գերմանական հաղորդագրության մեջ ակնարկվող վերահսկիչ հաճախաժողովն, իրոք, կարող է ազդեցիկ գործոն լինել, որը համարժեք կլինի Մանիկեցամի ծրագիրն: Պետք է միջոցներ գտնել, որդեսզի Ռուսաստանը գործունակությամբ ընդունի գերմանական այս ծրագիրը: Բացի այդ, իրոք գործողություններ դեմք է իրականացվեն, այլադեմ ջարդերն ու հալածաներն անխուսափելի կլինեն, որն էլ կարդարացնի Ռուսաստանի ներկա գործողությունները: Ամեն դեղում դարոն Ֆլուսովին վատազեցի, որ Իտալիան այս հարցում ևս ցանկանում է համաձայնեցված գործել իր դաշնակիցների հետ:

Սան Ջովիանո

ԻԱԳՆ-ՊԴԱ, Տղագրված դիվանագիտական փաստաթուր, հ. LXVI, թիվ 563:

50

Փախզում Իտալիայի դեսպան Ֆիստոնին՝
Իտալիայի արտաքին գործների նախարար Սան Ջովիանոյին
Փարիզ, 23 հուլիս 1913թ.

Հեռագիր

թիվ 539

Պարոն Պիֆոնը³⁴ ևս կիրառելի չի համարում Մանիկեցամի ծրագիրը և հայկական բարեփոխումների մասին ունի գրեթե նույն կարծիքը, ինչ որ դարոն Ֆլուսովը: Ինչու ինձ տեղեկացրեց դարոն Բերին,³⁵ դարոն Գրեյը ևս Պիֆոնի կարծիքն է:

Ֆիստոնի

ԻԱԳՆ-ՊԴԱ, Տղագրված դիվանագիտական փաստաթուր, հ. LXVI, թիվ 565:

51

Կուսանդնուղղուսում Իտալիայի դեսպան Գարրոնին՝
Իտալիայի արտաքին գործների նախարար Սան Ջովիանոյին
Կուսանդնուղղություն, 24 հուլիս 1913թ.

Հեռագիր

թիվ 561

Հայաստանի բարեփոխումների գործով հատուկ հաճախաժողովի նախօրեի նիսում, որը թվով յորեւորդի էր, գերմանացի և ավստրիացի դատվիրակները հանդիս եկան մի հայտարարությամբ: Մեր դատվիրակը, որ նախադես տեղյակ չեր դրա մասին և չուզենալով բաղաբական երանգ տա դրան, այդ դահին գերծ մնաց բացարություններ դահանջելուց, երբ նրան վերջացրին, տաղեց հայտարաբել, որ աջակցում է այդ ծրագիրն: Այս այդ հայտարարությունը:

«Ավստր-հունգարական և գերմանական դատվիրակները մնում են իրենց այն կարծիքին, որ հայերով բնակեցված վիլայեթներում անցկացվելիք բարեփոխումները դեմք է կիմնված լինեն օսմանյան օրենքների և 1913թ. հուլիսի 1-ին Բարձր Դատարան կողմից դեսպանաներին ուղարկած զիսավոր վերահսկիչների գործառույթները կարգավորելու մասին նորայի վրա, որոնք լիակատար դաշնելու համար անհրաժեշտ է քուրբական կառավարությունից դահանջել կոնկրետ լրացումներ: Նդատակահարմար է Բարձր Դատից դահանջել.

1. Համաձայնել, որ գոյուրյուն ունեցող օրենքների և գործառույթների, ինչ- դեռ նաև զիսավոր վերահսկիչների կողմից կատարված առաջարկների գործադրությունը վերահսկվի հատուկ այդ նորատակով կազմված եվրոպական մի հսկչ կառույցի կողմից.

2. Վիլայեթների վաշչակազմներում տեխնիկական խորհրդատունների ներգրավում.

3. Ոչ մուսուլման փորտամասնությունների համար այնպիսի երաշխիքներ, որ նրանք համամասնորեն ներկայացված լինեն զիսավոր խորհրդատունների օրենսդրական և ֆինանսական դարտականությունները կատարելու և կարգավորելու համար.

4. Համանման երաշխիքներ՝ նաև սանջակների վաշչական խորհրդատունների վերահսկած լինելու համար.

5. Այն վիլայեթներում, որ հայերը մեծամասնություն են, ստեղծել ոսկիկանական և ժանդարմերիայի խմբեր, որոնց աշխատանքներին կմասնակցեն նաև օստրելկացիները.

6. Վերացնել երական հեծելագործը.

7. Այն վիլայեթներում, որ հայերը մեծամասնություն են, դեմք է ընդունված ակզերունիքը, որ նրանք համամասնորեն զբաղեցնեն վաշչական դաշտուններ»:

Այսօր հաճախաժողովը նիս էր գումարել, որի ընթացքում հնարավոր չեղակալ որևէ համաձայնության գալ: Ավստր-հունգարացի և գերմանացի դա-

Դայոց ցեղաստանություն. դիվանագիտական վագերագրեր

Վիրակներն անսասան էին իրենց հայտարարության մեջ, ոռու դատվիրակն էլ իր նախագծից չէր ցանկանում որևէ զիջում կատարել: Հանձնաժողովի նիստն ավարտվեց հայտարարությամբ՝ ըստ որի դեսպանները կտեղեկացվեն իրավիճակի մասին:

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., բորապանակ 161:

52

Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Զուլիանոն՝
Կոստանդնուպոլիսում Իսալիայի դեսպան Գարրնիին
Հուն, 29 հունիսի 1913թ.

Հեռագիր
թիվ 5306

Պարոն դեսպան,

Ձեր թիվ 561 հեռագիրը³⁶ ուղարկել եմ արտերկի մեր դեսպաններին՝ դրան ավելացնելով հետևյալը.

«Ենր Գերազանցությունը կարող է համարատասխան կառավարություններին տեղեկացնել, որ մեր դաշնակիցների արած հայտարարության առաջին, հինգերորդ և վեցերորդ կետերը բավական լուրջ երաշխիքներ կարող են ստեղծել, և իմ կարծիքով կարելի է փորձնականորեն գործի դմել դրանք, նախքան Թուրքիայից ավելի արմատական բարեփոխումներ դահանջելը»:

Սան Զուլիանոն

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., բորապանակ 161:

53

Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Զուլիանոն՝
Կոստանդնուպոլիսում Իսալիայի դեսպան Գարրնիին
Հուն, 1 օգոստոսի 1913թ.

Հեռագիր
թիվ 5381

Վիեննայի մեր արքայական դեսպանը հեռագրել է.

«Կոմս Բերքոլդի հետ Հայաստանի բարեփոխումների հատուկ հանձնաժողովի նիստում ավստր-հունգարական և գերմանական դատվիրակների արած հայտարարության մասին գրութելիս նրա ուսւադրությունը բնետեցի այն փաստի վրա, որ Ձեր Գերազանցության կարծիքով դրա առաջին, հինգերորդ և վեցերորդ կետերը բավական լուրջ երաշխիքներ կարող են ստեղծել, և կարելի է փորձնականորեն գործի դմել դրանք, նախքան Թուրքիայից ավելի արմատական բարեփոխումներ դահանջելը»:

5 8

Իտալական դիվանագիտական վագերագրեր. 1913

Ինձ դատախանեց, որ խնդրի առիթով մշտական կարի մեջ է գերմանական կառավարության հետ և անդայման նրանց կտեղեկացնի նման նոտեցման մասին»:

Սան Զուլիանոն

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., բորապանակ 161:

54

Կոստանդնուպոլիսում Իտալիայի դեսպան Գարրնիին՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Զուլիանոյին
Կոստանդնուպոլիս, 4 օգոստոսի 1913թ.

Հեռագիր
թիվ 588

Քարեւրսն ինձ ասաց, որ Հայաստանի բարեփոխումների հատուկ հանձնաժողովի յոթերորդ նիստի ժամանակ ավստր-հունգարական և գերմանական դատվիրակների հնչեցրած հայտարարությունը փոխանցվել է համադատախան դեսպաններին: Նա ասաց նաև, որ իրեն և իր գործընկերներին թվում է, որ Բարձր Դատոր չի առարկի ընդունել այդ դահանջները և դրան դեմ չի լինի նաև անգիտացի դատվիրակը:

Գարրնի

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., բորապանակ 161:

55

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Զուլիանոն՝
Կոստանդնուպոլիսում Իտալիայի դեսպան Գարրնիին
Հուն, 5 օգոստոսի 1913թ.

Հեռագիր
թիվ 5489


Փարիզի մեր արքայական դեսպանը հեռագրել է.

«Պարոն Պիֆոնի հետ Հայաստանի բարեփոխումների հատուկ հանձնաժողովի նիստում ավստր-հունգարական և գերմանական դատվիրակների արած հայտարարության մասին գրութելիս նրա տեղեկացրի, որ Ձեր Գերազանցության կարծիքով դրա առաջին, հինգերորդ և վեցերորդ կետերը բավական լուրջ երաշխիքներ կարող են ստեղծել, և կարելի է փորձնականորեն գործի դմել դրանք, նախքան Թուրքիայից ավելի արմատական բարեփոխումներ դահանջելը»:

Ինձ դատախանեց, որ ֆրանսիական կառավարությունը դեռևս հնության չի առել հարցը, և մի քանի օրից ինձ կտեղեկացնի իրենց կարծիքը»:

Սան Զուլիանոն

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., բորապանակ 161:



5 9

56

Իտալիայի արտաֆին գործերի նախարար Սան Ջովիանոն՝
Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարրոնիին
Հուն, 5 օգոստոսի 1913թ.

Հեռագիր

Քիվ 5490

Պետերուրի մեր արքայական դեսպանը հեռագրել է.

«Հայաստանի բարեփոխումների հարցի ուրաջ Գերմանիայի դեսպանը երեկ հանդիդել է այսեղի արզործնախարարին և նաև դաշյալ հավասիցրել, որ իր կառավարությունը ցանկանում է այս խնդրում համագործակցել Ռուսաստանի հետ, սակայն արդարացված չի համարում և, նոյնիսկ, վտանգավոր է համարում Ռուսաստանի կողմից առաջարկվող հայկական վիճակը միավորումը մեկ վաշշական միավորի մեջ։ Իր հերին Սազոնովը վսահեցրեց կոմս Պուրալեսին,³⁷ որ Ռուսաստան իր գործողություններում քանի ված նորագումներ չունի և, ինչդեռ Գերմանիան, շահագրգիռ է, որդեսզի Թուրքիան ամրապնդված լինի Անառողիայում։ Նա ավելացրեց նաև, որ բարեփոխումների իրենց ծրագիրը բաց է նոր առաջարկների և լրացումների համար, ինչդեռ նաև հնարավոր համարեց նախատեսված վաշշական մեկ միավորի բաժանումը երկու մասի։ Վեցում Սազոնովը դնեց, որ վերահսկիչները լինեն քրիստոնյա և նշանակվեն այն սկզբունքով, որը գործում է Լիքանանի կառավարչի նշանակելիս։

Պուրալեսին հարցրեցի, թե արդյո՞ք հնարավո՞ր է, որ Հայաստանի հարցում Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև առաջարկում դաշինք ստեղծվի, և նա դատախանեց, որ կողմերը դրա համար ունեն բավականին դրական դաշտաներ, սակայն սկզբունքային տարածականությունները ևս քիչ չեն։

Խնդրում եմ հաղորդել ինձ Ձեր կարծիք։

Սան Ջովիանո

ԻԱԳՆՊԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., բորապանակ 161:

57

Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարրոնին՝
Իտալիայի արտաֆին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Կոստանդնուպոլիս, 7 օգոստոսի 1913թ.

Հեռագիր

Քիվ 600

Պատասխանում եմ Ձեր քիվ 5490 հեռագրին։³⁸

Իմ բոլոր հաղորդագրություններում ես այն կարծիքն եմ եղել, որ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության դափողանման տեսանկ-

իտական դիվանագիտական վագերագրեր. 1913

յունից նորատակահարմար չէ Հայաստանի բարեփոխումներին տալ այնովիսի բնութագիր, որը կնմանվի իննավարության որևէ ձևի։ Քանզի փորձը ցույց է տալիս, որ Օսմանյան կայսրության համար նման կարգավիճակները վտանգավոր են։ Հասարակական անվտանգություն և արդարադատություն, ահա այն ամենը, ինչ Հայաստանին անհրաժեշտ է, և, իմ կարծիքով, թուրքական կառավարության կողմից վերջերս տրված կարգադրությունները, որոնք համարված են ավտո-հունգարական և գերմանական դասվիրակների հայտարարության սկզբունքներով, դրանց համար բավարար երաշխիք են հանդիսանում։

Գարրոնի

ԻԱԳՆՊԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., բորապանակ 161:

58

Իտալիայի արտաֆին գործերի նախարար Սան Ջովիանոն՝
Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարրոնիին
Հուն, 8 օգոստոսի 1913թ.

Հեռագիր

Քիվ 5577

Պետերուրի մեր արքայական դեսպանը հեռագրել է.

«Ինձ քվում ե, որ Ռուսական կառավարությունը մտադիր է Արքանադրությի հարցի մնարկման ժամանակ դնել նաև Հայկական հարցի լուծումը, բայց՝ առանց դրանի իրաւ կաղելու։ Այս առքիվ Սազոնովն ինձ ու Գերմանիայի դեսպանին բաժից ասաց, որ չնայած Ռուսաստանը կարող է զիջել և համաձայնվել վեց վիճակները երկու մասի բաժանելուն, սակայն երեք չի հրաժարվի այն սկզբունքից, ըստ որի դրանց վերահսկիչների նշանակման երաշխիքները դեմք է աղահովված լինեն Լիքանանի կառավարչի նշանակման համար հաստաված սկզբունքով։»

Սան Ջովիանո

ԻԱԳՆՊԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., բորապանակ 161:

59

Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարրոնին՝
Իտալիայի արտաֆին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Կոստանդնուպոլիս, 12 օգոստոսի 1913թ.

Հեռագիր

Քիվ 614

Թվում է թե հայերը, կասկածելով, որ մեծ տերությունների այս մնարկում ների արյունքում ծնվելիք բարեփոխումները կլիրառվեն գործնականում, կա-

ծում են, որ ավելի նորատակահարմար է իրենց համար համաձայնության գալ քուրսական կառավարության հետ և ընդունել նրանց կողմից առաջարկվող ծրագիրը, որը համարված է հասուկ հանձնաժողովի նիստի ժամանակ արված ավարտ-գերմանական դասվիրակների հնչեցրած հայտարարության դրույթներով: Նշանի, միզուցեն, կղահանջեն, որ Հայաստանը բաժանվի Երկու մասի, որտեղ, նոր հրահանգմեն իրականացնելիս, կլինի համագործակցություն Եվրոպայի հետ և կերպարավութեն հավասարության սկզբունքները:

Գարողի

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., բորապանակ 161:

60

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոն՝
Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարողիին
Հուն, 15 օգոստոսի 1913թ.

Հեռագիր

թիվ 5745

Պատասխանում եմ Ձեր թիվ 614 հեռագրին:³⁹

Հայերի նման դիրքուումը համահունչ է քեզ իրենց, քեզ Թուրքիայի և քեզ մեր հետարքություններին, ուստի Ձերդ Գերազանցությանը խնդրում եմ նորանկատուն աջակցել դրան:

Սան Ջովիանոն

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., բորապանակ 161:

61

Պետերուրում Իտալիայի դեսպանատան հանձնակատար Բորդոնարոն՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Պետերուր, 6 սեպտեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 545

Պարոն նախարար,

Գաղտնի կերպով տեղեկացա, որ ոռուական կառավարությունը Հայաստանի խնդրի առնչությամբ մտերի փոխանակություն է ունեցել գերմանական կառավարության հետ: Պարոն Ներառով,⁴⁰ այստեղի գերմանական դեսպանատան հանձնակատարն զոհունակություն է հայտնել, բեռլինում իրենց այդ հայլ դրականութեն ընդունելու համար:

Բորդոնար

ԻԱԳՆՊԴԱ, Տրագված դիվանագիտական վաստարքեր, հ. LXVI, թիվ 567:

62

Քեռլինում Իտալիայի դեսպան Բոլլասին՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Բեռլին, 8 սեպտեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 703

Այստեղի՝ Ռուսաստանի դեսպանատան հանձնակատարը նոր առաջարկներ է ներկայացրել Կոստանդնուպոլսում Հայաստանի բարեփոխումների համար անցկացվող բնակչությունների համար: Ինչու ինձ տեղեկացրեց դարոն Յագովը, խոսքն այն մասին է, որ այժմ ռուսական կողմը ցանկանում է Հայաստանից ձեռվորել ոչ թե մեկ վարչական կենտրոն, ինչու դա նախատեսված է Մանդելսոնի ծրագրում, այլ այն բաժանել Երկու նահանգների, որոնց սահմանները, սակայն, չեն համընկնի ներկայիս Վիլայեթների սահմաններին: Նախան դատավանելը, դարոն Յագովը ցանկություն է հայտնել առավել հստակ տեղեկություններ ստանալ Վանգենհայմից:

Բոլլասին

ԻԱԳՆՊԴԱ, Տրագված դիվանագիտական վաստարքեր, հ. LXVI, թիվ 568:

63

Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարողին՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Թերաքիա [Կոստանդնուպոլիս], 9 սեպտեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 689

Պարոն Վանգենհայմը հաստատեց, որ Հայկական հարցի առնչությամբ ռուսական կառավարությունն, իրոք, մտերի փոխանակման առաջարկություն է ուղարկել գերմանական կառավարությանը: Նա չի հավատում նակայն, որ ինչ որ դաշինք կատարելով այդ Երկու երկրների միջև, բանցի նույնիսկ այն դեմքում, եթե տերություններին կիաջողվի ընդհանուր համաձայնեցված մի ծրագիր կազմել, ուստի դժվար կլինի դա դարսարել բուրգական կառավարությանը, որը, չնայած տեղի տալով տերություններին, ընդունում է, որ բարեփոխումներ դեմք է անցկացնի, սակայն հոժարությամբ չի ընդունի վեց վիլայեթներին հատուկ կարգավիճակ տալու գաղափարը, որը կիանգեցնի մետուքան ներին վարչակազի վրա Եվրոպայի ազդեցության տարածմանը, ինչն էլ հավասար կլինի նրա ինքնավարության իրավունքների նվազեցմանը:

Գործնկերոջ խոսակցությունից հասկացա նաև, որ Գերմանիան չգանձեանում Ռուսաստանի հետ նման դաշինք կազմել, բանցի դա կնշանակի ճանաչել ռուսական ազդեցությունը Փոքր Ասիայում, որը ձեռնուու չէ, մինչև որ

համանման մի երաշխիք է չտրվի Գերմանիային: Ստացան նաև այն տպակրությունը, որ Գերմանիան, [այս հարցում] Ռուսաստանին չհակարգվելու համար, չի խոսափում բննակումներից, սակայն մտադիր է գործել այնողևս, որ ընդդմանան նոր դաշնակիցները և ոչ թե իմերը:

Այս օրերին ինձ մոտ եկավ Հայոց դատիարքարանի առաջնորդը և ասաց, որ հայ բնակչությունն անհամբերությամբ է սղասում խոսացված բարեփոխումներին: Նույն ուժությունը հրավիրեցի այն փասի վրա, որ բարեփոխումների բանակցային գործընթացը չունի ցանկալի ընթացք, քանի որ Ռուսաստանի հատուկ միջամտությունը իրարանցում ու սփորթություն է առաջացրել: Նույն ասացի, որ հայերի համար առավել նորագույն կարգավորության հետ, և այդ դեղում տեսություններն ավելի հաճախ կարող են աջակցել նրանց, բարեփոխումների և անհրաժեշտ հակողություն սահմանելու հարցում:

Ինձ թվաց, որ իմ մեկնաբանություններն ավելի բան համոզեցին [դատիարքարանի] առաջնորդին, սակայն այն տպակրությունը ստացա, որ նոր այս բայլը համաձայնեցված էր ռուսական կողմի հետ:

Պարունակած մեր գրուցիք ժամանակ դարձյալ դիմում էր, որ միայն անհաղող միջոցառումները կկանխեն սղասակելիք ծանր իրադարձությունները:

Գարունի

ԽԱԳԱՐԴԱ, Տղագրված դիվանագիտական փաստարքեր, հ. LXVI, թիվ 569:

64

Պետերություն Իտալիայի դեսպանատան հանձնակատար Բորդոնարոն՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Պետերություն, 12 սեպտեմբերի 1913թ.

Հետագիր

թիվ 560

Ներառվին հարցի, թե որքանո՞վ են իրականությանը համապատասխանում լուրերն այն մասին, որ Ռուսաստանը Հայկական հարցի առնչությամբ դիմել է Գերմանիային՝ նշենի փոխանակության համար: Նա դատախանեց, որ դրա դաշտան այն տարածայնություններն են, որ հատուկ հանձնաժողովում առաջ են գալիս ռուս և գերմանացի դատվիրակների միջև: Ռուսական կառավարության կարծիքով առավել նորագույն ներկայացնել Բեռլինին և, ձեռք բերելով համաձայնություն, այն ներկայացնել հատուկ հանձնաժողովի բննակմանը: Ռուսաստանը դիմել է Գերմանիային, քանի վերջին դատադառնում է Թուրքիայի շահերը, որից էլ բխում են բոլոր հիմնական դժվարությունները: Ներառվը վստահ է, որ մասնաւոր փոխանակության

ոռոսական առաջարկի արագ ընդունումը Գերմանիայի կողմից համաձայնության կիանգեցնի: Օմանրամասնելով բննարկումների ընթացքը, [նա] ասաց, որ հիմնական խոչընդուռ կարգված է Եվրոպական հակողության հարցի հետ: Հայաստանում վիճակը միշտ դայրունավանգ է, ինչդեռ ասաց Ներառվը, և հայերի առաջնորդները մշտադառնություն դիմում են Կոստանդնուպոլիսին և Պետերությունի խնդրելով անհաղող բարեփոխումներ իրականացնել:

Բորդոնար

ԽԱԳԱՐԴԱ, Քաղաքական տարբ 1891-1916թթ., բրաղդանակ 332:

65

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոն՝
Կոստանդնուպոլսում, Լոնդոնում, Փարիզում, Պետերությունում և
Վիեննայում Իտալիայի դեսպաններին

Հունիս, 15 սեպտեմբերի 1913թ.

Հետագիր

թիվ 6318

Այստեղի՝ Ֆրանսիայի դեսպանատան հանձնակատար ինձ տեղեկացրեց, որ ֆրանսիական կառավարությունը կրոջունի, եթե տերությունների միջև համաձայնություն ձեռք բերվի՝ ստղծելու այն երաշխիքները, որոնք ամրագրված են Հայաստանի բարեփոխումների համար կազմված ռուսական և թուրքական նախագծերում: Պարուն Բիլլին⁴¹ ավելացրեց, որ ֆրանսիական կառավարությունն այս հարցի, և, ընդհանրաբեր Կոստանդնուպոլիսի հատուկ հանձնաժողովի որդեգրած խաղականության մասին, ցանկանում է իմանալ իտալական կառավարության դիրքուումը:

Պատասխանեցի Պարուն Բիլլին, որ իտալական կառավարության կարծիքով Հայաստանում անցկացվելիք բարեփոխումները դեմք է հիմնված լինեն օսմանյան գործող օրենքների և դեսպաններին ներկայացված բարեփոխումների օսմանյան նախագծի վրա, որը դեմք է համարվի ռուսական նախագծի որոշ դրույթներով: Նրան համոզեցի, որ դեմք է գործել գգուությամբ և չըսարդել Հայաստանում արմատական այնպիսի բարեփոխումներ անցկացնել, որոնք Հայաստանին կտան առավել ընդգծված ինքնություն, քանզի այն կարող է վանագավոր լինել Փոքր Ասիայի ամբողջականության դակադառնան համար, որում այլ տերությունների հետ միասին, շահագրգության մասին և Ֆրանսիան և Իտալիան:

Սան Ջովիանո

ԽԱԳԱՐԴԱ, Քաղաքական տարբ 1891-1916թթ., բրաղդանակ 332:

66

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոն՝
Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարրոնիին
Հուն, 16 սեպտեմբերի 1913թ.

Հեռագիր
թիվ 6347

Բեռլինի մեր արքայական դեսպանատան հանձնակատարը հեռագրել է.

«Յագովն ինձ ասաց, որ գերմանական կառավարությունը, համաձայնության գալու մեծ ցանկությամբ, բնության է առել ոռուական առաջարկը, քանի Ռուսաստանը մշադիք ցանկանում է առաջ մղել Գերմանիային: Տարածայնությունները հիմնականում երկու կետի առնչությամբ են: Մեկը վերաբերում է Վերահսկչների նշանակմանը. ըստ ոռուական կողմի՝ դա դեմք է կատարի Եվրոպան, իսկ մենք կարծում ենք, որ նման հարցը, որում վերադարձումներով, դեմք է բողոքի Թուրքիային: Յագովը կարծում է, սակայն, որ այս հարցի ուրաց հնարավոր է համաձայնության գալ:

Ինչ վերաբերում է Երկրորդ խնդրին, աղա Յագովն անհնար է համարում ընդունել այն եղանակը, որով, ըստ ոռուական առաջարկի, Հայաստանը դեմք է բաժանվի Երկու մասի: Հայաստանը հորիզոնական կիսելու փոխարեն, որը ֆիշ թէ այս համընկնում է Երևայիս նահանգային վարչական բաժանման սահմաններին, Ռուսաստանը առաջարկում է այն բաժանել ուղղահայաց ձևով ստեղծելով Արևմտյան և Արևելյան Հայաստաններ: Ավելիաց երևում է, որ Ռուսաստանի նդատակների մեջ է մտնում այդ արևելյան հատվածը վաղ թէ ուսուական նահանգ դաձնելը:

Անմեն դեմքում, Գերմանիան չի ընդունի որևէ սարբերակ, որը դեմ կլինի Թուրքիայի շահերին:

Վերջում Յագովն ասաց, որ Կոստանդնուպոլսում ձևավորված հատուկ հանձնաժողովն արել է այն ամենը, ինչ կարող էր, և այժմ հերքը դեսպաններին է՝ միջոցներ գտնել համաձայնության գալու համար»:

Սան Ջովիանո

ԻԱԳՍՊԴԱ, Թուրքիայի դեսպանատում 1829-1937թթ., բրադանակ 161:

67

Բեռլինում Իտալիայի դեսպանատան հանձնակատար Ֆրանկլինը՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Բնոյին, 17 սեպտեմբերի 1913թ.

Հեռագիր
թիվ 716

Յագովը հավատացած է, որ Գերմանիան և Ռուսաստանը համաձայնության կզան բարեփոխումների հարցի ուրաց: Նրան թվում է, որ Ռուսաստանը

Իտալական դիվանագիտական վագերագրեր. 1913

համաձայն է իրաժարվել Հայաստան արևմտյան և արևելյան մասերի բաժանելու մասից և ընդունել է հորիզոնական բաժանումը, որն ավելի համահունչ է Թուրքիայի վարչական բաժանման հետ: Իր հերթին Գերմանիան կարող է ընդունել, որ Վերահսկչները նշանակվեն եւրոպյունների կողմից: Ամեն դեմքում Գերմանիան դեմ է, որ Թուրքիային ինչ որ բան դարձարվի, և ցանկանում է, որ եւրոպյունների նախագիծը լինի բորբական ծրագրերին և ցանկություններին համահունչ:

Յագովը գոհունակություն հայտնեց Ֆրանսիայի դեսպանատան հանձնակատարին Զեր սված դատախանի կաղակցությամբ և ասաց, որ լիովին կիսում է Զեր կարծիքը:

Ֆրանկլին

ԻԱԳՍՊԴԱ, Քաղաքական տարբ 1891-1916թթ., բրադանակ 332:

68

Պետերություն Իտալիայի դեսպանատան հանձնակատար Բորդոնարոն՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Պետերություն, 19 սեպտեմբերի 1913թ.

Հեռագիր
թիվ 564

Հնարավորություն ունեցած դարուն Ներառություն հետ գրութել Հայաստանի մասին: Նրան հարցի, թէ ի՞նչ կարծիք ունի ոռուական կառավարությունն այդտեղի [Պետերություն] Ֆրանսիայի դեսպանատան հանձնակատարին Զեր Գերազանցության սված դատախանին առթիվ: Նա ասաց, որ կայսերական կառավարությունը լիովին կիսում է Փոքր Ասիայի տարածքային ամբողջականության դահլիճանման իտալական կառավարության եւսակետը, և, առավել բան որևէ այլ եւրոպյուն, շահագրգրված է դրանով: Ինչ վերաբերում է դրան հասնելու եղանակին, այսեղ ոռուական կողմը դեմ է մեր մոտեցմանը և վսահ է, որ միայն արմատական բարեփոխումները կարող են խաղաղություն հաստաել Հայաստանում և դահլիճանել Փոքր Ասիայի ամբողջականությունը, մինչեւ թույլ բարեփոխումները կունենան ձևական բնույթ և իրականում չեն փոխի դեմքերի արդի վիճակը: Ներառություն կատար լինելով, որ Կոստանդնուպոլսի ոռուական և գերմանական դեսպանների բանակցությունները դրական արդյունք կունենան, ասաց, որ Հայաստանում վիճակն իրոք ծանր է, և վերջերեւ էլ խուռու անկարգություններ են ենի ունեցել Արարածի մոտակայքում:

Բորդոնար

ԻԱԳՍՊԴԱ, Տղագրված դիվանագիտական փաստաթուր, հ. LXVI, թիվ 570:

69

Քեռլինում Իտալիայի դեսպան Բոլլասին՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովանոյին
Քեռին, 27 սեպտեմբերի 1913թ.

Հետազոր
թիվ 727

Պարոն Յազդը հաստատեց այն տեղեկությունները, որ սվել է Ֆրանկլինին
Հայաստանի բարեփոխումների շուրջ ոռուական կողմի հետ ընթացող բանակ-
ցությունների վերաբերյալ:

Ոռուաստանը հաստատեց իրաժարվել է Հայաստանն արևմյան և արևել-
յան տօջանների բաժանելու ցանկությունից, Գերմանիան էլ, իր հերթին, որու
զիջումներ է կատարել իր սկզբանական առաջարկներից:

Այստիսով, Հայաստանի բարեփոխումների նախնական ծրագրի հաստա-
ման շուրջ Կոստանդնուպոլիսի երկու դեսպանների միջև համաձայնություն է
ձեռք բերվել, որի մասին նրանցից յուրաքանչյուր դաշտում կգրուի Մեծ
Վեզիրի հետ: Այս մասին գերմանական կառավարությունը Հռոմի իր դեսպա-
նատան միջոցով կտեղեկացնի մեր արքայական կառավարությանը:

Բոլլասի

ԽԱԳՆՊԴԱ, Տղագրված դիվանագիտական փաստաթրթ, հ. LXVI, թիվ 572:

70

Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպանատան հանձնակատար Մոչենիզոն՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովանոյին
Կոստանդնուպոլիս, 27 սեպտեմբերի 1913թ.

Հետազոր
թիվ 744

Պարոն Գուլկիչը⁴² Գիրսի անունից երեկ ինձ գաղտնաբար ծանոթացրեց
այն հույսագրին, որն անցած երկուամբի օրը դարձ Գիրսը ներկայացրել է
Մեծ Վեզիրին: Այս հույսագրի բովանդակությամբ մի նույն կողարատավի, որը
Բարձր Դուռը կողարկի դեսպանատերին՝ լրացնելու նախնական առաջարկ-
ները և կոնկրետացնելու այն բարեփոխումները, որ դեմք է իրականացվեն Հա-
յաստանում: Այս որոշումը կայացվել է ոռու և գերմանացի դեսպանների բա-
նակցությունների արդյունքում, և նոյատակ ունի ոչ միայն հասնել գործնական
արդյունքի, այլ նաև՝ չառաջացնել բուրժական կառավարության զայրույթը:
Այս այդ հույսագրի վեց կետերը.

1 Բարձր Դուռը որոշել է դիմել Տերություններին, որդեսզի նրանք երկու վե-
րահսկչներ առաջարկեն Արևելյան Անառողջայի երկու տօջանների համար:
Մեկը՝ Երգում, Տրամիզոն, Սպազ, մյուա՛ Վան, Բիթլիս, Խարբերդ և Դիարբե-

Իտալական դիվանագիտական վագերագրեր. 1913

իր: Այդ վերահսկչների հետ դայմանագիրը կը ներկի իինց տարի ժամկետով, որի
ավարտին Տերությունները կտեղեկացվեն:

2 Բարձր Դուռն այս երկու վերահսկչներին լիազորում է սովորանին ներ-
կայացնել բարձրագույն դաշտումներում և մագիստրաններում նշանակվող
անձանց: Մյուս բոլոր դաշտումներում վերահսկչները կարող են նշանակում-
ներ կատարել իննուրույն:

3 Տուրաֆանջոր տօջանում կլինի ընտրովի մեկ համագումար, որը բաղկա-
ցած կլինի հավասարաղեն՝ մուսուլմաններից և եթունյաններից:

4 Նման համամասնությունը կողականավի նաև այդ տօջանների մնացած
գործառույթներն իրականացնելիս:

5 Բարձր Դուռը մեծ Տերություններին հրավիրում է հսկելու բարեփոխումնե-
րի իրականացման ընթացքը՝ իրենց դեսպանների և տեղի հյուղատունների մի-
ջցոցով:

6 Բարձր Դուռը մատիր է Տերությունների առաջարկներով այլ բարեփոխում-
ներ [ևս] իրականացնել Արևելյան Անառողջայում:

Մեծ Վեզիրը որևէ առակություն չի արել հույսագրի առաջին չորս կետերի
առնչությամբ, սակայն դեմ է եղել, որ դրա հինգերորդ կետում հսկողության իրա-
վումն տվի նաև հյուղատուններին: Այս անհամաձայնության դաշտառով դա-
րտն Գիրսը նրան չի ընթեցել հույսագրի վեցերորդ կետը:

Պարոն Գուլկիչը վերջում ավելացրեց, որ դարձ Գիրսը ցանկանում է,
որդեսզի դեսպանները հավաքվեն, երբ Բարձր Դունից սաման այդ նուան, և
հոյս հյուսնեց, որ հետագա հավաքներին իտալական դաշտավակն այլևս նման
ընդդիմադիր կեցվածք չի որդեգրի ոռուական կողմի հանդետ:

Երեկ բավական երկար գրույց ունեցած փաստարան և դաշտամավոր Զոհրա-
մի⁴³ հետ, որին այս փուլում կարելի է հայերի առաջնորդ համարել: Ինձ ասաց,
որ ողջ հայ ժողովուրդը խորացես հիասքափած է այն հանգամանից, որ
Իտալիան Գերմանիայի հետ միասին անցած գարնանն այդքան ընդդիմադիր
կեցվածք է որդեգրել հայերի օրինական դահանցների նկատմամբ: Հոյս հյու-
սնեց, որ մեր մոնեցումներն այժմ դրականորեն փոխվել են և ինձ հասկացրեց, որ
եթե այդունք է, աղա հայկական ազդեցիկ ուժերն ամեն ինչ կանեն, որդեսզի
Իտալիան սննեսարդես մուտք գործի Փոքր Ասիա:

Սահմանափակվեցի այն դաշտախանով, որ այդ մասին Տերության կողահենը
Զերդ Գերազանցությանը: Ուստի Զերդ Գերազանցությանը խնդրում եմ հարց
առնչությամբ ինձ Տեղեկացնել Ձեր կածիկը:

Մոչենիզոն

ԽԱԳՆՊԴԱ, Տղագրված դիվանագիտական փաստաթրթ, հ. LXVI, թիվ 573:

71

Իւալիայի արտաքին գործերի նախարար Սան Չուլիանոն՝
Կուսանդմուղղուում Իւալիայի դեսպանատան հանձնակատար
Մոչենիգրին

Հուն, 29 սեպտեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 6615

Պատասխանում եմ Ձեր թիվ 744 հեռագրին:⁴⁴

Պարոն Գիրսի անունից Ձեզ տված ժեղեկավորյան առնչությամբ կարող եք դպրու Գովկակիշն հաղորդել, որ ուս ուրախ կլինեմ, եթե դեմքերն այնուս դասավորվեն, որ հնարավորություն ունենան Հայկական հարցի ուրշ համաձայնության գալ:

Կարող ենք նաև ավելի բարյացակամ դիրք գրավենմ նրանց նկատմամբ, ֆանգի Ռուսաստանի ներկայիս դիրքություն այլև չի վսանգում Թուրքիայի ասիական հատկածի ամբողջականությամբ: Ձեր գործընկերոց հետ սփումներում կարող եք ի նորաս հայ ժողովրդի ժեսակետներ հայսնել, բայց ուսադիր ենեք, որ դրան չանցնեն այն սահմանը, որը կատարի Թուրքիայի զայրույթը: Եթե նույնիսկ հայ ժողովուրդը կարող է այնուս անել, որ մենք ժետեսադես ներքափանցենք Փոքր Ասիա, միննույն է, մեզ համար ավելի կարևոր է Թուրքիայի հետ հարաբերությունների դադարանումը:

Մենք հսակ մշակել ենք մեր բարիդրացիական բաղաբականությունը Թուրքիայի նկատմամբ, և Հայկական հարցի առնչությամբ մեր դիրքությունը դայմանավորված է հենց այդ բաղաբականությունն ի ցույց դնելով: Այն ձեռքբերումները, որ ունեցան Արալիայի տրամադրություն, աղացուցում են մեր բաղաբականության արդյունավետությունը:

Սան Չուլիանոն

ԻԱԳՆՊԴԱ, Քաղաքական ցարք P 1891-1916թ., բրադանակ 332:

72

Կուսանդմուղղուում Իւալիայի դեսպանատան հանձնակատար Մոչենիգրուն՝
Իւալիայի արտաքին գործերի նախարար Սան Չուլիանոյին

Կուսանդմուղղու, 2 հոկտեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 765

Պարոն նախարար,

Գովկակիշն փոխանցեցի այն ամենը, ինչ կարգադրել էիք ինձ Ձեր թիվ 6615 հեռագրով:⁴⁵ Նա ուս զոհ էր Ձեր պատասխանից և ինձ խնդրեց Ձեզ փոխանցել իր ջերմ ողջույնները:

Վատահեցնում եմ Ձեր Գերազանցորյանը, որ Հայկական հարցի նմանական ժամանակ, իսկ դա տեղի կունենա մոտ օրեր, խստագույն կիեւսեմ հիշյալ հեռագրում Ձեր տված հրահանգներին:

Մոչենիգր

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թ., բրադանակ 161:

73

Իւալիայի արտաքին գործերի նախարար Սան Չուլիանոն՝
Կուսանդմուղղուում, Բեղինում և Վիեննայում Իւալիայի դեսպաններին
Հուն, 4 հոկտեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 6755

Այսեղի՝ Գերմանիայի դեսպանատան հանձնակատարն ինձ է ներկայացրել Կուսանդմուղղուի գերմանական և ռուսական դեսպանների մշակած հայկական բարեփոխումների նախագիծը: Այդ հանձնակատարն իր կառավարության անունից ինձ առաջարկեց դիմել բուրսական կառավարությանը, որդեսզի այն դիմի մեծ ժերույթուններին՝ նրանցից բարեփոխումների առաջարկ սանալու համար, ինչողեւ դա նախատեսված է Վանգենիայ-Գիրս նախագծի առաջին հոդվածով: Այդ հոդվածով Բարձր Դուռը դեմք է դիմի ժերույթուններին, բանցի նրան են առաջարկելու Արևելյան Անառողիայի երկու տջանների վերահսկչներին, որոնց հետ բուրսական կառավարությունը հինգ տարով դայմանագրեր է կնքելու և ժերույթուններից յուրաքանչյուրին ժերյալ է դահելու այդ դայմանագրերի ավարի մասին: Բարձր Դուռը դատախանելիս, ժերույթունները նրան առաջարկելու են այն բարեփոխումները, որոնք ներառված են այդ նախագծի մյուս հինգ հոդվածներում:

Նման մուտեցումը նորատակ ունի համոզել Բարձր Դուռը և ոչ թե ճնշում գործադրել նրա վրա: Գիրսն ընդունել է այս մուտեցումը Վանգենիայի հետ ունեցած բննարկման ժամանակ, վերջինս էլ համաձայնել է ընդունել նախագծի երրորդ հոդվածը՝ կաթենով, որ Բարձր Դուռը չի ընդունել այդ հոդվածը, որով նախատեսվում է, որ յուրաքանչյուր տջանում դեմք է լինի ընտրվի մեկ համագումար, որը բաղկացած կլինի հավասարադես նուսուլմաններից և բիստոնյաններից:

Այս հանձնակատարն ասաց, որ Վանգենիայի դատարակամություն է հայսնել սրա հիման վրա բանակցություններ սկսել Թուրքիայի հետ, եթե Իւալիան և Ավստր-Հունգարիան ևս ասն իրենց համաձայնությունը:

Կարծում եմ, նախադես դեմք է վստահ լինենք, որ Թուրքիան ինքնական կը նդունի ժերույթունների այդ առաջարկը և այն չի համարի վիրավորական, բանցի, կաթում եմ, Եոյակ դաշնամի շահերից է բխում այս դաիին Կուսանդմուղղուի կառավարությանը չվիրավորելը:

Բեռլինում Իտալիայի դեսպան Բոլլաշին՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Քենչին, 6 հոկտեմբերի 1913թ.
Հեռագիր
թիվ 752

Խնդես Ձեր Գերազանցությունը Հայաստանի բարեփոխումների մասին
ասել եր այդեղի [Հռոմում] Գերմանիայի դեսպանատան հանձնակատարին,
Յազովի հետ խոսակցության ժամանակ նետեցի, որ Ձեր Գերազանցությունը
նորատակահամար է համարում նախադես իմանալ Թուրքիայի վերաբեր-
մունքն այդ հարցի շուրջ: Յազովն անմիջապես կառչեց այս մտքից և փոխա-
դադարաց վսահություն հայտնեց, որ իր կառավարությունը երեք չի ցանկա-
նում զիալ այսպիսի բայլի, որը կվճախ Թուրքիային: Միևնույն ժամանակ նա
ավելացրեց, որ լավ կլինի, եթե Թուրքիային մեղմ կերպով համոզենի, որ նա
չմերժի արդյունավետ բարեփոխումների ծրագիրը:

Բոլլաշի

ԻԱԳՆՊԴԱ, Քաղաքական շարֆ P 1891-1916թթ., թրամանակ 332:

Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպանատան հանձնակատար Մոչենիզոն՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Թերաքիա [Կոստանդնուպոլիս], 6 հոկտեմբերի 1913թ.

Հեռագիր
թիվ 772

Իմ թիվ 744 հեռագրով⁴⁶ Ձեր Գերազանցությանն արդեն ներկայացրել
եմ այն իրավիճակն ու տամարդությունները, որ միտու են Հայկական հարցի
աղաքա հնարկման շուրջ: Այժմ դրանց ցանկանում են ավելացնել այն հո-
գումնալից վիճակը, որ ասրբեր աղբյուններից ինձ հասած տեղեկությունների
համաձայն միտու է հայերի տրանսում, և որը կարող է ցավալի իրադարձություն-
ների առիթ հանդիսանալ:

Հայերն անհամբեր են և արդեն հոգմել են բառասնամյա այս երկար սղա-
սումից, որի ընթացքում օսմանյան կառավարության և Եվրոպայի խոստու-
մներն ընդամենը մնացել են թղթի վրա: Ներկա հնարկումների և առկա բարե-
փոխումների ծրագրի անարդյունավետությունից խուսափելու համար հայերը
մտադիր են մի մեծ ալլագա մրություն իրակեցնելով, որ այն նոր ջարդերի
առիթ կիանդիսանա:

Այս միտքը նրանց չի վախեցնում և գերադասում են այդ տարեցակը, բան
իների ներկա վիճակի ձգձգումը, որը Հայոց դատիքաբարանի սվյալներով տա-
նում է ազգի դանդաղ, բայց հստակ ոչնչացմանը:

Սիազանգում եմ Ձեր Գերազանցությանը, որ այդ ալլագա մրության հե-
տևանեներն անկանխատեսելի կարող են լինել:

Ուստի կարծում եմ կարելի է այս չընդդիմանալ ոռուսական նախագծի այն
դրույթներին, որոնք են գտել ոռուս-գերմանական հուսագրում և որոնք դարձն
Գիրսը հույս ունի ներկայացնել դեսպաններին առաջիկա հավաքին:

Մոշենիզոն

ԻԱԳՆՊԴԱ, Քաղաքական շարֆ P 1891-1916թթ., թրամանակ 332:

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոն՝
Կոստանդնուպոլսում, Բեռլինում, Վիեննայում, Լոնդոնում և Պետերբու-
գում Իտալիայի դեսպաններին
Հռոմ, 6 հոկտեմբերի 1913թ.

Հեռագիր
թիվ 6821

Այսեղի՝ Գերմանիայի դեսպանատան հանձնակատար այսօր իր կառա-
վարության անումից ցանկացավ իմանալ, թե արդյո՞ք ողջունո՞ւմ են հայկա-
կան բարեփոխումների հարցի շուրջ բուրքական կառավարության հետ Գիրսի և
Վանգենինիայի ձեռնարկած գործողությունները: Բնականաբար նրան դատա-
խանեցի, որ ողջունում ենք:

Քացառադես Ձեզ տեղյակ դահելու համար ավելացնեմ, որ այս ուրախ եմ,
որ Իտալիան գրնե այս դահին այդ նախաձեռնությունը բողնում է ուրիշներին:

Սան Ջովիանոն

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., թրամանակ 161:

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոն՝
Կոստանդնուպոլսում, Բեռլինում, Վիեննայում, Լոնդոնում և Պետերբու-
գում Իտալիայի դեսպաններին
Հռոմ, 6 հոկտեմբերի 1913թ.

Հեռագիր
թիվ 6823

Այսեղի՝ Ռուսաստանի դեսպանն այսօր իմձ հետ գրուեց հայկական բարե-
փոխումների և դրանց նկանամբ մեր այսչափ սառը վերաբերնունիքի մասին
Նրան հստակ դատախանեցի, որ մենք չենք ցանկանում այնպիսի դիրք գրա-
վել, որը թեկուց փոքր ինչ ոչ բարեկամական կլինի Թուրքիայի նկատմամբ,
բանզի ցանկանում ենք նրա հետ ունենալ լավ հարաբերություններ: Միևնույն
ժամանակ նետեցի, որ հավաքացած եմ, որ ի նորաս հայերի մշակված բարեփո-
խումների կիրառումն անհրաժեշտ է և այն բխում է հենց Թուրքիայի

շահերից, բանզի մեծ տերությունները, այդ թվում Ռուսաստանը, անկեղծորեն ցանկանում են դահլիճանել Թուրքիայի ասխական մասի տարածքային ամրող-ջականությունը:

Նա ինձ ասաց, որ Վանգենիայմն Իտալիային է վերագրում մի կաժիք, ըստ որի եք Գերմանիան չափազանց ակտիվ դիրք գրավի ի նորաս բարեփոխումների, առաջ Իտալիան Բաձր Դուան մոտ նրան կմեղադիք, որոյն ոչ վստահելի գործնկերոց:

Պատասխանեցի, որ Իտալիայի կողմից նման կաժիքի արտահայտումը ճիշտ լինի Գերմանիայի նկատմամբ, ուստի այն չի համարատապիսանում իրականությանը և կարծում եմ, որ նա վաս է տեղեկացված, բանզի Վանգենիայմը չէ կարող այդտիսի միտք արտահայտած լինել:

Սամ Զուլիան

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատում 1829-1937թթ., թրապանակ 161:

78

Քեռլինում Իտալիայի դեսպան Բոլլասին՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սամ Զուլիանոյին
Բեռլին, 7 հոկտեմբերի 1913թ.

Հետազիր
թիվ 759

Հայկական բարեփոխումների ուրաց Գերմանիայի նման բաղաբանությունն իմ կաժիքով շատ համահունչ է այս կառավարության հին և հայսնի մասնակիություններին՝ նշանակած փորձել տարբեր շարժադրություններ գտնել, որոնցից մեկի մասին, ըստ Կորուպենսկու, խոսել է Վանգենիայմը: Վերջինիս մասին կարող եմ ասել, որ այս արիթրությունը են ունեցել լսելու նրան, որը միշտ անհավասարակշիռ խոսելու վարդետություն է ցուցաբերել, և նրա արտահայտած կաժիքները հաճախ հեռու են իր կառավարության գաղափարներից:

Բոլլասի

ԻԱԳՆՊԴԱ, Քաղաքական շարք P 1891-1916թթ., թրապանակ 332:

79

Քեռլինում Իտալիայի դեսպան Բոլլասին՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սամ Զուլիանոյին
Բեռլին, 8 հոկտեմբերի 1913թ.

Հետազիր
թիվ 765

Այստեղ [Քեռլինում] ևս հասել են Հայաստանում սղասպող հոգրումների մասին տեղեկություններ, որոնք կարող են ծանր հետևանքներ ունենալ: Ցագործ

ինձ արդեն ասել է, որ հարգելով համդերձ Թուրքիայի իրավունքները, դեմք է ազդի նրա վրա, որդեսզի վերջին չհակադրվի բարեփոխումների ծրագրին:

Ցիմերմանն⁴⁷ այսօր հաստաց, որ իր կառավարությունն ընթացի մեջ է դահում այն ծրագրերը, որի մասին ներկ է Կուսանդմուղուսի մեր դեսպանատան հանձնակատարը: Վանգենիայմը, որ սկզբնաղետ ցանկանում էր, որ բարեփոխումներն իրականացվեն միայն Գերմանիայի և իր դաշնակցների նախաձեռնությամբ, համոզվել է, որ հնարավոր չէ Հայկական հարցը բնարկել առանց Ռուսաստանի:

Ցիմերմանն ինձ վստահեցրեց, որ դեսպանների հավաքից առաջ, նախան Կուսանդմուղուսի իրենց ներկայացուցիչներին հրահանգներ տալը, դրանց մասին ինձ տեղյակ կողակի, բանզի կարող է գործել Իտալիայի հետ համաձայնեցված:

Բոլլասի

ԻԱԳՆՊԴԱ, Քաղաքական շարք P 1891-1916թթ., թրապանակ 332:

80

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սամ Զուլիանոն՝
Կուսանդմուղուսի Իտալիայի դեսպան Գարրնիին
Հռոմ, 8 հոկտեմբերի 1913թ.

Հետազիր
թիվ 6861

Պարոն Ավառնան ցանկացել է իմանալ Ավստր-Հունգարիայի կառավարության կաժիքը հայկական բարեփոխումների ռուս-գերմանական նախագծի վերաբերյալ: Պարոն Մայորն⁴⁸ դատապիսանել էր, որ ավստր-հունգարական կառավարությունը չի ընդլիմանում այդ նախագծին, բանզի վստահ է, որ բարեփոխումների այդ ծրագիրը ոչ մի կերպ չի վնասում Թուրքիայի շահերին:

Ես նույնութեա կիսում եմ Վիեննայի կառավարության կաժիքը:

Սամ Զուլիան

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատում 1829-1937թթ., թրապանակ 161:

81

Կուսանդմուղուսի Իտալիայի դեսպանատան հանձնակատար Մոշենիզոն
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սամ Զուլիանոյին
Կուսանդմուղուսի, 9 հոկտեմբերի 1913թ.

Հետազիր
թիվ 787

Գուկսիչը կտրականաղես մերժեց, որ Վանգենիայմն իր կամ Գիրսի հետ գրուցում արտահայտած լինի այն կաժիքը, որի մասին հաղորդում եֆ Զեր 6823

հեռագրում:⁴⁹ Նա ինձ ասաց, որ նման գմահատական նա տեսել է Բեռլինի արտգործնախարարությունում տեղի ունեցած մի բննարկման ժամանակ ուստի դեսպանի գեկուցում, որի կրկնօրինակն ուղարկվել է այսեղի Ռուսաստանի դեսպանատում:

Անդրադառնալով Վանգենհայմին վերագրվող՝ իր կառավարության անունից արած այդ արտահայտությանը, կարծում եմ, որ որևէ կերպ չարժե արձագանք է դրան: Այժմ փորձում եմ ամեն ինչ անել, որդեսզի չեզոքացնեմ նրա ընդդեմից կեցվածքը մեր նկատմամբ:

Մոչենիզոն

ԽԱԳՍԴԴԱ, Թուրքայի դեսպանատում 1829-1937թթ., բրադանակ 161:

82

Իսալիայի արտաֆին գործերի նախարար Սան Զուլիանոն՝
Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպան Գարրոնիին
Հոռո, 18 հոկտեմբերի 1913թ.

Հեռագիր
Քիվ 7203

Վիեննայի մեր արքայական դեսպանը հեռագրել է.

«Անցած չորեցաքի գրուց ունեցած տեղի կառավարության մի գործընկերոց հետ, որն ինձ ներկայացրեց Պալլավիշինից ստացված հեռագրի բովանդակությունը: Ըստ դրա՝ անցած ասիդների համեմատությամբ, Հայաստանում բռնությունները չեն ավելացել: Կոստանդնուպոլսի դեսպանների նոր հավաքի մասին ևս ստուգ առաջարկ չի եղել, սակայն, ոռու-գերմանական նախագիծը կփոխանցվի բոլորին՝ վերամշակելու և թերևնացնելու համար:

Կայսերական և արքայական կառավարությունները ստեղծված իրավիճակում նորատակահարմար են գտնում առայժմ ձեռնողական մնալ: Գերմանիայի և Ռուսաստանի դեսպանները, եթե համաձայնվեն, որ իրենց նախագծում փոփոխություններ մոցվեն, աղա այդ նոր սարեւակը չի հանդիրի Ավստր-Հունգարիայի առարկությանը»:

Կարծում եմ, որ մեզ համար էլ է նորատակահարմար առայժմ ձեռնողական մնալը:

Սան Զուլիանոն

ԽԱԳՍԴԴԱ, Թուրքայի դեսպանատում 1829-1937թթ., բրադանակ 161:

Իսալիայն դիվանագիտական վագերագրեր. 1913

83

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպանատան հանձնակատար Սոչենիգոն՝
Իսալիայի արտաֆին գործերի նախարար Սան Զուլիանոնին
Կոստանդնուպոլիս, 20 հոկտեմբերի 1913թ.

Հեռագիր
Քիվ 822

Որուսաստանի և Գերմանիայի բայլերը որևէ արդյունք չսկսեցին: Գիրսն ու Վանգենհայմը, չնայած նրան, որ ընդհանուր առմամբ նորացրել էին Բարձր Դուռը ներկայացվելիք իրենց առաջարկը, սակայն դեռևս նրա հետ չեն կարդացում համաձայնության գալ այն ձևաչափի ընթացք, որով Բարձր Դուռը դեմք է նախաձեռնություն ցուցաբերի: Չննարկումները գնում են երկու ուղղությամբ՝ կամ այդ առաջարկությունը կիսելի օսմանյան կառավարության կողմից, որը դաշտում կարգավորելու հիմքում կառավարության ներկայացնություններին, և որով նաև կառաջարկվի համարումներ կատարել բարեփոխումների իր նախնական տարերակմերում, կամ օսմանյան կառավարությունը կսղասի, որդեսզի իրենց մերժությունները դիվանագիտական մի հավաք անցկացնեն և միասին համանան մի նորա ուղարկեն Բարձր Դուռն:

Երբ սկսվեն թնարկումները մեծ դժվարություններն անխուսափելի կլինեն: Կարելի է հաստա ասել, որ մերժությունների կողմից մեծ սխալ էր բարեփոխումների համար ընդունել փոխզիջումային այն տարերակը, որ մասնաւում են հայերի մինիմում դահանջները միայն, և կարևորվում է Թուրքային չներացնելու գործունը: Նման մուտքումը խորը է այս կառավարության մասնաւում և սովորություններին, նրանի միևնույն է ցանկացած հարցի ընթացք ընկայաքար սակարկում են: Եղելով դրանից՝ միգուց ավելի ճիշտ կլիներ նրան ներկայացնել Մանդելսամի ծրագիրը և թնարկումների արդյունքում իշնեցնել և հասցնել ոռու-գերմանական ծրագրի ներկայիս վիճակին, որի ընդունումն արդեն ավելի հավանական կլիներ:

Մոչենիզոն

ԽԱԳՍԴԴԱ, Քաղաքական տարբ 1891-1916թթ., բրադանակ 332:

84

Իսալիայի արտաֆին գործերի նախարար Սան Զուլիանոն՝
Լոնդոնում, Փարիզում և Պետերբուրգում Իսալիայի դեսպաններին
Հոռո, 20 հոկտեմբերի 1913թ.

Հեռագիր
Քիվ 57706/360, 57707/960, 57708/218

Պարոն դեսպան,

Ինչդեռ և ստասվում էր, ոռուական կառավարության կողմից առաջարկած հայկական բարեփոխումների նախագիծը՝ «Մանդելսամի ծրագիր»,

33

բնելու համար Կոստանդնուպոլսում ձևավորված հատուկ հանձնաժողովը լուծարվեց, առանց գործնական արդյունքի հասնելու: Հենց սկզբից առաջ եկան երկու ընդդիմադիր կողմեր, որոնք այդդեմ էլ մինչև վերջ չկարողացան համաձայնության գալ: Եղակ համաձայնության սերությունների ներկայացուցիչները, ելնելով բարեկամական դիրքից, մնացին Ռուսաստանի հետ, իսկ Եղակ դաշինքի ներկայացուցիչներն իրենց հերթին համաձայնեցված կարգով շարունակ ուսական նախագծին հակադրում էին բուրգական նախագծը և 1895թ. այն հուսափիրը, որ մշակվել էր Կոստանդնուպոլսի դեսպանների և ընդունվել էր բուրգական կառավարության կողմից, չնայած այն հանգամանքին, որ այն չէր կիրառվել:

Այս հանձնաժողովի անհաջողության իրական դաշտառն արտահայտված է ինձ ներկայացված գերմանական հուսագրում, և, իմ կարծիքով ևս, դրա հիմնական դաշտառն այն է, որ Մանդելտսամի ծրագիրը նորատակ ուներ հայկական վիլայեթների միավորումով ստեղծել ինքնավար վարչական մեկ միավոր, որը, սակայն, վաճառական նախադեմ կարող էր հանդիսանալ Թուրքիայի ասիական մասի ամբողջականության դահլյանման համար, որով շահագրգռված ենք թե՝ մենք և թե՝ մյուս սերությունները: Այս մտավախությունն էր, թերևս, (քոյլոր սերությունների, այդ թվում Ֆրանսիայի և Անգլիայի կառավարությունների՝ չնայած, վերջիններս արտառու կողմ էին Մանդելտսամի ծրագիր), այն ծանրակշիռ դաշտառը որդեսափի [նրանք] արտահայտեին այն կարծիքը, որ ուսական նախագծը չէր կարող իրագործվել առանց մեծ դժվարությունների և վաճառքի, որ առաջ կգային Բարձր Դուռ հակազդեցության արդյունքում: Այս մտավախությունից ելնելով, ֆրանսիական կառավարությունը նախաձեռնություն ցուցաբերեց: Օգոստոսի 16-ին նրանց դեսպանատան հանձնակատարն ինձ սեղեկացրեց, որ իր կառավարությունը ցանկանում է, որդեսափի համաձայնություն ձեռքբառի սերությունների միջև՝ առահովելու համար այն երաշխինները, որ նեված են թե՝ ուսական և թե՝ բուրգական նախագծերում, և խնդրում էր, որ հարցի առնչությամբ նրան հայտնեն Նորին Գերազանցության կառավարության կարծիքը: Այդքամ հնարավորություն ունեցան նրան հայտնելու իմ այն համոզմունքը, որ ավելի նորատակահարմար է գործել չափազանց զգուշությամբ և խոհեմությամբ, և նախան ուսական նախագծի արմատական բարեփոխումնեն ընդունելու, դես է հաւաքի առնել դրան իրագործման այն անքավարագությունը, որ նախատեսում է բուրգական ծրագիրը: Ուստի արմատական բարեփոխումների ուստափույթ ընդունումը կարող է մեծապես վաճանգել Թուրքիայի ասիական մասի ամբողջականությանը, որի դահլյանման շահագրգռված է Իտալիան, ինչդեռ և՝ Ֆրանսիան:

Կոստանդնուպոլսի հանձնաժողովի անհաջողությունից և ուսական նախագծի լրելայն մերժությունից հետո, Ռուսաստանի և Գերմանիայի դեսպանների, ինչդեռ նաև՝ Բարձր Դուռ միջև մի նոր ծրագիր մշակելու համար սկսվեցին

նոր բանակցություններ, հաւաքի առնելով այն բոլոր առարկությունները, որ լսվել էին հանձնաժողովի նիստերի ժամանակ: Այդ բանակցությունների արդյունքում ծնվեց մի հուսագիր, որը կից ներկայացնում եմ Ձեր ուսադրությանը:⁵⁰ Այն սեղմեմբերի 27-ին ինձ ինձ ներկայացրեց այստեղի Գերմանիայի դեսպանատան հանձնակատարը: Նոյն բովանդակությամբ հաղորդագրություն էր ուղարկվել նաև Վիեննայի կառավարությանը, որով գերմանական կառավարությունը, ելնելով դաշնակից դարտավորություններից, հայցում էր լիազորություն՝ Կոստանդնուպոլսի իր ներկայացուցչն հանձնարարելու, որ այս հարցի ուրաց բանակցություններ սկսի օսմանյան կառավարության հետ, եթե, իհարկե, Եղակ դաշինքի կողմերը համաձայն են:

Այդ նախագծինը, ինչդեռ ինձ ներկայացրեց գերմանական հանձնակատարը, Վանգենհայմի և Գիրսի միջև երկպնդմանի զիջումների արդյունք է: Ըստ այդմ, Վանգենհայմն ընդունել է նախագծի երրորդ հոդվածը՝ իմանալով, որ այն կմերժվի Բարձր Դուռ կողմից: Ըստ դրա՝ երկու ուղաններից յուրաքանչյուրում կլինի ընտրվի մեկ համագումար, որը բաղկացած կլինի հավասարադեմ մուսուլմաններից և քրիստոնյաններից: Իր հերթին, Գիրսը հրաժարվել է հայկական ինքնավար մեկ վարչական միավոր ստեղծելու գաղափարից, որը դես է ունենար քրիստոնյա կառավարիչ, և համաձայնվել է երկու ուղանների գաղափարին, որոնց վերահսկիչները դես է նշանակվեն սուլթանի կողմից: Մյուս զիջումը, որ կատարել է Ռուսաստանը, վերաբերում է բարեփոխումները ներկայացնելու ձևաչափին: Ըստ այդմ, Թուրքիային խորհուրդ է տվում դիմել սերություններին՝ բարեփոխումներ առաջարկելու համար, սա ամփոփված է առաջին հոդվածում, որից հետո, որդես ուսասան, սերությունները հատուկ նույնու կառաջարկեն մյուս հինգ հոդվածները: Բանակցությունները Բարձր Դուռ հետ դես է դաշտառի ու դահլյանման համոզելու գաղափարը և ոչ թե ձևելու:

Գիրս-Վանգենհայմ նախագիծն, այսդիմուվ, հրաժարվում է Ռուսաստանի նախակին արմատական փոփոխությունների առաջարկից և համալրումներով ու փոփոխություններով, ամփոփում է Եղակ դաշինքի, այդ թվում Նորին Գերազանցության կառավարության տեսակետները:

Այս նոր նախագծի մասին իմ կարծիքը հայտնեցի գերմանական հանձնակատարին և միաժամանակ այն ուղարկեցի Բեռլինի և Վիեննայի կառավարություններին: Ասացի, որ նախան Թուրքիային դիմելը նորատակահարմար է վասահ լինել, որ նա հոժար կերպով կընդունի սերությունների առաջարկը, որ դեսափի խոսափեն նրան վիրավորելուց, նանգի այն ձեռնուու չէ Եղակ դաշինքի սերություններին՝ ընդհանրադես և Խալիխային՝ մասնավորացես:

Մեր դեսպաններ Բոլլասին և Ավառնան ինձ հեռագրեցին և հայտնեցին, որ իմ այս մուտքում լիովին կիսում են գերմանական և ավստր-հունգարական կառավարությունները: Յագովն ավելացրել էր, որ հաւաքի առնելով Թուրքիայի ավանդական մուտքումները, նրա հետ դես է կիրառեն «բաղր համոզելու»

հաղաքանություն, բանզի հակառակ դարագայում օսմանյան կառավարությունը կը լուրջիմանա ընդունել բարեփոխումների ցանկացած խոհեմ նախագիծ, որն է Ռուսաստանին լավ հնարավորություն կտա նորից խիս կեցվածք ընդունել՝ մասնանշելով Հայաստանում օրեցօր վարչարացող իրավիճակը: Ուստի՝ Կուսանդնությունի գերմանական դեսպանը ոռու դեսպանի հետ առավել շահավետ համագործակցելու կարգադրություններ կտանա՝ իրաժառվելով մենակ գործելու մտադրությունից: Այդ կարգադրությունների մասին ինձ կտեղեկացվի:

Այս չափազանց կարևոր հարցի հետագա զարգացումների մասին Ձեզ տեղյակ կրահենք:

Սան Զովիանո

ԻԱԳՆՊԱ, Տղագրված դիվանագիտական փաստարդեր, հ. LXVI, թիվ 579:

85

Կուսանդնություն Իտալիայի դեսպանատան հանձնակատար Մոչենիգոն՝ Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Զովիանոյին
Կուսանդնություն, 21 հոկտեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 829

Պարոն Վանգենհայմը, որ երեկ բավականին երկար գրուց էր ունեցել Մեծ Ազգի հետ, ինձ ասաց, որ բուրքական կառավարությունը, գտնվելով Արդիանադրության գրավման և սկսված բուրք-հունական բանակցությունների ազդեցության տակ, մտայիր է անտարելության մասնել հայկական բարեփոխումներին առնչվող մեծ տերությունների խորհուրդները: Վանգենհայմը նրան ասել է, որ ոռու և գերմանացի դեսպանները եկել են փոխհամաձայնության՝ հաշվի առնելով Թուրքիայի բոլոր առաջնորդությունները: Բացի այդ, վերջին եղանում գգում եմ, որ ոռու դեսպանը մի ժամանակ բուլացել է հայերի ծանր վիճակի մասին իր դիտակումները և, բնականաբար, այդ հանգամանքը կարելի է առնել ընթացող ոռու-բուրքական բանակցություններին, որոնք չափազանց սահուն են ընթանում:

Մոչենիգոն

ԻԱԳՆՊԱ, Տղագրված դիվանագիտական փաստարդեր, հ. LXVI, թիվ 580:

86

Պետերություն Իտալիայի դեսպանատան հանձնակատար Բուրգոնարոն՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Զովիանոյին
Պետերություն, 22 հոկտեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 1624/517

Պարոն նախարար

«Վեչերնեյե վրեմյա» թերթի մի հոդվածի համաձայն՝ հայկական վեց վիլայեթների բարեփոխումների հարցը բնարկվել է Ֆրանսիայի և Ռուսաստանի արտաքին գործերի նախարարների հանդիդման ժամանակ, որը տեղի է ունեցել վերջերս Սազոնովի՝ Փարիզ կատարած այցելության ժամանակ: Այդ բնարկումների արդյունքում նշանակվել է ոռու-ֆրանսիական մի նախագիծ, որին կմիանան նաև Անգլիան: Այդ նախագիծը հիմնականում ներառում է 1895թ. երրորդ առաջնորդությունը կողմից Թուրքիային առաջարկված ծագիրը, որով Հայաստանում անցկացվելիք բարեփոխումները դեմք է կատարվեն միջազգային հսկողությամբ: Նոյն թերություն նշվում է, որ Բեռլին կատարվելիք այցի ժամանակ Սազոնովը կցանա, որ Գերմանիան ևս ընդունի այդ նախագիծը:

Բուրգոնար

ԻԱԳՆՊԱ, Տղագրված դիվանագիտական փաստարդեր, հ. LXVI, թիվ 581:

87

Կուսանդնություն Իտալիայի դեսպանատան հանձնակատար Մոչենիգոն՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Զովիանոյին
Կուսանդնություն, 27 հոկտեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 849

Պարոն Վանգենհայմն ինձ ներկայացրեց այն հայտարարությունը, որ Բարձր Դուռը հղել է նրան և դարձն Գիրսին, որդես դատասխան այն հոււագի, որ ներկայացվել էր իրեն: Այդ հայտարարության մեջ չի խոսվում նշված այն հինգ հոդվածների մասին: Թուրքական կառավարությունը սահմանափակվում է հայցներով, որ տաճարված է բարեփոխումներ անցկացնել և վսակեցնում է տերություններին, որ հաւաքի կառնվեն նրանց խորհուրդները: Վանգենհայմն ասաց, որ օսմանյան կառավարությանն այլ դատասխան տալ ստիտելու հնարավորություն չեւ տեսնում: Թուրքական կառավարությունն, անունու, օգսվու է այն տարածայնություններից, որ վերջին եղանում առկա են տերությունների միջև [այդ] հարցի առնչությամբ, դրան ավելացավ նաև Արդիանադրության գրականությունը կողմից, որն ավելի վսահություն հաղորդեց վերջինիս:

Մոչենիգոն

ԻԱԳՆՊԱ, Տղագրված դիվանագիտական փաստարդեր, հ. LXVI, թիվ 583:

88

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպանատան հանձնակատար Մոչենիզոն՝
Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Զովիանոյին
Կոստանդնուպոլիս, 30 հոկտեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 854

Այսօրվա մամուկն ընդհանուր առմամբ վաս է արձագանքել դարսն Սազոն-
վի հայտարարություններին, դրանք զմահատելով ոչ ժամանակին, բանզի հնչել
են ռուս-բռուժական բանակցությունների ավարտի նախօրյակին, որոնք կարող
էին Ռուսաստանի համար մեծ զիջումներ առահովել և, նույնիսկ, լավացնել
երկու երկրների միջև հարաբերությունները: Բոլոր թերերն անդրադարձել են
Բարձր Դուռը՝ ռուս-գերմանական հույսագրին սված դաշտասխանին: Գումար են,
որ չնայած Թուրքիան կանցկացնի բարեփոխումներ, և, միգուցե, այդ աշխա-
սաններին կմերգրավի նաև Եվրոպացի մասնագետներին, բայց երեք չի հան-
դուրի արտերկի միջամտությունը, բանզի բավական փորձ ունի հասկանալու,
թե այդ միջամտությունն ինչ է նեանակում:

Պարսկ Գիրս չի դաշտասկում հարցն այսուհետեւ, իսկ հայկական ց-
ջանակներն էլ սկսում են ադասամբությունները: Առաջին ցավոս ընդհարումն
արդեն սեղի է ունեցել Արա Բագարում, ուր կան զոհեր և վիրավորներ: Հավա-
սարիմ մնալով Ձեր Գերազանցության կարգադրություններին՝ հարցի առնչու-
թյամբ չեմ խոսում Մեծ Վեզիրի հետ և չեմ խոսի, մինչև Վանգենհայմն ինձ
չառաջարկի այդ անել: Ավստրիայի իմ գործընկերն ասաց, որ ինքն էլ ունի նույն
կարգադրությունը:

ԽԱԳՍԴՐԱ, Տղագրված դիվանագիտական փաստաթուրեր, հ. LXVI, թիվ 584:

89

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպանատան հանձնակատար Մոչենիզոն՝
Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Զովիանոյին
Կոստանդնուպոլիս, 30 հոկտեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 857

Վասահելի աղբյուրներից ինձ ետեկացրին, որ Թալեաք բեյը երեկ չէ անց-
յալ օրը Ֆինանսների նախարարության ֆինանսական հանձնաժողովից հա-
ջորդ չորսամյակի համար անսղասելիորեն դահանջել է 180 հազար լիր,
որդեսզի հայկական վիլայեթներում վերականգնի ժամանելիքան: Գումարը
նորան տրամադրվել է, և, նույնիսկ, նման ծախսը տեղ է գտնել նաև հաջորդ տարվա
բյուջեում:

Ի տական դիվանագիտական վագերագրեր. 1913

Ներին գործերի նախարարի այս բայլի նոյատակն է՝ կարողանալ աղա-
ցուցել Տերություններին, որ ասիական ցաջանների բարեփոխումներն արդեն
սկսված են, և որ Տերությունների միջամտության կարիքն այլևս չկա:

Մոչենիզոն

ԽԱԳՍԴՐԱ, Տղագրված դիվանագիտական փաստաթուրեր, հ. LXVI, թիվ 584:

90

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպանատան հանձնակատար Մոչենիզոն՝
Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Զովիանոյին
Կոստանդնուպոլիս, 2 նոյեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 861

Գիրսը վսահաբար ասաց, որ Ռուսաստանը մտադիր չէ բոյլ տալ, որ հայ-
կական բարեփոխումների հարցը փակվի, ուստի դաշտասկում է մինչև վերջ
Բարձր Դուռը ներկայացնելի բարեփոխումների ծրագիրը: Նա կրկնեց, որ Տերու-
թյունները ռուսական այս նախաձեռնության մեջ չենք և տեսնեն Թուրքիայի
ասիական մասի ամբողջականության խարարման վաճանգ, բանզի, ի տարբե-
րություն այլ Տերությունների, Ռուսաստանն այդ տարածներում դեռևս չի ձևա-
գործել այնպիսի տակեր, որոնք նորան ներխուժելու հնարավորություն տան: Եթե
Ռուսաստանը դիմում է բարեփոխումներ անցկացնելու դաշտանով, աղա դա
նոր համար է, որ ցանկանում է, որդեսզի այդտեղ չխարսի հանրային կար-
գուկանոնը և եթե ցանկանում է, որդեսզի բարեփոխումներն անցնեն ներդարա-
կան հսկողությամբ, աղա վստահ է, որ միայն այդ ճանադարիկ դրանք արդ-
յունավետ կերպով կիրագործվեն: Ավելացրեց, որ օսմանյան կառավարության
կողմից հայկական ցաջաններում ժամանակերիայի վերականգնումը նորատա-
կահարմար չի համարում, բանզի հայերին անհրաժեշտ է բնականոն վաշշարա-
գություն, այլ ոչ թե՝ բնաջնջում:

Եգրափակելով հույս հայտնեց, որ Տերությունները դեմք է հավատան ռու-
սական կառավարության անկեղծությանը. նա չի ցանկանում, որ հայերի նոր
խմբաքանակ մնի ռուսական սահման, բանզի այրտեղ հայերը մեծ թիվ են
կազմում, չի ցանկանում ընդայնել սահմանները, բանզի դրանք առանց այդ
էլ անսահման են, այլ ցանկանում է, որ իր սահմանների մոտ խաղաղություն
լինի: Եթե Օսմանյան կայսրության նախատեսման հարցը բարձրացվի, ասաց
Գիրսը, աղա ոչ թե՝ Հայաստան կզմանք, այլ՝ ուղիղ Կոստանդնուպոլիսի:

Մոչենիզոն

ԽԱԳՍԴՐԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թ., բորագիանակ 161:

91

Իտալիայի արտաֆին գործերի նախարար Սան Ջովիանոն՝
Պետրուրգում Իտալիայի դեսպանատան հանձնակատար Բորդոնարոյին
Հռոմ, 6 նոյեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 60570/233

Պարոն հանձնակատար,

Պատիվ ունեմ տեղեկացնել, որ սացել եմ հոկտեմբերի 22-ի Զեր թիվ 517 հեռագիրը:⁵¹ Այն տեղեկությունները, որ հաղորդում եմ, հղում կատարելով «Վեչենեյե վրեմյա» թերքին, անուու, կարևոր նշանակություն ունեն, սակայն դրանք բովանդակային առումով չեն համադատասախանում Կոստանդնուպոլիսի մեր արքայական դեսպանատնից ինձ հասած տեղեկություններին:

Այդ տեղեկությունները չեն համընկնում «Վեչենեյե վրեմյա» թերքի տեղեկություններին: Տրամաբանական չեն, որ Ռուսաստանը, հայկական բարեփոխումների հարցում համաձայնության գալով Գերմանիայի հետ և ներկայացնելով մի ծրագիր, միաժամանակ, նոյն հարցի առնչությամբ փորձի առանձին դայմանավորվածություն ձեռք բերել Ֆրանսիայի հետ: Բացի այդ, Բարձր Դաշնակություն առավել դրական ելք կարահովեն այն դեմքում, երբ դրանք ներկայացնի ռուս-գերմանական կողմը՝ աղահովելով բոլոր մեծ տերությունների մասնակցությունը դրանց, բան՝ ռուս-ֆրանսիականը, որն, ընդամենը, Եոյակ համաձայնության երկների տրամակում է ամփոփվում: Ուստի իմ ունեմ կարծելու, որ «Վեչենեյե վրեմյայի» նորությունները զերծ են իմքից: Հայսնի է, որ ռուս-ֆրանսիական բանակցություններում բննարկվել են Հայաստանին առնչվող հարցեր, բայց ոչ՝ բարեփոխումների հարցը, որն արդեն համաձայնեցված է ռուս-գերմանական հույսագրով:

Սան Ջովիանո

ԻԱԳՆՊԴԱ, Տղագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ. LXVI, թիվ 586:

92

Իտալիայի արտաֆին գործերի նախարար Սան Ջովիանոն՝
Կոստանդնուպոլիսում Իտալիայի դեսպան Գարրոնին
Հռոմ, 10 նոյեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 7600

Բերինի մեր արքայական դեսպանատան հանձնակատարը հեռագրել է.
«Քիմերան ինձ ասաց, որ Գերմանիան և դժողով է Թուրքիայի դատասահնից և մտադիր է շարունակել հարցի բննարկումը: Նա մտադիր է Ռուսաստանի հետ դարձյալ համաձայնեցված գործել, որդեսզի վերջինս միայնակ չդիմի Թուրքիային:»

Իտալիան դիվանագիտական վակերագրեր, 1913

Ավելացրեց, որ Կանգենիային կարգադրված է բանակցությունների ընթացքի մասին տեղյակ դահել Կոստանդնուպոլիսի մեր դեսպանատանը»:

Սան Ջովիանո

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատն 1829-1937թթ., բորբագանակ 161:

93

Պետրուրգում Իտալիայի դեսպանատան հանձնակատար Բորդոնարոն՝
Իտալիայի արտաֆին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Թիւրքուգ, 12 նոյեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 1790/974

Պարոն նախարար,

Անդրադառնալով Զեր թիվ 6057/233 հեռագրին,⁵² հայտնում եմ Զեր Գերազանցությանը, որ «Վեչենեյե վրեմյա» թերքի տեղեկությունները ուստիշական բանակցությունների ընթացքում հայկական բարեփոխումների հարցը բննարկելու առումով ինձ ևս անհիմն են թվում:

Մի քանի օր առաջ հանդիդեցի դարուն Ներառվին և հայկական բարեփոխումների առնչությամբ նա դնդեց, որ բննարկումներն ընթանում են բացառադես ռուս-գերմանական հույսագրի հիման վրա, որին մյուս տերությունները սկզել են իրենց համաձայնությունը:

Բորդոնար

ԻԱԳՆՊԴԱ, Քաղաքական տարբ 1891-1916թթ., բորբագանակ 332:

94

Տրամիզոնում Իտալիայի գլխավոր հյուտատոս Գորդիմին՝
Իտալիայի արտաֆին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Տրամիզոն, 17 նոյեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 1357/139

Պարոն նախարար,

Պատիվ ունեմ Զեր Գերազանցությանը տեղեկացնելու, որ երև քուսական «Գուլ Զեմալ» տղենավով Կոստանդնուպոլիս ուղևորվեց Ամենայն Հայոց Կաքողիկոսը, որին ճանադարձ դեցին զինվորական հանդեսով՝ հայկական համայնքի, հայկական դրդոցների աշակերտների ու հոգ բազմության ներկայությամբ:

Այլ հյուտատոսների և բարձրասիձան դաւոնյաների հետ միասին, ևս ևս նաև բարձրացած՝ ողջունելու Նորին Օծությանը. նա չափազանց ույլած էր Արարողությանը մասնակցում էին նաև հունական դատիարքը, բողոքական միսիոներները և այս մուտքամաններ:

Արդեն բավական երկար ժամանակ այստեղի հայ առաքելականների և հայ կաթոլիկների միջև առկա էին խորը տարածայնություններ: Հայկական երկու եկեղեցները մշտապես կը տարածում ու սղառնում էին միմյանց, թե կփանդեն ու կփակեն մյուսի դրոցները:

Վեհափառք ջանի ջիւնայեց՝ լուծելու այս խնդիրները, և տարածայնությունները հայ առաքելական ու կաթոլիկ եկեղեցների միջև վերջնականացեն վերացն: Այս ամենն, անուու, չի կարելի վերագրել [միայն] նրան, սակայն տեղի ունեցան հենց նրա ներկայության դայմաններում որդես արդյունք իր սված խասների:

Վեհափառք տեղի հարուս հայերից նաև հոկայական նվիրատվություններ սացավ: Ինձ ասաց, որ գումարը հասնում է երեք հազար թուրքական լիրի, այսինքն՝ մոտ 70 հազար ֆրանկի, որոնցով նա կգնի Մայր Տաճարը և կամրադնի առաքելական համայնքին դատկանող այլ հաստատությունները:

Մրանք են տղական բնույթի վերջին նորությունները, որ մեծ վսահություն և հոյսեր են ներենչել հայ բնակչությանը: Ինչ վերաբերում է Վեհափառք այն մտադրություններին, որ Բարձր Դուռ հետ հանդիդման ժամանակ կկարողանա ինչ որ կոնկրետ արդյունքի հասնել հայկական բարեփոխումների և հայերի ու քրիստոնեական միջազգային հաստատման հարցերում, առանց արդյունքի վերաբերյալ իմ կանխատեսումները դրական չեն: Չաս կցանկանայի, որ Բարձր Դուռը բարի կամք դրսութեա և, իրոք, լուծում տար այն հարցերին, որոնց դրական լուծմանը հայերն ավելի բան կասկածում են: Մյուս կողմից՝ տաս կցանկանայի, որ ամենօրյա դժվարությունների հաղթահարման ու դայքարի գործում իր վսեմառու գրասենյակի գործունեությամբ՝ Վեհափառք կարողանար այնոյի սի նրություն, դիվանագիտական այնոյի հմտություն և համբերություն դրսութեա, որ բոլոր նրանք, ովքեր նրա այս կարճ այցելության ժամանակ էփիվեցին նրա հետ, սխալ դրու գային իրենց անարդար կանխատեսումներում, որոնցով Վեհափառքին գուշակում էին կարճ դատասնավարում և Օսմանյան կայսրության հետ հարաբերությունների վատացում:

Գորդինի

ԻԱԳՆՊԴԱ, Զաղաբական ցարք P 1891-1916թթ., բորադանակ 332:

95

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպանատան հանձնակատար Մոչենիզոն՝ Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Զուլիանոյին
Կոստանդնուպոլիս, 23 նոյեմբերի 1913թ.

Հեռագիր

Թիվ 909

Գիրսի անումից Գուլկիշը խնդրելով, որ այս հաղորդագրությունը գաղտնի դահկի, ինձ ասաց, որ երեկ Գիրսի կողմից Բարձր Դուռը ներկայացված բա-

թվորիսումների հուսագիր իիմնված է եղել արդեն հայսնի վեց կետերի և նախորդ չորեցարքի՝ Գիրսի ու Մեծ Վեզիրի միջև համաձայնեցված նախազօդի վրա: Մեծ Վեզիրը Գիրսին խնդրել էր բողնել այդ փաստաթուրը, որոնսագի այն բննարկվի նախարարների խորհրդում, իսկ դատասխանը խոսացել է տալ վաղը: Գուլկիշն ինձ խոսացավ ենցակ դահել իրադարձություններին: Ծներժոցի այս առաջարկը, բանզի Վանգենհայմը, չնայած սացված կարգադրություններին, որի մասին խոսում եք Ձեր թիվ 7600 հեռագրում,⁵³ խոսափում է թենայի ուուց մեզ հետ բննարկումներից:

Այս նոր հուսագրի իիմնական էությունն այն է, որ բոլոր այն լիազորությունները, որ Բարձր Դուռը ցանկանում էր տալ գլխավոր վերահսկչն, տվելու և խորհրդականներիմ՝ այդդիտով աղահովելով մեծ ենությունների վերահսկողությունը իրականացվող բարեփոխումների վրա:

Մոշենիզոն

ԻԱԳՆՊԴԱ, Զաղաբական ցարք P 1891-1916թթ., բորադանակ 332:

96

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպանատան հանձնակատար Մոչենիզոն՝ Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Զուլիանոյին
Կոստանդնուպոլիս, 24 նոյեմբերի 1913թ.

Հեռագիր

Թիվ 910

Շաբաթ օրը Գիրսի կողմից Մեծ Վեզիրին ներկայացված հուսագիրը, որն այսօր հավանության կարժանանա Վանգենհայմի կողմից, բաղկացած է այն 16 կետերից, որոնք Բարձր Դուռը դատասակամություն է հայսներ իրագործել: Հիմնական գիշումները, որ կատարել է Բարձր Դուռը, վերաբերում է Գիրսի այն իիմնական դիմանքը, որի համաձայն ենությունները մասնակցելու էին օսարեկյա խորհրդականների նեանակմանը՝ նրանց տալով գլխավոր վերահսկչների նկատմամբ վերադարձ դիրք: Մյուս գիշումները վերաբերում են հայոց լեզվի գործածությանը, համիլին խմբերի ցըանը և այլն:

Վանգենհայմը, որի հետ վերջադաս կարողաց խոսել հայկական բարեփոխումների մասին, ինձ ասաց, որ իրեն թվում է, թե Բարձր Դուռն այնքան է դեմ չէ այս նոր հուսագրին, ինչը, սակայն, դաժան դիմադրության է արժանացել կոմիտեում,⁵⁴ որը ոչ մի կերպ չէր ցանկանում հանդուժել եվրոպական ցանկացած վերահսկողություն:

Ինձ թվում է, որ կոմիտեն բավական հուսախարված է այս նոր առաջարկից, բանզի այն արվեց այն ժամանակ, երբ նրանց թվում էր, որ մտել են խաղաղ փուլ:

Մոշենիզոն

ԻԱԳՆՊԴԱ, Զաղաբական ցարք P 1891-1916թթ., բորադանակ 332:

97

Կուսանդնությունում Իտալիայի դեսպանատան հանձնակատար Մոչենիզոն՝ Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Կուսանդնություն, 24 նոյեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 913

Հայկական հարցն արդեն որոշ ժամանակ դարձյալ գտնվում է օրակարգում:
Ստենում են խորհրդարանական ընտրությունները, և նախադատաւասական
աշխատանքներն արդեն սկսված են:

Հայերի դատիարքը նամակ է հղել տեղի արդարադատության նախարար դա-
տու Թագարիին, որով նրանից երաշխիքներ է դահանջում, որդեսզի խորհրդա-
րանում հայերը հաճարատասխան թվով դատապահվուներ ունենալուց քաջի,
ունենան նաև հոգևոր ներկայացուցիչ:

Մոչենիզոն

ԻԱԳՆՊԴԱ, Թուրիայի դեսպանատում 1829-1937թթ., բրադանակ 161:

98

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոն՝
Սեծ տերություններում հավատամագրված Իտալիայի դեսպաններին
<ոռու, 26 նոյեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 7904

Թուրիայի՝ այստեղի դեսպանն ինձ ներկայացրեց մի հուսագիր, որն
առնչվում է Կայսրությունում իրականացվելիք բարեփոխումներին:

Դուք, անունու, տեղյակ եք դրա բովանդակությանը: Ուստի խնդրում եմ տեղի
արտաքին գործերի նախարարություններից, որոնք կարծում եմ նույնութեասցել
են այդ հաղորդագրությունը, ճշտեք նրանց կարծիքը: Նրանց կարող եք ասել, որ
օսմանյան նախագծում տեղ են գտել դրույթներ, որոնք արժեքավոր են և արժանի
են հաւաքի առնվելու:

Սան Ջովիանո

ԻԱԳՆՊԴԱ, Թուրիայի դեսպանատում 1829-1937թթ., բրադանակ 161:

99

Կուսանդնությունում Իտալիայի դեսպանատան հանձնակատար Մոչենիզոն՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Կուսանդնություն, 28 նոյեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 921

Պարոն Գիրսն ինձ առաջարկում է միանալ այստեղ հավատարմագրված
դեսպանների հավաքին, որոնք երկուարքի օրը խորհուրդ են սալու Սեծ Վեզի-
րին՝ ընդունել հուսագիրը:

Խնդրում եմ Ձեր Գերազանցությանը, այդ հարցի առնչությամբ ինձ հա-
ղորդել Ձեր կազմադրությունները: Ամեն դեղուում հավատարիմ կմնամ նախկի-
նում Ձեր կողմից ինձ տրված կազմադրություններին Թուրիայի հետ հմարավո-
րինս բարեկամական կեցվածք ընդունելու մասին: Տեղեկացնում եմ Ձեզ, որ
հակառակ Վանգենիայի հավասարացմանը, Սեծ Վեզիրն երեկ բավական
կոչ դիրք է գրավել Եվրոպական վերահսկողության վերաբերյալ, հայտարե-
լով. «Սենի ցանկանում ենք ինքնուրույն դեկավարել մեր նահանգները, բանզի
որևէ հանձնակատարից ավելի լավ գիտեմ այնտեղի դժվարություններն ու կա-
րիքները», փաստուն այս կերպ ակնարկելով Մանդելսամին:

Մոչենիզոն

ԻԱԳՆՊԴԱ, Տղագրված դիվանագիտական փաստարդեր, հ. LXVI, թիվ 591:

100

Վիեննայում Իտալիայի դեսպան Ավառնան՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Վիեննա, 28 նոյեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 1747

Բարոն Սաֆիոնի հետ, այդտեղի՝ Թուրիայի դեսպանի կողմից Ձեր
Գերազանցությանը ներկայացրած հուսագրի մասին խոսելիս, խնդրեցի ինձ
տեղեկացնել իր կառավարության դիրքուրում մասին:

Ասաց, որ դարձն Բերթոլդը Հիլմի փառաջին, որը նրան է ներկայացրել
նոյն բովանդակությամբ հաղորդագրությունը, տեղեկացրել է, որ հավատում է
այն տեսակետները, որ տեղ են գտել Օսմանյան կայսրությունում անցկացվելու
բարեփոխումների հուսագրում, սակայն մինչև դատասախանելը կուգենար իմա-
նալ մյուս տերությունների կարծիքը: Բարոն Սաֆիոն ավելացրեց, որ Բերթոլդը
կարծիքով ուեսէ սղասել Գերմանիայի դատասախանին, որն ամենից շատ է
տահագրգոված այս հարցում:

Ավառնան

ԻԱԳՆՊԴԱ, Տղագրված դիվանագիտական փաստարդեր, հ. LXVI, թիվ 590:

101

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոն՝
Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպանատան հանձնակատար
Մոշենիգոյին
Հռոմ, 30 նոյեմբերի 1913թ.
Հեռագիր
թիվ 7946

Ի դատախան իմ 7904 հեռագրին⁵⁵ Փարիզի մեր արքայական դեսպանը
հեռագրել է.

«Այստեղ՝ արտաքին գործերի նախարարը դեռ չի սացել բարեփոխումների
առնչությամբ օսմանյան հույսագիրը: Մարգերիեին⁵⁶ հարցի, թե ինչ ընդունե-
լություն կգտնի այն ֆրամսիական կառավարության մոտ: Պատասխանեց, որ
կիսում է Ձեր Գերազանցության այն կարծիքը, որ դրանում կան տեսակետեր,
որոնք արժեքավոր են և հաւաք առնվելու արժանի, սակայն նեց, որ ֆրանսի-
ական կառավարությունն այն չի ընդունի, եթե եվրոպացի խորհրդականներին
չորսի այնորին լիազորություններ, որոնցով նրան կկարողանան իրազորել
բարեփոխումները: Այստեղ՝ արտգործնախարարության վրա բացասական ազ-
դեցություն է քողել Զավիլ⁵⁷ բեյի Բենջինում սկած հարցագրույցը, որը սոլագ-
վել է «Եխոն դե Պաղի»-ի երեկով համարում:

Մարգերիեն խոսացավ ենյակ տահել ինձ իր կառավարության կարծիքի
մասին, եթե այդ հույսագիրը ներկայացվի»:

Սան Ջովիանո

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատան 1829-1937թ., բրապահնակ 161:

102

Թեսերություն Իտալիայի դեսպանատան հանձնակատար Բորբոնարոն՝
Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջովիանոյին
Պետրոնիր, 1 դեկտեմբերի 1913թ.

Հեռագիր
թիվ 654

Տուրքան փառան Սագրմանին է ներկայացրել Օսմանյան կայսրությունում
անցկացվելիք բարեփոխումների այն հույսագիրը, որը Նաքի բեյը ներկայացրել
է Ձեր ուսադրությանը: Սագրմանը Տուրքան փառային դատախանել էր, որ օս-
